3. Վերոնշյալ երկու կետերով ներկայացված հայտարարագիրը որոշակի փարածքների համար կարող է եր կանչվել գլխավոր քարտուղարությանն ուղղված ծանուցման համաձայն: Դա կսկսի գործել գլխավոր քարտուղարության կողմից նման ծանուցում ստանալու օրվանից 6 ամիս անց, հաջորդող ամսվա առաջին օրը:

ՃՃ¹ Ի³ Ի 32
Ի » Խ ձ³ ՆձԱԿ » Խ

1. Ստորագրման կամ վավերացման, ընդունման եւ հաստատման փաստաթղթերի ներկայացման ժամանակ.

ա) ցանկացած պետություն կարող է հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում սահմանափակելու իր փարածքում այնպիսի ծրագրերի հաղորդումը, որոնք պարունակում են ոգելից խմիչքների այնպիսի գովազդ, որն արգելված է սույն կոնվենցիայի 15 հոդվածի 2-րդ կետով;

բ) Միացյալ Թագավորությունը կարող է հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում չիրականացնելու 15 հոդվածի առաջին կետում նշված պարավորությունները՝ սիգարի եւ ծխախոտի գովազդի վերաբերյալ, որը ցամաքային միջոցներով հեռարձակվում է անկախ հեռարձակման ծառայության կողմից իր փարածքում:

Ոչ մի այլ վերապահում չպետք է կատարվի:

2. Նախորդ կետում նշված վերապահումները ենթակա չեն առարկության:

3. Համաձայնագիր կնքող յուրաքանչյուր պետություն, որը վերապահում է կատարել 1-ին կետի պայմաններով, կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն շրջանառությունից հանել այն՝ գլխավոր քարտուղարությանն ուղղված ծանուցման միջոցով: Դա ուժի մեջ կմտնի գլխավոր քարտուղարության կողմից նման ծանուցում ստանալու օրվանից:

4. Այն կողմը, որը սույն կոնվենցիայի որևէ կետի վերաբերյալ վերապահումներ է կատարել, չի կարող պահանջել այդ կետի կիրառումը մեկ այլ կողմից. եթե վերապահումը մասնակի կամ պայմանական է, նա կարող է պահանջել փոխալ կետի կիրառումը այն դեպքում, երբ ինքն այն ընդունել է:

ՃՃ¹ Ի³ Ի 33
ձ » ՕՁ Ե ՆՅ Ս³ Խ Խ » ԵԱ

1. Ցանկացած կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարել սույն կոնվենցիան՝ գլխավոր քարտուղարությանն ուղղված ծանուցման միջոցով:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ կմտնի գլխավոր քարտուղարությանն նման ծանուցում ստանալուց 6 ամիս անց, հաջորդող ամսվա առաջին օրը:

ՃՃ¹ Ի³ Ի 34
Ի³ ԿձԹձԿ

ԵՖ գլխավոր քարտուղարությունը ԵՖ անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիային անդամակցած այլ պետություններին, Եվրոպական տնտեսական համայնքին եւ սույն կոնվենցիային անդամակցած կամ անդամակցելու հրավիրված յուրաքանչյուր պետության պետք է ծանուցի.

- ա)** ցանկացած ստորագրության մասին,
- բ)** վավերացման, ընդունման, հաստատման և մուտքի ցանկացած փաստաթուղթ սրանալու մասին,
- գ)** սույն կոնվենցիայի՝ 29 , 30, և 31 հոդվածների համաձայն ուժի մեջ մտնելու ցանկացած օրվա մասին,
- դ)** 22 հոդվածի կետերի համաձայն արված ցանկացած զեկուցման մասին,
- ե)** սույն կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ գործողության, հայտարարության, ծանուցման մասին:

Ի վկայություն վերոհիշյալի, կողմերը ստորագրեցին սույն կոնվենցիան:

Կատարվել է 1989թ. մայիսի 5-ին, Սյրասբուրգում, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը կհանձնվի ԵՄ արխիվ: ԵՄ գլխավոր քարտուղարությունը հաստատված պարձեները կհանձնի ԵՄ բոլոր անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիային անդամակցած պետություններին, Եվրոպական տնտեսական համայնքին և սույն կոնվենցիային միանալու հրավիրված բոլոր պետություններին:

ԹՅ Ի » Ե՜ 3 Ի

Դադարան

- 1.** Դադարան դիմելու մասին պետք է ծանուցվի ԵՄ գլխավոր քարտուղարությանը: Այն պետք է պարունակի վեճի մյուս կողմի անունը և խնդրո առարկան: Գլխավոր քարտուղարությունն այդ մասին պետք է տեղյակ պահի կոնվենցիայի բոլոր կողմերին:
- 2.** Եթե վիճող կողմերից մեկը Եվրոպական տնտեսական համայնքի անդամ պետություն է, դադարանի դիմումը պետք է հանձնվի և անդամ պետությանը, և համայնքին, որոնք միասին մեկ ամսվա ընթացքում պետք է ծանուցեն գլխավոր քարտուղարությանը, որ անդամ պետությունը կամ համայնքը, կամ երկուսը միասին հանդես են գալիս որպես բանավիճող կողմ: Նշված ժամկետում նման ծանուցման բացակայության դեպքում անդամ պետությունը և համայնքը կհամարվեն վեճի մեկ և նույն կողմը՝ դադարավարությունը առաջնորդող օրենքների կիրառման նպատակներով: Նույնը՝ այն դեպքերում, երբ անդամ պետությունը և համայնքը միասին հանդես են գալիս որպես վիճող կողմ: Մույն կետով նախատեսված դեպքերում 4-րդ կետում նշված մեկ ամիսը կարող է հասցվել 2-ի:

- 3.** Դադարանը պետք է կազմված լինի 3 անդամից. վեճի յուրաքանչյուր կողմ կնշանակի մեկ դադարավոր: Նշանակված 2 դադարավորները համարել կընտրեն երրորդին, որն էլ կլինի դադարանի նախագահը: Վերջինս չպետք է պարկանի վիճող կողմերից որևէ մեկի ազգությանը, նրա բնակության վայրը չպետք է լինի կողմերից մեկի փարածքում, նա չպետք է աշխատի նրանցից որևէ մեկի համար:

4. Եթե կողմերից որևէ մեկը ԵՄ գլխավոր քարտուղարությանը դիմում ներկայացնելուց հետո 1 ամսվա ընթացքում չի նշանակել իր դադարավորին, վերջինս կնշանակվի մյուս կողմի դիմումի համաձայն, Մարդու իրավունքների Եվրոպական դադարանի նախագահի կողմից, հաջորդ մեկ ամսվա ընթացքում: Եթե դադարանի նախագահը չի կարող գործել կամ վիճող կողմերից մեկի ազգակիցն է, նշանակումը պետք է կատարի դադարանի նախագահի տեղակալը կամ դադարանի ամենաբարեց դադարավորը, եթե վիճող կողմերից մեկի ազգակիցը չէ: Նույն ընթացակարգը պետք է կիրառվի, եթե 2-րդ դադարավորի նշանակումից մեկ ամիս անց դադարանի նախագահը դեռ նշանակված չէ:

5. 3 և 4 կետերի դրույթները գործում են ցանկացած թափուր պաշտոնի համար:

6. Համաձայնագրով նույն շահերը հետապնդող 2 կամ ավելի կողմերը միասին են նշանակում դադարավորին:

7. Վիճող կողմերը և մշտական հանձնաժողովը դադարանին ապահովում են դադարավարության արդյունավետության համար անհրաժեշտ բոլոր միջոցներով:

8. Դադարանը պետք է մշակի ընթացակարգի իր կանոնները: Նրա որոշումները պետք է ընդունվեն անդամների ձայների մեծամասնությամբ: Վճիռները վերջնական են և պարտադիր:

9. Դադարանի վճիռը պետք է ծանուցվի գլխավոր քարտուղարությանը, որն էլ կտեղեկացնի սույն կոնվենցիայի բոլոր կողմերին:

10. Վիճող յուրաքանչյուր կողմ պետք է հոգա իր նշանակած դադարավորի ծախսերը: Մյուս դադարավորի, ինչպես նաև դադարավարության հետ կապված այլ ծախսերը պետք է հավասարաչափ կիսվեն կողմերի միջև:

° í ñáá³ Ɔ Ę áñÁáóñ
Û³ Ę³ ñ ñ»ñĊ Ĩ áÛĊ Ĩ»
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ³ Ý ĀĊ Ĩ R(89)7

Û³ Ę³ ñ ñ»ñĊ Ĩ áÛĊ Ĩ»Ċóª³ Ý¹³ Ûª Ĩ»í áóÁñóÝ»ñĊÝ

**Բռնության, ագրեսիայի և պոռնոգրաֆիկ
համապետար ունեցող տեսագրությունների
տարածման վերաբերյալ**

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝
փոխնախարարների 425-րդ նիստում, 1989թ. ապրիլի 22-ին)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

նկարի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելն է,

նկարի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, մասնավորապես՝ դրա 8 և 10 հոդվածները,

հիշարակելով իր հավատարմությունը արտահայտվելու ազատության և գաղափարների ու տեղեկատվության ազատ տարածման սկզբունքներին, որ տեղ են գրել, մասնավորապես, իր ապրիլի 28-ի Նոչակագրում,

հիշարակելով թիվ 5 որոշումը՝ բռնություն պատկերող տեսագրությունների մասին, որն ընդունվել է եվրոպական երկրների մշակույթի նախարարների 4-րդ կոնֆերանսում (Բեռլին, մայիսի 23-25, 1984թ.),

հաշվի առնելով Խորհրդարանական վեհաժողովի թիվ 963 հանձնարարականը (1983թ.)՝ բռնության և դաժանության դեմ պայքարելու մշակութային և կրթական միջոցների մասին,

հաշվի առնելով Խորհրդարանական վեհաժողովի թիվ 963 հանձնարարականը (1983թ.)՝ Եվրոպայի խորհրդի այն աշխատանքների մասին, որոնք վերաբերում են մամուլի ոլորտին, ուր հատկապես կարևորվում է ծրագրերի որակի և բռնություն ու դաժանություն պատկերող տեսագրությունների տարածման կարգավորումը, քանի որ դա կարող է կործանարար ազդեցություն ունենալ երեխաների և դեռահասների վրա,

նկարի ունենալով նաև Եվրոպայի երիտասարդության հարցերով զբաղվող նախարարների 1 կոնֆերանսը (Մյունխեն, դեկտեմբերի 17-

19, 1985թ.), Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1067 հանձնարարականը (1987թ.)՝ Եվրոպայում հեռահաղորդակցման մշակութային ոլորտի մասին, ինչպես նաև Եվրոպայի արդարադատության նախարարների 16-րդ կոնֆերանսի (Լիսաբոն, հունիսի 21-22, 1988թ.) որոշումներն ու հետևությունները,

գիտակցելով բռնություն, դաժանություն ու պոռնոգրաֆիա պատկերող, ինչպես նաև թմրամոլություն խրախուսող տեսագրությունների տարածումը վերահսկող միջոցների կարևորությունը, հատկապես՝ անչափահասներին պաշտպանելու տեսակետից,

1. հարկ է համարում, որ անդամ պետությունների կառավարությունները.

ա) ստորև ամրագրված սկզբունքներն իրականացնելու կոնկրետ միջոցներ ձեռնարկեն,

բ) բոլոր շահագրգիռ անձանց ապահովեն համապատասխան միջոցներով, ինչպես նաև համապատասխան մարմինների կողմից նշված սկզբունքների իմացությամբ,

գ) պարբերաբար գնահատեն այս սկզբունքների կիրառման արդյունավետությունը իրենց ներքին օրինական կարգերով:

2. Հանձնարարում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարությանը՝ սույն հանձնարարականը փոխանցել բոլոր այն երկրների կառավարություններին, որոնք, Եվրոպայի խորհրդի անդամ չլինելով, անդամակցել են Եվրոպական մշակութային կոնվենցիային.

Ā Ċ Ĩ R(89)7 Ñ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ³ ÝĊ Ñ³ í »Ē³ Ĩ

ēĬ ¼´ àóÛøÛ° ð

Բնութագիր

Ներույթ սկզբունքները նպատակաուղղված են աջակցելու անդամ պետություններին՝ ուժեղացնելու պայքարը բռնություն, դաժանություն ու պոռնոգրաֆիա պատկերող, ինչպես նաև թմրամոլությունը խրախուսող տեսագրությունների դեմ, հատկապես՝ անչափահասներին պաշտպանելու համար: Դրանք պետք է դիտվեն որպես ԵԽ-ի այլ օրինական միջոցների լրացում:

Այս սկզբունքները հիմնականում վերաբերում են տեսագրությունների տարածմանը:

1. Տեսագրությունների փարածման համակարգեր

Անդամ պետությունները պետք է.

- խրախուսեն ինքնակարգավորման համակարգերի ստեղծումը, կամ ստեղծեն դասակարգող և վերահսկիչ համակարգեր՝ շահագրգիռ մասնագիտական սեկտորների կամ իշխանությունների միջոցով, կամ

- ձեռավորեն համակարգեր, որոնք ինքնակարգավորման համակարգերը կմիավորեն դասակարգող և վերահսկիչ կամ ազգային օրենսդրության հետ համապետելի ցանկացած այլ համակարգերի հետ:

Ամեն դեպքում, անդամ պետությունները պահպանում են քրեական օրենսդրությունից և կանխարգելիչ ֆինանսական միջոցներից օգտվելու ազատ ընտրության իրավունքը:

2. Ինքնակարգավորման համակարգեր

Անդամ պետությունները պետք է բոլոր համապատասխան միջոցներով խրախուսեն տեսագրություն փարածող կազմակերպություններին՝ մշակելու մասնագիտական վարքագծի կանոնագիր և կարգավորման կամավոր համակարգեր, որոնք կրնդգրկեն ստորև նշված 3-րդ և 4-րդ սկզբունքների հիման վրա կազմված դասակարգման և վերահսկման մեխանիզմները:

3. Դասակարգման և վերահսկման մեխանիզմներ

3.1. Անդամ պետությունները պետք է խրախուսեն ինքնակարգավորման մեջ ընդգրկված մասնագիտական շրջանակների կամ իշխանությունների կողմից տեսագրությունների դասակարգման և վերահսկման համակարգերի ստեղծումը: Նման միջոցառումները կարող են կիրառվել կամ մինչև տեսագրությունների փարածումը կամ դրանից հետո:

3.2. Որպեսզի իշխանությունները սկսեն դասակարգման և վերահսկման համակարգերի օգտագործումը, երկրների օրենսդրական մարմինները պետք է ստանձնեն համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորումը:

3.3. Դասակարգման և վերահսկման համակարգերը պետք է ընդգրկեն կամ ազատ փարածման արտոնագրում, կամ սահմանափակ փարածման թույլտվություն, որով կամրագրվեն նման տեսագրությունների փարածման պայմանները, կամ, հնարավոր է, դրանց փարածման բացարձակ արգելում:

3.4. Դասակարգման և վերահսկման համակարգերում պետք է ամրագրվի այն փարիքը, որին հասնելուն պես տեսագրության ձեռքբերումը թույլատրվում է: Այդ փարիքը պետք է համապատասխանի ազգային չափանիշներին:

3.5. Բոլոր դասակարգված տեսագրությունները պետք է գրանցվեն, իսկ դրանց տուփերի վրա պետք է մշտապես և պարզորոշ նշվի նրանց դասակարգային պատկանելությունը, ինչպես նաև այն, թե որ դիտորդի համար են դրանք նախատեսված: Եթե տուփը մի քանի կարգի տեսագրություններ է պարունակում, ապա անդամ պետությունները պետք է կիրառեն խստագույն դասակարգում:

3.6. Այն դեպքերում, երբ տեսագրությունների դասակարգման ընթացակարգը փարբերվում է գեղարվեստական կինոնկարների դասակարգման ընթացակարգից, անդամ պետությունները պետք է հիմնվեն երկու ընթացակարգերի համար ընդհանուր հետևողականության վրա՝ հաշվի առնելով դրանց փարբերությունները:

3.7. Դասակարգման և վերահսկման համակարգերում ուշադրություն պետք է դարձվի ընթացակարգի պարզեցմանը կամ դրա առհասարակ վերացմանը այն դեպքերում, երբ նշված նյութերն ունեն ուսուցողական կամ կրոնական բնույթ: Այս արտոնությունները չպետք է վերաբերեն այն նյութերին, որոնց բովանդակությունը նման նպատակներով արդարացված չէ:

3.8. Տեսագրությունների փարածման վերահսկումը պետք է վերաբերի ինչպես սեփական արտադրության, այնպես էլ ներկրված նյութերին:

3.9. Տեսագրությունների դասակարգման կանոնների խախտման համար պատասխանատու պաշտոնյաների պատասխանարվության չափի որոշումը պետք է կատարվի անդամ պետությունների կողմից մշակված մեխանիզմներով:

4. Տարածման սահմանափակում

4.1. Սահմանափակ փարածման արտոնագրերը (տես՝ կետ 3.3), մասնավորապես, կարող են՝

- արգելել վաճառքը կամ վաճառքի առաջարկը անչափահասներին,
- արգելել վաճառքը կամ վաճառքի առաջարկը այն տեղերում, որոնք հասկացված չեն չափահասների համար,
- արգելել գովազդը,
- արգելել փոստային պատվերների միջոցով իրականացվող վաճառքը:

4.2 Յուրաքանչյուր տեսագրության՝ այս կամ այն դասին պատկանելությունը պետք է նշվի նյութի փաթեթի վրա, ինչպես նաև տեսակարար լոգոներում, գովազդներում, և այլն:

5. Միջոցառումներ՝ դասակարգման և վերահսկման համակարգերը խախտելու դեպքում

5.1. Անդամ պետությունները, որոնք օգտագործում են դասակարգման և վերահսկման համակարգեր, պետք է կիրառեն համապատասխան պատժամիջոցներ՝ այդ կանոնակարգերը խախտելու դեպքում, օրինակ, մեծ փոյժեր, ազատազրկում, տնտեսաբանությունների և դրանց ապօրինի փարածումից գոյացած գումարների բռնագրավում:

5.2. Այն անդամ պետություններում, որտեղ կիրառվում է արտոնագրման սկզբունքը, իշխանությունները պետք է նախատեսեն դրա դադարեցման մեխանիզմը:

6. Քրեական օրենսգրքի կիրառումը

Դասակարգման և վերահսկման համակարգեր օգտագործելու հետ մեկտեղ, դրան գուցահեռ, դրանից անկախ կամ որպես այլընտրանք, անդամ պետությունները պետք է հաշվի առնեն՝ արդյունավետ է, արդյոք, իրենց քրեական օրենսգրքերը բռնություն, պտոնոգրաֆիա և թմրամոլություն խրախուսող տնտեսաբանությունների դեմ պայքարելու գործում:

7. Կանխարգելիչ ֆինանսական միջոցներ

Անդամ պետությունները պետք է դիտարկեն նշված կարգի տնտեսաբանությունների արտադրությունը և փարածումը կանխարգելելու համար ֆինանսական միջոցների կիրառման հնարավորությունը:

° í ñãå ³ Ů Ę áñÑáõñ
Û³ Ę ³ ñ ñ»ñĴ Ĩ áÛĴ Ĩ »
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ ³ Ý ĀĴ Ĩ R(90)10

Û³ Ę ³ ñ ñ»ñĴ Ĩ áÛĴ Ĩ »Ĵõª ³ Ý¹ ³ Ûå » Ĩ áĀñáõÝ»ñĴ

Երևիսանների և դեռահասանների համար նախատեսված կինոնկարների վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից փոխնախարարների 438-րդ նիստում, 1990թ. ապրիլի 19-ին)

1. Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն, նկարի ունենալով Եվրոպական մշակութային կոնվենցիան,

2. նկարի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելն է, և այդ նպատակը կարող է իրագործվել մշակութային հարցերում ընդհանուր գործողությունների միջոցով,

3. համարելով, որ կինոն՝ 20-րդ դարի արվեստի հիմնական ճյուղերից մեկը, զգալի դեր ունի մշակութային հարցեր բարձրացնելու և դրանք աշխարհով մեկ փարածելու գործում,

4. գտնելով, որ կինոթատրոնը միշտ եղել է ֆիլմեր դիտելու լավագույն վայրը և այն ծառայում է խիստ կարևոր հասարակական նպատակների,

5. համարելով, որ ակնհայտորեն մշակութային արժեք ներկայացնող ֆիլմերի համար գոյություն ունի զգալի լարան,

6. հաշվի առնելով, որ երևիսանների և դեռահասանների զարգացման համար անհրաժեշտ է, որ նրանք դառնան կինոթատրոնի հանդիսատեսներ,

7. համարելով, որ առևտրային սեկտորը, իր ներկայիս արտադրական, փարածման և ցուցադրական որակով շատ հազվադեպ է համապատասխանում այդ կարիքներին,

8. գտնելով, որ հասարակական իշխանությունների օժանդակությունն այս հարցում դեռևս բավարար չէ,

9. համարելով, որ որոշակի միջոցներ, այնուամենայնիվ, ձեռնարկվում են եվրոպական որոշ երկրների կողմից, ինչպես, օրինակ՝ ֆինանսական օգնությունը երիտասարդների համար կամ նրանց կողմից արտադրվող ֆիլմերին կամ ֆիլմերի ցուցադրման խթանման անուղղակի միջոցները,

10. նկատի ունենալով այն քաղաքականության զարգացումը, որն ուղղված կլինի կրթական համակարգերում դեռահասներին կինոարվեստի հետ ծանոթացնելուն,

11. գտնելով, որ կինոն և հեռուստատեսությունը փոխկապակցված են և որ եվրոպական տեղական ֆիլմերի մակարդակը ներկայումս չի համապատասխանում դեռահասների համար նախատեսված հեռուստատեսության պահանջներին,

12. համարելով, որ երիտասարդների համար բավարար կինեմատոգրաֆիական փորձ ապահովելը խիստ կարևոր է, քանի որ նրանք ապագայի հավանական հանդիսատեսներ են,

13. համարելով, որ հեղափոխական ուսումնասիրությունները կարող են հաստատել, որ կապիտալիզմի վերամիավորումը կամ նման այլ երևույթները կինեմատոգրաֆիում կարող են նվազեցնել արտադրողների կամ տարածողների ֆինանսական ռիսկերը,

14. ցանկություն ունենալով համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ նկատի ունենալով Եվրոպայի խորհրդի պատասխանատվությունը երեխաների և դեռահասների զարգացման և բարօրության գործում,

15. հանձնարարում է անդամ պետություններին.

ա) համապատասխան միջոցներ ձեռնարկել դեռահասների համար ֆիլմեր արտադրելու գործում սերտացնելու կինոյի և հեռուստատեսության համագործակցությունը,

բ) սերտ համագործակցություն ստեղծել կինոարտադրության և կրթական հիմնարկների միջև,

գ) ուսումնասիրել և ներդնել գործնական միջոցներ՝ խթանելու ֆիլմերի կրկնօրինակումը և տարածումը՝ նկատի ունենալով դեռահասների կարիքները,

դ) երաշխավորել դեռահասների համար նախատեսված ֆիլմերի ցուցադրման ծրագրերի և լսարանների նախապատրաստումը,

ե) խթանել դեռահասների համար ֆիլմերի ցուցադրումները՝ ֆինանսական աջակցություն և (կամ) հարկային զեղչեր տրամադրելու միջոցով՝ ցուցադրումների հետ կապված ֆինանսական խնդիրները նվազեցնելու նպատակով,

զ) ուսումնասիրել և խթանել այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք կերաշխավորեն լրավամիջոցների կողմից այս բնագավառի առավելագույն լուսարանում,

է) հաշվի առնելով որոշ երկրներում արդեն իսկ գոյություն ունեցող մոդելները՝ կինո- և լրատվական դասընթացներ մտցնել դպրոցներում և կրթական այլ հիմնարկներում,

ը) խթանել համագործակցությունը կինոդպրոցների, պատկերային և ձայնային լեզուների կրթական կենտրոնների և երիտասարդական այլ հաստատությունների միջև,

թ) հեղափոխել և գտնել ֆիլմերի այնպիսի տեսակներ, որոնք կհեղափոխեն դեռահասներին և միաժամանակ կնպաստեն նրանց զարգացմանը,

ժ) նախաձեռնել կինոյի հետ կապված բոլոր հարցերն ուսումնասիրող դասընթացներ՝ դեռահասների համար ֆիլմերի արտադրության, տարածման և ֆինանսավորման արդյունավետ համակարգեր մշակելու համար,

ի) խթանել կինոյի առանձին ոլորտներում կրթական աշխատանքը՝ կազմակերպելով կինոակումբներ, տեսադասեր, փառատներ, սեմինարներ, ինչպես նաև հատուկ ծրագրեր, որոնցում կընդգրկվեն դեռահասները,

յ) խթանել դեռահասների համար գոյություն ունեցող ֆիլմերի կատալոգի կամ տվյալների բանկի ստեղծումը՝ այս բնագավառի մասնագետ կազմակերպությունների աջակցությամբ:

16. Վանձնարարում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարությանը՝ սույն հանձնարարականը փոխանցել բոլոր այն երկրների կառավարություններին, որոնք, Եվրոպայի խորհրդի անդամ չլինելով, անդամակցել են Եվրոպական մշակութային կոնվենցիային:

° í ñãá ³ Ů Ę áñÑáõñ
Ü³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĭ áÜĊi »
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĭ ³ Ý ĀĊi R(90)11

Ü³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĭ áÜĊi »Ċóª ³ Ý¹ ³ Üá »i ááÑááóÝ»ñĊÝ

**Արտադրության (ռեպրոգրաֆիա) բնագավառում
հեղինակային իրավունքին առնչվող
սկզբունքների վերաբերյալ**

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝
փոխնախարարների 438-րդ նիստում, 1990թ. ապրիլի 25-ին)*

նախարարների կոմիտեն, ԵԽ կանոնադրության 15ր հոդվածի համաձայն,

նկարի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելն է,

հաշվի առնելով Եվրոպայի տնտեսական արագընթաց զարգացման պայմաններում հեղինակային իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, մասնավորապես՝ նկարի ունենալով պատճենահանման և արտադրման հնարավորությունների լայն տարածումը,

գիտակցելով բնակչության կողմից նման նոր տեխնիկայի օգտագործումը սահմանափակելու անթույլատրելիությունը,

նկարի ունենալով, որ ԵԽ անդամ պետությունների միջև հեղինակային իրավունքների պաշտպանության պարտավորությունը վերահսկվում է գրական և արվեստագիտական աշխարհների մասին Բեռնի կոնվենցիայի դրույթներով, որի 9-րդ հոդվածը հեղինակներին շնորհում է բացառիկ իրավունք՝ թույլատրելու իրենց աշխարհների արտադրությունը, բացառությամբ միայն որոշակի դեպքերի,

վկայակոչելով Նեդիակային իրավունքի և մշակութային քաղաքականության մասին 1986թ. մայիսի 22-ի թիվ R (86) 9 հանձնարարականը,

հանձնարարում է անդամ պետություններին քննել ռեպրոգրաֆիայի հետ կապված հեղինակային իրավունքի խնդիրները և առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

Սկզբունքներ

1. Պետությունները հեղինակային իրավունքի իրենց օրենքներում պետք է սահմանափակեն հեղինակային իրավունքների միջամտության դեպքերը՝ համաձայն Բեռնի կոնվենցիայի համապատասխան հոդվածների: Սա հարկապես կարևոր է, երբ այդ միջամտությունները չեն փոխհատուցվում:

2. Նկարի ունենալով Բեռնի կոնվենցիայի 9-րդ հոդվածը՝ պետությունները պետք է ստուգեն՝ արդյոք իրենց երկրներում ռեպրոգրաֆիայի կարարումը չի՞ հակասում աշխարհների ճիշտ օգտագործմանը և չի՞ հարվածում հեղինակային իրավունք ունեցող անձանց օրինական շահերին: Նման դեպքերում պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն:

3. Այն դեպքերում, երբ հեղինակներն իրավունք ունեն թույլատրելու իրենց աշխարհների արտադրությունը, պետությունները պետք է քննարկեն, թե.

- ինչպես աջակցել հեղինակային իրավունք ունեցող անձանց՝ կենսագործելու իրենց իրավունքները,
- ինչպես աջակցել օգտագործողներին՝ արտադրելու թույլտրություն ստանալու:

Վերոնշյալն իրագործելիս, նրանք պետք է.

- պարզեցնեն կամավոր արտոնագրման համակարգը: Դա կարելի է անել նաև կանոնադրական համապատասխան կետերով,
- ստեղծեն հնարավոր վեճերի լուծման մեխանիզմներ:

4ա. 2 և 3 սկզբունքներին առնչվող խնդիրները քննարկելիս պետությունները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն դեպքերին, որոնք վերաբերում են.

- կրթական արտադրությանը,
- արտադրությանը գրադարաններում,
- արտադրությանը առևտրային ձեռնարկություններում, պետական կառավարման և հասարակական այլ հիմնարկներում:

4բ. Երբ ոչ կամավոր բնույթի որոշակի լուծումներ կգտնվեն կառուցվածքային արտադրության համար, պետությունները պետք է քննարկեն հեղինակային իրավունք ունեցողների փոխհատուցման անհրաժեշտության հարցը:

5. Եթե պետությունները թույլատրում են փոխհատուցման փրամադրում, նրանք պետք է երաշխավորեն, որ այն կարարվի անհատական հիմքի վրա:

° í ñãá ³ Ը Է անՆաօ՞
Ս³ Է ³ ր ր՝»րՇ Ի անՍՇի»
ԷՅ ԿՕԿ³ ր ր Ի ³ Կ ԲՇ R (91)5

Ս³ Է ³ ր ր՝»րՇ Ի անՍՇի»Շօª ³ Կ¹ ³ Ս ան ր»ի անՆաօԿ»րՇԿ

Կարևոր իրադարձությունները հակիրճ լուսարանելու վերաբերյալ՝ այն դեպքերում, երբ պետականորեն ձեռք են բերված դրանց հեռարձակման բացառիկ իրավունքներ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ փոխնախարարների 456-րդ նիստում, 1991թ. ապրիլի 11-ին)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15ր հոդվածի համաձայն,

նկարի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելը և նրանց արևմտասկան ու սոցիալական առաջընթացը խթանելն է,

նշելով, որ միջպետական հեռուստառաջնությունների զարգացումը դրանց կառավարիչներին բացարձակ իրավունքներ է տալիս լուսարանելու իրենց երկրից դուրս կարարվող իրադարձությունները,

հիշարակելով, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի 10-րդ հոդվածն ամրագրում է արտահայտվելու և տեղեկատվություն տարածելու ու ստանալու իրավունքը,

հիշարակելով նաև Անդրսահմանային հեռուստատեսության եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը, համաձայն որի «յուրաքանչյուր կողմ պետք է իրավական միջոցներ ձեռնարկի խուսափելու այն վիճակից, երբ ժողովրդի իրազեկ լինելու իրավունքը խաթարվում է 3 հոդվածում նշված որևէ հեռարձակողի հեռարձակման կամ վերահեռարձակման բացառիկ իրավունքի պարճառով, երբ որևէ իրադարձություն հասարակական մեծ հետաքրքրության առարկա է, իսկ բացառիկ իրավունքները հանրությանը գրկում են դրան հեռուստատեսությամբ հետևելու հնարավորությունից»,

գիտակցելով կարևոր իրադարձությունների լուսարանման բացառիկ իրավունքների հարցի կարևորությունը, հարկապես եվրոպական ավելի փոքր հեռարձակողների արևակերպից,

վճռած լինելով այս հարցերն ուսումնասիրել՝ նպատակ ունենալով խնդրին օրենսդրական լուծում տալու,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին՝ հաշվի առնել ստորև շարադրված սկզբունքները՝ հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքը պաշտպանելու համար այն դեպքերում, երբ կարևոր իրադարձությունները հեռարձակելու իրավունքները ձեռք են բերված միջպետականորեն,

հանձնարարում է գլխավոր քարտուղարությանը այս Նախնարարական փոխանցել Անդրսահմանային հեռուստատեսության մասին կոնվենցիայի մասնակից բոլոր այն երկրներին, որոնք ԵԽ անդամ չեն:

Մահմանումներ

Մույն հանձնարարականի նպատակներով՝

«Կարևոր իրադարձություն» տերմինը նշանակում է ցանկացած իրադարձություն, որի հեռարձակման բացառիկ իրավունքները ձեռք են բերված հեռարձակողի և իրադարձության կազմակերպչի միջև կնքված պայմանագրով, և որը այլ երկրների մեկ կամ ավելի հեռարձակողների կողմից դիտվում է որպես իրենց հանդիսատեսի համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող:

«Բացառիկ իրավունքներ» տերմինը նշանակում է իրավունքներ, որոնք ձեռք են բերված հեռարձակողի և իրադարձության կազմակերպչի, փարաճքի սեփականատիրոջ, հեղինակային կամ այլ իրավունքների տերի միջև կնքված պայմանագրով՝ նպատակ ունենալով այդ հեռարձակողին տալ տվյալ փարաճքային գոտում իրադարձությունը հեռարձակելու բացառիկ իրավունք:

«Առաջնային հեռարձակող» տերմինը նշանակում է այն հեռարձակող ընկերությունը, որն ունի իրադարձության հեռարձակման բացառիկ իրավունքներ:

«Երկրորդային հեռարձակող» տերմինը նշանակում է ցանկացած հեռարձակող, առաջնային հեռարձակողի երկրից դուրս, որը ցանկություն ունի հակիրճ լուսարանման միջոցով տեղեկատվություն հաղորդել այն իրադարձությունների մասին, որոնց հեռարձակման բացառիկ իրավունքները պատկանում են առաջնային հեռարձակողին:

«Տակիրճ լուսարանում» նշանակում է իրադարձության մասին ձայնի և պատկերի հակիրճ դրվագների հաջորդականություն, որը նպատակ ունի տալու դրա հիմնական կողմերի բավարար նկարագիրը:

Սկզբունքներ

Սկզբունք 1.

Հանրության փեդեկափություն սրանալու իրավունքի պահպանումը

Որպեսզի փվյալ երկրում հանրությունը հնարավորություն ունենա իր փեդեկափություն սրանալու իրավունքից օգրվել, առաջնային հեռարձակողի սեփականարիրական իրավունքը պեդք է որոշակի չափով սահմանափակվի՝ համաձայն սրորեւ շարադրված պայմանների:

Սկզբունք 2.

Հակիրճ լուսարանման պարասրումը

2.1 Առաջնային հեռարձակողի հեդ համաձայնագրեր կնքելով՝ ցանկացած երկրորդային հեռարձակող պեդք է կարևոր իրադարձությունը հակիրճ լուսարանելու իրավունք սրանա՝

ա) ձայնագրելով առաջնային հեռարձակողի ազղանշանը՝ հակիրճ լուսարանում ապահովելու համար, եւ(կամ)՝

բ) իրադարձության փեղանք մուդք գործելով՝ իրադարձությունը լուսարանալու:

2.2. Այս սկզբունքի իրականացման համար պեդք է նկարի առնվեն հեդելյալ դրույթները.

ա) եթե իրադարձությունը բաղկացած է մի քանի առանձին փարրերից, յուրաքանչյուր փարրը պեդք է դիփվի որպես կարևոր իրադարձություն,

բ) եթե իրադարձությունը մի քանի օր է փելում, երկրորդային հեռարձակողը պեդք է ամեն օր առնվազն մեկ հակիրճ լուսարանում փալու իրավունք ունենա,

գ) հակիրճ լուսարանման թույլարրելի փելությունը պեդք է կախված լինի այն հանգամանքից, թե որքան ժամանակ է պեդք՝ իրադարձության մասին փեղեկություն հադորդելու համար:

Սկզբունք 3.

Հակիրճ լուսարանման օգրագործումը

3. Երկրորդային հեռարձակողների կողմից իրադարձությունը լուսարանելու պայմանները սահմանելիս, պեդք է հաշվի առնվեն հեդելյալ հանգամանքները .

ա) իրադարձությունը պեդք է հակիրճ լուսարանվի միայն երկրորդային հեռարձակողի կողմից եւ միայն պարրարական լուրերի թողարկումներում,

բ) կազմակերպված իրադարձության դեպքում, հակիրճ լուսարանումը չպեդք է կափարվի մինչեւ առաջնային հեռարձակողի հիմնական հեռարձակումը,

գ) եթե այլ սահմանափակումներ չկան, հակիրճ լուսարանման մեջ որպես նյութի ադրյուր պեդք է նշվի առաջնային հեռարձակողի անունը եւ ապրանքանիշը, երբ լուսարանումն արված է առաջնային հեռարձակողի ազղանշանը ձայնագրելով,

դ) հակիրճ լուսարանումն այլեւս չպեդք է օգրագործվի, եթե չկա դրա եւ այդ օրվա իրադարձության ուղղակի կապը,

ե) երկրորդային հեռարձակողի կողմից հակիրճ լուսարանման համար օգրագործված բոլոր օրիգինալ նյութերը պեդք է դրանից հեդո ոչնչացվեն, եւ առաջնային հեռարձակողը դրա մասին պեդք է փեղեկացվի,

զ) հակիրճ լուսարանման ռեպրափաները կարող են արիփիվում պահպանվել՝ առանց կրկնակի օգրագործման, բացառությամբ դ կեդրում սահմանված դեպքերի:

Սկզբունք 4.

Ֆինանսական պայմաններ

4.1. Այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, առաջնային հեռարձակողը չպեդք է իրավունք ունենա երկրորդային հեռարձակողից դրամ պահանջելու: Ամեն դեպքում, ոչ մի դրամավճար չի կարող պահանջվել հեռարձակման իրավունքի արժեքի դիմաց:

4.2. Եթե երկրորդային հեռարձակողն իրադարձության փեղանք մուդք գործելու իրավունք է սրացել, իրադարձության կազմակերպիչները կարող են դրամավճար պահանջել, եթե դա հանգեցրել է ավելորդ ծախսերի:

° í ñãå ³ Ȫ Ē áñÑáõñ
Û³ Ē ³ ñ ñ»ñÇ Ī áÛÇĪ »
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ī ³ Ý ĀÇĪ R (91)14

Û³ Ē ³ ñ ñ»ñÇ Ī áÛÇĪ »Çóª ³ Ý¹ ³ Ûå »Ī ááĀñáóÝ»ñÇÝ

Կողավորված հեռուստաբերասային ծառայությունների իրավական պաշտպանության վերաբերյալ

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝
փոխնախարարների 462-րդ նիստում, 1991թ. սեպտեմբերի 27-ին)*

Նախարարների կոմիտեն, ԵԽ կանոնադրության 15ր հոդվածի համաձայն,

նկարի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելն է,

նշելով, որ Եվրոպայում արագ զարգանում են հեռուստաբերասային և հատկապես վճարովի հեռուստաբերասային ծառայությունները, որոնք պաշտպանված են կողավորման տեխնիկայով,

հաշվի առնելով, որ այդ ծառայությունները նպաստում են հասարակությանն առաջարկվող հեռուստահաղորդումների բազմազանությանը՝ միաժամանակ ավելացնելով եվրոպական տեսաձայնային արտադրանքից օգտվելու հնարավորությունը,

համարելով, որ վճարովի հեռուստաբերասային ծառայությունը կարող է ավելացնել հեռուստաբերասային ֆինանսավորումը և որպես հետևանք՝ նաև Եվրոպայում տեսաձայնային արտադրության հնարավորությունները,

մտադրված կողավորված հեռուստաբերասայիններ ապօրինի մուտք գործելու դեպքերի ավելացմամբ,

նշելով, որ այս երևույթը կվերանցի հեռուստաբերասայիններ տրամադրող կազմակերպությունների ֆինանսական միջոցները և հասարակությանն առաջարկվող հաղորդումների բազմազանությունը,

հաշվի առնելով, որ կողավորված հեռուստաբերասայիններ ապօրինի մուտք գործելը վրասում է նաև մի կողմից՝ այդ ծառայությունը տրամադրող կազմակերպությունների, և մյուս կողմից՝ այն անձանց իրավահարաբերությունները, որոնք օգտվում են հեղինակային իրավունքների պաշտպանությունից,

իրազեկ լինելով, որ կողավորված հեռուստաբերասայիններ ապօրինաբար մուտք գործելը կողմնակիորեն վնասում է նաև հեղինակների և պրոդյուսերների իրավունքներին և շահերին,

նշելով, որ կողավորված հեռուստաբերասայիններ տրամադրող կազմակերպությունները իրավասու են լավագույն կողավորման տեխնիկա օգտագործելու,

համարելով, որ այդ տեխնիկան բարելավելու համար անհրաժեշտ է իրավական հիմք,

գրանցելով, որ արդյունավետ միջոցներ պետք է կիրառվեն կողավորված հեռուստաբերասայիններ ապօրինաբար մուտք գործելու դեմ,

համոզված լինելով, որ դրան լավագույնս կարելի է հասնել՝ նման մուտքն անհնարին դարձնող ջանքերի համախմբմամբ,

ընդունելով, որ կողավորված հեռուստաբերասայինները ներքին օրենսդրությամբ պաշտպանելը չպետք է ենթադրի պետության այդ ծառայության դիմաց փոխհատուցում,

հանձնարարում է անդամ պետություններին՝ բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկել՝ կողավորված հեռուստաբերասայիններ ապօրինաբար մուտք գործելու դեմ պայքար ծավալելու համար:

Սահմանումներ

«Կողավորված ծառայություն» նշանակում է՝ ցանկացած տեխնիկական միջոցներով հաղորդվող կամ վերահաղորդվող հեռուստաբերասային, որի տեխնիկական բնույթը փոփոխված է՝ որոշակի հեռուստադիտողների մուտքը սահմանափակելու համար:

«Ապակողավորող սարքավորում» նշանակում է՝ ցանկացած մեխանիզմ, որը նախատեսված կամ հարմարեցված է կողավորված ծառայություն մուտք գործելը հնարավոր դարձնելու համար:

«Կողավորող կազմակերպություն» նշանակում է՝ ցանկացած կազմակերպություն, որի հետաքննումները, կարելային հաղորդումները կողավորված են՝ կամ այդ կազմակերպության, կամ նրա անունից գործող այլ անձանց ու կազմակերպությունների կողմից:

«Տարածում» նշանակում է՝ ապակողավորող սարքավորման վաճառք, վարձակալում կամ առևտրային ներդրում:

Պետություններն իրենց օրենսդրություններում պետք է ընդգրկեն ստորև նշված սկզբունքներից բխող պայմանները.

Սկզբունք I. Ապօրինի գործունեություն

Ապօրինի են համարվում հետևյալ գործողությունները.

1. Ապակողավորող սարքավորման արտադրությունը, եթե այն նպատակ ունի կողավորված ծառայությունը մատչելի դարձնել այն անձանց համար, ովքեր դուրս են կողավորող կազմակերպության կողմից սպասարկվող խմբից:

2. Ապակողավորող սարքավորման ներմուծումը, եթե այն նպատակ ունի կողավորված ծառայությունը մատչելի դարձնել այն անձանց համար, ովքեր դուրս են կողավորող կազմակերպության կողմից սպասարկվող խմբից:

3. Ապակողավորող սարքավորման փրամուծումը, եթե այն նպատակ ունի կողավորված ծառայությունը մատչելի դարձնել այն անձանց համար, ովքեր դուրս են կողավորող կազմակերպության կողմից սպասարկվող խմբից:

4. Ապակողավորող սարքավորման արտադրության, ներմուծման և փրամուծման գովազդը, եթե այն նպատակ ունի կողավորված ծառայությունը մատչելի դարձնել այն անձանց համար, ովքեր դուրս են կողավորող կազմակերպության կողմից սպասարկվող խմբից:

5. Ապակողավորող սարքավորման ձեռքբերումը, եթե այն կոմերցիոն նպատակով կարող է կողավորված ծառայությունը մատչելի դարձնել այն անձանց համար, ովքեր դուրս են կողավորող կազմակերպության կողմից սպասարկվող խմբից: Ինչ վերաբերում է ապակողավորող սարքավորման ձեռքբերմանը անձնական նկատառումներով, ապա անդամ պետություններն ազատ են որոշելու՝ համարել՝ դա անօրինականություն, թե՛ ոչ:

Սկզբունք II. Պատժամիջոցներ

Սկզբունք II.1 Տույժ և վարչական օրենք

1. Պետություններն իրենց օրենսդրություններում պետք է նախատեսեն կետեր, որոնց համաձայն հետևյալ գործողությունները պետք է ենթարկվեն պարժի կամ վարչական պոյժների.

ա) ապակողավորող սարքավորման արտադրություն, ինչպես նշված է I.1 սկզբունքում,

բ) ապակողավորող սարքավորման ներմուծում, ինչպես նշված է I.2 սկզբունքում,

գ) ապակողավորող սարքավորման փրամուծում, ինչպես նշված է I.3 սկզբունքում,

դ) ապակողավորող սարքավորման արտադրության, ներմուծման և փրամուծման գովազդ, ինչպես նշված է I.4 սկզբունքում, ապակողավորող սարքավորման ձեռք բերում, ինչպես նշված է I.5 սկզբունքում:

2. Օրենքում նախատեսված պատժամիջոցները պետք է սահմանվեն համապատասխան մակարդակով: Պետությունները պետք է ապահովեն այս պատժամիջոցների կիրառումը, և, եթե օրենսդրությունը թույլ է տալիս, ապա.

2.1 Պետք է հնարավորություն ստեղծվի գրանցել I սկզբունքում նշված գործողությունների մեջ ներգրավված անձանց և բռնագրավված բոլոր նյութերը, այդ թվում՝ ապակողավորող սարքավորումները դրա արտադրության համար օգտագործված միջոցները հասնելու հետաքննության:

2.2 Պետք է նախատեսվեն բռնագրավված իրերի ոչնչացումը թույլատրող նորմեր:

2.3 Պետք է նախատեսվի ապօրինի գործողությունների հետևանքով ստացված ֆինանսական եկամուտները բռնագրավելու հնարավորություն:

Դատարանները պետք է իրավունք ունենան բռնագրավված եկամուտները կամ դրանց մի մասը փրամադրել փոժողներին՝ որպես նրանց կրած կորուստների փոխհատուցում:

Սկզբունք II. 2 Քաղաքացիական օրենսդրություն

1. Պետություններն իրենց ներքին օրենքներում պետք է ընդգրկեն կետեր, որոնց համաձայն փոժամ կողավորող կազմակերպությունները, անկախ II.1 սկզբունքով նախատեսված դեպքերով դատարարություններից, կարող են քաղաքացիական հայցեր հարուցել անօրինական գործողությունների մեջ ներգրավված անձանց դեմ:

2. Որքանով որ թույլ է տալիս ներքին օրենքը, կողավորող կազմակերպությունը պետք է կարողանա հայց հարուցել ապօրինի գործողություններով ձեռք բերված եկամուտները վիճարկելու համար:

3. Որքանով որ թույլ է տալիս ներքին օրենքը, պետք է կետեր նախատեսվեն ապակողավորող սարքավորման և դրա արտադրության համար օգտագործված միջոցների առգրավման, ոչնչացման կամ փոժամ կողավորող կազմակերպության փոխանցելու համար:

4. Արդյունավետ միջոցներ պետք է նախատեսվեն վերոնշյալ անօրինական գործողությունները ներառող դեպքերն ապացուցելու համար:

° í ñã³ Ɔ Ę áñÑáõñ
Ü³ Ę³ ñ ñ»ñĊ Ĩ áÜĊi»
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ³ Ý ĀĊ Ĩ R (92)15

Ü³ Ę³ ñ ñ»ñĊ Ĩ áÜĊi»Ċóª³ Ý¹³ Üã »i áóÑáóÝ»ñĊÝ

**Օրենքի եւ փրկարարական օրենսդրականների
բնագավառում դասավանդման
հնարավորությունների եւ ուսուցման վերաբերյալ**

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից,
փոխնախարարների 482-րդ նիստում, 1992թ. հոկտեմբերի 19-ին)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

նկարի առնելով, որ ԵԽ նպատակը իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելն է,

հաշվի առնելով փրկարարական օրենսդրականների՝ հասարակության վրա ազդելու բազմաթիվ հնարավորությունները, եւ օրենքի կողմից նոր մարտավարության ընդունման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով, որ փրկարարական օրենսդրականների գարգացումն ընդլայնում է իրավաբանների գործունեության ոլորտը եւ հանգեցնում մի շարք փոփոխությունների գործարարության ու հասարակական կառավարման բնագավառներում, ներառյալ արդարադատության ավելի արդյունավետ կառավարումը,

գտնելով, որ օրենքի ուսուցումը կձանթացնի իրավաբաններին այս փոփոխություններին,

հանձնարարում է անդամ պետություններին.

1. խթանել եւ օժանդակել համալսարանների մակարդակով ուսուցողական եւ նախապարաստրակական ծրագրերի ներդրմանն ու հնարագազարգացմանը,

2. խթանել եւ օժանդակել օրենքի եւ փրկարարական օրենսդրականների բնագավառում հնարագրական աշխատանքների իրականացմանը,

3. իրավասու մարմինների ուշադրությունը հրավիրել օրենքի եւ փրկարարական օրենսդրականների խնդիրներում մասնագիտացող մեկ կամ

մի քանի ազգային հնարագրական կենտրոնների սրբեղծման անհրաժեշտությունը,

4. ընդունել, որ փրկարարական օրենսդրականները նպաստում են օրենքի ուսուցման հանդեպ հնարագրությանը, եւ որ ֆիզիկական ու մարդկային ռեսուրսների հանդեպ նոր պահանջները պետք է բավարարվեն,

5. հրավիրել համապատասխան մարմիններին, հատկապես կրթության համար պատասխանատու կառույցներին, օրենքի մասնագետների համար դասընթացներ կազմակերպելու,

6. իրավասու մարմիններին առաջարկել փոխադրել երկրի սահմաններից դուրս անցկացրած դասընթացները համարել աստիճան եւ դիպլոմ փայտ համար անհրաժեշտ դասընթացների մի մաս եւ խթանել ուսանողների միջազգային փոխանակումները:

Ā Ċ R (92)15 Ñ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ³ ÝĊ Ñ³ í »Ē³ Ĩ Ĩ

Օրենքի եւ փրկարարական օրենսդրականների բնագավառում դասընթացների լրացումների առաջարկներ

Ա. Ընդհանուր շարադրանք

1. Տեղեկարարական օրենսդրականների ներկայացումը, որքանով որ դա կապված է օրենքի հետ, կարիք ունի մշակելու նոր իրավական սկզբունքներ, չափանիշներ, կանոնակարգեր, օրինասրբեղծ ռազմավարություն եւ համակարգի ծրագրավորում:

2. Նամակարգիչը որպես անհատական աշխատանքի միջոց՝ օրենք ուսումնասիրող ուսանողների եւ մասնագետների համար. օրինակ՝ համակարգերի եւ փոխադրելի կազմակերպում:

3. Իրավական սեկտորում փրկարարական օրենսդրականների կիրառում՝

- իրավական փրկարարության հավաքում եւ վերականգնում,
- կառավարման համակարգեր (օրինակ՝ դատարանների կառավարում, քրեական օրենքի համակարգեր),
- որոշումների աջակցության համակարգեր՝ հասարակական կառավարման եւ օրինասրբեղծության ոլորտներում,
- առեւտրի, կառավարման եւ տրանսպորտի բնագավառներում էլեկտրոնային փոխադրելի փոխանակում,
- բանկային եւ ֆինանսական գործարքների համար էլեկտրոնային միջոցների փոխանցում:

4. Վերը նշվածներին եւ փրկարարական օրենսդրականների այլ կիրառություններին վերաբերող իրավական խնդիրներ, ինչպիսիք են.

- համակարգչային հանցագործություններ,
- փվյալների պաշտպանություն,
- հեռահաղորդակցությունների և տեղեկատվական շուկայի կարգավորում,
- հասարակական կառավարման ավտոմատացում,
- տեղեկատվական ազատություն,
- պայմանագրեր, մտավոր սեփականության իրավունքներ:

Բ. Նվազագույն կուրս

Ներածական դասընթացի նվազագույն կուրսը պետք է ուսանողներին ծանոթացնի տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնական սկզբունքներին, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման իրավական հարցերին և իրավաբանության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը:

Նվազագույն կուրսն անցնելիս ուշադրություն պետք է դարձնել ուսանողների՝ համակարգիչներից օգտվելու հնարավորությանը: Մասնավորապես, պետք է հնարավորություն ստեղծվի.

- օգտվել ազգային իրավական տեղեկատվության վերականգնման ծառայություններից,
- օգտվել փիլսոփիական մասնագիտական իրավական ծրագրերից,
- նկարագրել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման փառքեր իրավական ասպեկտները:

Գ. Խորացված կուրս

Ընդունելով, որ ընդհանուր շարադրանքում ներկայացված թեմաները կարող են ընդգրկվել խորացված կուրսում, այլ ուսուցողական ոլորտները կարող են հատկապես հարմար լինել ուսումնասիրման համար: Դրանք կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

- արհեստական ինտելեկտի տեսական հարցեր, այդ թվում՝ ներկայացման և պարզաբանման ռազմավարություններ՝ իրավաբանական նյութերի համար,
- տեխնոլոգիական մշակումներ՝ ցանցերի, անհատական և ինտերգրացված աշխատանքային կայանների, ծրագրավորման ոլորտում,
- միջառարկայական հարցեր՝ համակարգի ձևավորման, համակարգի և կազմակերպչական վերլուծությունների վերաբերյալ,
- նորմատիվային հարցեր՝ հասարակության և մասնավոր իրավաբանների տեղեկատվական տեխնոլոգիաներում մասնակցության մասին:

◦ í ñáá ³ Ŭ Ę áñÑáõñ
 Ŭ³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĩ áŬĊ Ĩ »
 Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ ³ Ý ĀĊ Ĩ R(92)19

Ŭ³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĩ áŬĊ »Ċóª ³ Ý¹ ³ Ŭá »ĩ ááÑáóÝ»ñĊÝ

**Ռ-Տախստական բովանդակությանը
 փոխախաղերի վերաբերյալ**

*(Ընդունվել է Տախստական կոմիտեի կողմից՝
 փոխնախարարների 482-րդ նիստում, 1992թ. հոկտեմբերի 19-ին)*

Տախստական կոմիտեն, ԵԽ կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

նկարի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելն է,

գիտակցելով, որ Տախստական բովանդակությանը փոխախաղերը, որոնց առկայությունն անդամ պետություններում դժբախտաբար անժխտելի է, թաքնված կամ բռնությամբ գուցակցվող ազդեցիկ ազգայնականության, էթնոցենտրիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և ընդհանրապես անհանդուրժողականության փարածման աղբյուր են,

համարելով, որ նման խաղերը անհանդուրժելի են ժողովրդավարական հասարակություններում, որտեղ այլոց թվում հարգվում է նաև փառքեր լինելու իրավունքը, լինի դա ռասայական, կրոնական, թե՛ այլ փառքերություն,

համոզված լինելով, որ ավելի քան կարևոր է միջոցներ ձեռնարկել վերջ դնելու այդ խաղերի արտադրությանն ու փարածմանը, քանի որ դրանց հիմնական սպառողները երեխաներ են,

վկայակոչելով ռասայական, ազգային և կրոնական արելություն հրահրելու դեմ ձեռնարկվող միջոցառումներին վերաբերող իր (68) 30 հանձնարարականը և չարդարացված խտրականության կանխման մասին (72) 22 հանձնարարականը,

հիշելով 1981թ. մայիսի 14-ին ընդունված «Անհանդուրժողականությունը, որպես ժողովրդավարությանը սպառնացող վտանգ» հռչակագիրը,

անդրադառնալով «Բռնության, ազդեցիկ և պոռնոգրաֆիկ համափառքուր ունեցող տեսագրությունների փարածման վերաբերյալ թիվ» R

(89)7 հանձնարարականին և Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիային (ETS 132)՝

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին.

ա) վերանայել իրենց օրենսդրության ազդեցության դաշտը ռասայական խտրականության և անհանդուրժողականության, բռնությունների և երիտասարդների պաշտպանության բնագավառներում, որպեսզի այն առանց սահմանափակումների վերաբերի նաև ռասիստական բովանդակությամբ փոստախաղերի արտադրությանն ու փարածմանը:

բ) դիտարկել փոստախաղերը որպես զանգվածային լրատվամիջոցներ՝ նրանց նկատմամբ կիրառելի դարձնելով թիվ (89) 7 հանձնարարականը և Անդրսահմանային հեռուստատեսության մասին կոնվենցիան (ETS 132):

° í ñãå ³ Ů Ě áñĽáõŕ

Ü³ Ě ³ ñ ñ»ñĴ Ĭ áÜĴi »

Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĭ ³ Ý ĀĴi R (93)5

Տեսաձայնային փոքր արտադրություն կամ եվրոպական հեռուստաշուկայում սահմանափակ լեզվական կամ փարածքային ընդգրկվածություն ունեցող երկրներում փոստաձայնային արտադրանք փարածելու և հեռարձակելու սկզբունքների վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ փոխնախարարների 492-րդ նիստում, 1993թ. ապրիլի 13-ին)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15ր հոդվածի համաձայն,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործել և նրանց փոխանակելու սոցիալական առաջընթացը խթանելն է,

նկատի ունենալով Եվրոպական մշակութային կոնվենցիան,

նկատի ունենալով նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, մասնավորապես, դրա 10-րդ հոդվածը, որտեղ ամրագրված է արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը՝ անկախ սահմաններից,

ջանալով ապահովել այս իրավունքից օգտվելը փոստաձայնային արտադրողների կողմից այն երկրներում, որոնք ունեն փոստաձայնային փոքր արտադրություն կամ սահմանափակ լեզվական կամ փարածքային ընդգրկվածություն եվրոպական հեռուստաշուկայում՝ նրանց հնարավորություն ընձեռելով մուտք գործելու Եվրոպայի հեռուստաշուկաներ՝ իրենց որակյալ արտադրանքը փարածելու համար,

վճռած լինելով ստեղծել հավասար հնարավորություններ եվրոպական փոստաձայնային փարածքում արտացոլելով Եվրոպայի մշակութային փարբերակվածությունը՝ այդ խնդիրները լուծելու ի շահ փոստաձայնային ընկերությունների, որոնք գործում են փոստաձայնային փոքր արտադրություն կամ եվրոպական հեռուստաշուկայում սահմանափակ լեզվական կամ փարածքային ընդգրկվածություն ունեցող երկրներում,

այս առումով նշելով այս արտադրողների առջև ծառայած այն խնդիրները, որոնք խոչընդոտում են նրանց եվրոպական հեռուստաշուկաներ մտնելուն, օրինակ՝ լեզվական կողմի խնդիրը, Եվրոպայի հեռուստաբաժնեկերթույունների ոչ իրազեկ լինելը այդ արտադրանքի որակի մասին, փեսաձայնային արտադրանքի պատրաստման և հեռարձակման փոխնիկական չափանիշները, ինչպես նաև փեսաձայնային արտադրության բնագավառում աշխատող մասնագետների ուսուցման խնդիրը,

մասնավորապես՝ նշելով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի խնդիրների շուրջափույթ լուծման անհրաժեշտությունը,

վճռական հետևելու լրացված միջոցների քաղաքականությանը վերաբերող եվրոպական նախարարական 3-րդ կոնֆերանսի (Կիպրոս, հոկտեմբերի 9-10, 1991) հանձնարարականներին, մասնավորապես՝ Եվրոպայում փեսաձայնային արտադրանքի փարածման վերաբերյալ թիվ R (86)3 հանձնարարականին,

հիշարակելով նաև Անդրսահմանային հեռուստաբաժնեկերթույուն մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, որի համաձայն կոնվենցիայի կողմերը պարարականություն են սրանձնում գտնելու եվրոպական արտադրողների գործունությունը և գարգացումը խթանելու միջոցներ՝ հարուկ ուշադրություն դարձնելով փեսաձայնային արտադրության փոքր հգործություններ կամ լեզվական սահմանափակ դաշտ ունեցող երկրներին,

նշելով, որ այս ուղղությամբ նախաձեռնությունները պահանջում են ընդհանուր և կենտրոնացված միջոցառումներ, որոնք պետք է իրականացնեն կառավարությունները և համապարասխան մասնագիտական կառույցները,

գիտակցելով, այնուամենայնիվ, որ կառավարությունների կողմից ձեռնարկվելիք այս միջոցները չպետք է խանգարեն ծրագրեր կազմելու հարցում հեռարձակողների խմբագրական անկախությանը,

հաշվի առնելով այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում գոյություն ունեցող նախաձեռնությունները և նպարակ ունենալով լրացնել դրանք,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին.

I. Այս բնագավառի համար ազգային քաղաքականություն մշակելիս ղեկավարվել սորբել շարադրված սկզբունքներով՝ հաշվի առնելով նաև իրենց ազգային օրենսդրությունը և միջազգային ասպարեգում ունեցած պարարավորությունները:

II. Բոլոր համապարասխան միջոցներով Եվրոպայում գործող հեռարձակողների, ինչպես նաև փեսաձայնային փոքր արտադրություն կամ փարածքային կամ լեզվական սահմանափակում ունեցող երկրների արտադրողների ուշադրությունը հրավիրել այս սկզբունքներին:

Սկզբունքներ

Բնութագիր և սահմանումներ

Մույն հանձնարարականի նպարակն է աջակցել եվրոպական փոքր գործընկերների փեսաձայնային արտադրանքների փարածմանը և հեռարձակմանը եվրոպական հեռուստաշուկաներում:

Մույն հանձնարարականի նպարակներով՝

● «փոքր եվրոպական գործընկերներ» փերմիներ վերաբերում է Եվրոպայի այն երկրներին կամ փարածաշրջաններին, որոնք ունեն փեսաձայնային փոքր արտադրություն կամ լեզվական կամ փարածքային սահմանափակում ընդգրկում,

● «փեսաձայնային» փերմիներ վերաբերում է ցանկացած սրեղծագործական արտադրանքի, որը կարող է հեռարձակվել հեռուստաբաժնեկերթույուն անկախ նրա փեսակից և փոխնիկական հարկանիշներից:

I. Լեզվական կրկնօրինակման մեթոդների մշակում

Անդամ պետությունները պետք է խրախուսեն եվրոպական փոքր գործընկերների փեսաձայնային արտադրանքների լեզվական կրկնօրինակումը՝ եվրոպական հեռուստաշուկայում դրանց փարածումը և հեռարձակումը դյուրացնելու նպարակով:

Այս նպարակով անդամ պետությունները պետք է մասնավորապես մշակեն հարկային և ֆինանսական արտոնություններ, որպեսզի՝

ա) գնորդ-հեռարձակողի և վաճառող-արտադրողի լեզվական կրկնօրինակման հետ կապված ծախսերը նվազեցվեն,

բ) փեսաձայնային ոլորտի մասնագիտացված մարմինները խրախուսված լինեն՝

● եվրոպական մակարդակում լեզվական կրկնօրինակումների բնագավառում հետազոտություններ կարարելու,

● արդեն իսկ գոյություն ունեցող լեզվական կրկնօրինակման մեթոդները, ինչպես նաև հետազոտությունների շնորհիվ հայտնաբերված մեթոդները առավել արդյունավետ կերպով կիրառելու,

● ուսուցանելու և վերասուցանելու աշխարակազմին՝ այս նոր մեթոդների կիրառումը, ինչպես նաև փեսաձայնային արտադրության համար սցենար պարարասրելու և աշխարանքի սկզբունքները՝ հաշվի առնելով այդ գործերի լեզվական կրկնօրինակումն ասպահովելու հնարավոր պահանջը,

● հեռարձակողների և փեսաձայնային արտադրողների համար փերղեկարվություն մշակել՝ գոյություն ունեցող կամ հայտնաբերված լեզվական փոխակերպման մեթոդների վերաբերյալ:

II. Նոր արտադրողական և հեռարձակման տեխնոլոգիաների մատչելիության

II.1. Անդամ երկրները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն համապատասխան միջազգային մարմինների միջոցով իրազեկելու այն մասին, թե ինչ խնդիրների հետ են կապված եվրոպական փոքր գործընկերների համար հեռարձակման և արտադրության տեխնոլոգիաների և ստանդարտների զարգացումը, ինչպես նաև այն մասին, թե որքան կարևոր է նրանց համար այդ տեխնոլոգիաները հավասարապես հասանելի դարձնելը:

II.2. Անդամ պետությունները պետք է, մասնավորապես, խրախուսեն այնպիսի որոշումների ընդունումը, որոնք եվրոպական փոքր գործընկերներին հնարավորություն կտան՝

ա) տեսաձայնային գործեր արտադրելու՝ օգտագործելով այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համարելի են նոր հեռուստատեսային չափանիշների և ֆորմատների հետ,

բ) շարունակել լիակատար կերպով օգտագործել գոյություն ունեցող արտադրանքը՝ դա համապատասխանեցնելով նոր չափանիշներին և տեխնոլոգիաներին:

II.3. Անդամ պետությունները պետք է խրախուսեն մասնագիտական կառույցներին՝ եվրոպական փոքր գործընկերների աշխատակազմի ուսուցում և վերաուսուցում կազմակերպելով, ինչը նրանց թույլ կտա հարմարվել նոր արտադրական և հեռարձակման տեխնոլոգիաների օգտագործմանը:

II.4. Ավելին, անդամ պետությունները պետք է քննարկեն հարկային և ֆինանսական արտոնությունները՝ եվրոպական փոքր գործընկերների կողմից նոր տեխնոլոգիաներով հագեցած տեսաձայնային գործերի արտադրությունը խրախուսելու նպատակով:

III. Տեսաձայնային արտադրանքի փարաձման զարգացումը

III.1. Անդամ երկրները պետք է խրախուսեն համագործակցության զարգացումը եվրոպական փոքր գործընկերների միջև՝ նրանց տեսաձայնային արտադրանքի փարաձումը, հարկապես ավելի մեծ երկրների հեռուստաշուկաներում, խթանելու նպատակով:

Այս առումով տեսաձայնային արտադրանքի բնագավառի մասնագետները պետք է խրախուսվեն՝ ուսումնասիրելու այնպիսի համակարգերի ստեղծումը, որոնք հնարավոր կդարձնեն փարաձումը միջոցների համարումը՝ նրանց գործերին ավելի լայն փարաձում փախուցնելու, հարկապես եվրոպական հեռուստաշուկաներում: Անդամ երկրները պետք է դիտարկեն այս համակարգերը իրականացնելու համար իրավական դաշտի ստեղծման հնարավորությունը:

36. Արտոնագրեր կարող են շնորհվել տարբեր տիպի հաղորդումների՝ կախված ծառայության տեսակից (տաղիտ կամ հեռուստատեսություն), հաղորդման/ընդունման ձևից (եթերային հաղորդակցության ցանց, արբանյակ, կաբել), հաճախականության տեսակից (analogic կամ թվային) կամ աշխարհագրական ընդգրկումից (ազգային, տարածաշրջանային կամ տեղական): Վանձնարարականը նպատակ չունի անդամ պետություններին մատնանշել, թե հատկապես ծառայության որ տեսակներն են ենթակա արտոնագրման: Միևնույն ժամանակ, նախատեսվում է, որ արտոնագրման ընթացակարգը պետք է լինի հստակ և որոշակի և կիրառվի բաց, թափանցիկ և անաչառ սկզբունքով, և այս հարցում կարգավորման մարմինների ընդունած որոշումները լինեն հնարավորինս հրապարակային:

37. Արտոնագրման հայտերի ընտրությունը երկար ընթացակարգ է՝ մի շարք փուլերով: Հաճախականությունների ցանկը մշակելուց հետո պետք է հրապարակվի հայտերի ընդունման մասին տեղեկատվություն: Ի շահ թափանցիկության և ազատ մրցակցության՝ ցանկալի է, որ հայ-

տերի մասին տեղեկատվությունը հրապարակվի բոլոր հնարավոր միջոցներով, օրինակ, պաշտոնական թերթերում, մամուլում և այլն: Այն պետք է պարունակի մի շարք չափանիշներ, ինչպիսիք են շահագործման առաջարկվող ծառայության տեսակը, ծրագրերի բովանդակությունը և նվազագույն տևողությունը, ծառայության աշխարհագրական ընդգրկումը, ֆինանսավորման տեսակը, արտոնագրման վճարները և տեխնիկական չափանիշները, որոնք պետք է բավարարվեն: Այն պետք է մատնանշի նաև արտոնագրման հայտի կազմման և մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի մասին տեղեկատվություն: Վանձնային մամուլի թափանցիկության խթանման միջոցների մասին թիվ R(94) 13 հանձնարարականի, մրցույթի մասնակիցները պետք է նշեն իրենց ընկերության կառուցվածքը, սեփականատերերին և դրամագլուխը: Մրցույթի մասին հայտարարության մեջ պետք է նշված լինեն նաև հայտերի հանձնման և դրանց ուսումնասիրման վերջնաժամկետները:

38. Վաճառող փուլը ներկայացված հայտերի քննությունն ու թեկնածուների ընտրությունն է: Հայտերում պետք է մանրամասնորեն նկարագրվի, թե ինչպես է նախատեսվում ծառայության իրականացումը, հիմնական շեշտը դնելով տնտեսական և տեխնիկական հարցերին և ենթադրվող բովանդակությանը: Վանձնարարականը թեկնածուների ընտրության հարցում չի սահմանում կարգավորող մարմինների համար որոշակի չափանիշներ՝ դա թողնելով յուրաքանչյուր պետության հայեցողությանը՝ վարվելու առկա հանգամանքներին համապատասխան, սակայն, այնուամենայնիվ ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով հայտերի բովանդակությունից:

39. Ընտրված թեկնածուները պետք է ստորագրեն համաձայնություն՝ ներկայացնելով իրենց մրցութային փաստաթղթերում պարունակվող հիմնական տեղեկատվությունը և այն պարտավորությունները, որ նրանք պետք է կատարեն արտոնագիրը տնօրինելու ընթացքում:

40. Դատական որոշումների անհրաժեշտությունը նվազագույնի հասցնելու համար, հանձնարարականով նախատեսվում է, որ արտոնագրերի շնորհումը կարգավորող կանոնները պետք է սահմանվեն և կիրառվեն բաց և թափանցիկ սկզբունքով: Նույն պարճառով, արտոնագրերի շնորհումը և վերաշնորհումը կարգավորող պայմանները և չափանիշները պետք է հստակորեն նշված լինեն օրենքում և/կամ կարգավորող մարմնի կողմից, և արտոնագիր շնորհելու մասին կարգավորող մարմնի որոշումները պետք է հրապարակվեն բոլոր համապատասխան միջոցներով:

41. Նանձնարարականով պահանջվում է թափանցիկության առավել մեծ աստիճան ապահովելու համար արտոնագրի շնորհման ընթացակարգը բաց դարձնել հասարակության համար, ինչը սակայն չի բացառում հայրերի ուսումնասիրության հնարավորությունը փակ դռների հետևելու՝ ճնշումներից խուսափելու և անաչառ մրցակցություն ապահովելու նպատակով, և թեկնածուների մասին որոշակի տեղեկատվության գաղտնիության պահպանում (տես. Նանձնարարական R(94) 13 մամուլի թափանցիկությանն աջակցելու միջոցների մասին և մասնավորապես թիվ 1 ուղեցույցը):

Նեոարձակողների՝ իրենց պարտավորությունները կապարելու մոնիթորինգ

42. Ապահովելու համար գոյություն ունեցող կանոնների և հեռարձակողների սպանձնամ պարտավորությունների արդյունավետությունը, կարգավորող մարմինները պետք է լիազորված լինեն հետազոտելու գործնականում դրանց իրականացումը՝ օրենքով սահմանված կարգի և նրանց շնորհված արտոնագրերի համաձայն:

43. Նանձնարարականում նշված է, որ կարգավորող մարմինները պետք է երաշխավորեն Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայում, մասնավորապես 7-րդ հոդվածում (հեռարձակողների պարտավորությունների մասին) նշված հիմնական սկզբունքների հարգումը հեռարձակողների կողմից: Սույն հոդվածով նախատեսվում է, որ ծրագրային ծառայությունների բոլոր հաղորդումները իրենց բովանդակությամբ պետք է հարգեն մարդու արժանապատվությունը և այլոց հիմնարար իրավունքները (այն մասնավորապես արգելում է պոռնոգրաֆիան, բռնությունները խրախուսող հաղորդումները կամ ռասայական արկերի հրահրումը): Այն արգելում է նաև ծրագրերի այնպիսի կազմակերպում, որով վրանգվում է երեխաների և դեռահասների ֆիզիկական, հոգեկան կամ բարոյական զարգացումը, մասնավորապես դրանք չպետք է տեղադրվեն այն ժամերին, երբ երեխաները կարող են դա դիտել:

44. Նանձնարարվում է, որ հեռարձակողների գործունեության մասին բողոքները, որոնք գրվում են կարգավորող մարմինների իրավասության ներքո (մասնավորապես ծրագրերի բովանդակության վերաբերյալ) կամ արտոնագրման ընթացակարգերի և օրենքի խախտումը (հե-

ռարձակումը, գովազդը և հովանավորչությունը կարգավորող) պետք է քննվեն կարգավորող մարմինների կողմից: Բողոքների քննման ընթացակարգն առավել արդյունավետ դարձնելու համար, կարգավորող մարմինները պետք է պարբերաբար հրապարակեն իրենց եզրակացությունները:

45. Կախված առկա միջոցներից՝ կան հեռարձակողի գործունեությունը քննելու ընթացակարգի մի շարք տարբերակներ. դրանք կարող են բաժանվել երկու հիմնական խմբի: Առաջին դեպքում մոնիթորինգն իրականացվում է հենց կարգավորող մարմնի կողմից, ինչը բավական մարդկային և տեխնիկական միջոցներ է պահանջում և հետևաբար թանկ է: Խնդրի լուծում կարող է հանդիսանալ պարզ և ոչ պարբերաբար քննությունը, և դրա թիվը կարող է աճել, քանի որ աճում է նաև հեռարձակող ծառայությունների թիվը թվային տեխնոլոգիաների հետ համընթաց: Ընթացակարգի երկրորդ տարբերակը ներառում է վերլուծական հաշվարկներ հենց հեռարձակողների կողմից, որոնք որոշ երկրներում իրենց վերահսկող կարգավորման մարմինների հետ համատեղ ստեղծել են ինքնավերահսկման կառույցներ: Մա պակաս ծախսատար է, սակայն դրա թերությունն այն է, որ ավելի քիչ վստահելի է, քան առաջին տարբերակը: Բոլոր դեպքերում, հիմնական սկզբունքն այն է, որ ծրագրերի ցանկացած քննություն պետք է լինի հետադարձ ուժ ունեցող և համապատասխանի տեղեկատվության և արտահայտվելու ազատության իրավունքին:

46. Նեոարձակման բնագավառի կարգավորող մարմինները պետք է հետևեն մամուլի բազմակարծության և որոշ դեպքերում նաև մրցակցության կանոնների պահպանմանը: Այսպես պետք է նշվի, որ «Լրատվամիջոցներում բազմակարծության խթանման միջոցների վերաբերյալ» R(99) 1 հանձնարարականը նախատեսում է, որ անդամ պետությունները «պետք է ուսումնասիրեն իրենց օրենսդրության մեջ կամ թույլտվության, արտոնագրման և համանման ընթացակարգերում այնպիսի դրույթներ սահմանելու հնարավորությունը, որոնք կկարգավորեն մեկ առևտրային ընկերության կամ խմբի հնարավոր ազդեցությունը մեկ կամ մի քանի լրատվական սեկտորների վրա»: Ավելին, դրանով նախատեսվում է, որ «մասնավոր հեռարձակողներին արտոնագրեր շնորհելու իրավասու ազգային մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն մամուլի բազմակարծության խթանմանը»:

47. Մոնիթորինգը երբևք արդյունավետ չի կարող լինել առանց պարտավորությունների կիրառման լիազորության: Նախաձայն Նանձնարարակա-

նի, երբ հեռարձակողը չի հարգում օրենքը կամ արտոնագրում նշված պայմանները, կարգավորող մարմինները կարող են պատժամիջոցներ կիրառել (դրանց խախտությունը կախված պետք է լինի խախտման լրջությունից) համաձայն օրենքի:

48. Պատժամիջոցները կարող են տարանջատվել պարզ նախագրուչացումից ու փոքր կամ ավելի մեծ փուլանքից, արտոնագրի ժամանակավոր դադարեցումից մինչև ծայրահեղ պատժի՝ արտոնագիրը հետ վերցնելը: Ներքին օրենքի համաձայն, պատժամիջոցները կարող են կիրառվել հրապարակայնորեն՝ իրազեկելու համար հասարակությանը և ապահովելու կարգավորող մարմինների որոշումների թափանցիկությունը: Նախապես արտոնագիրը հետ վերցնելու պատժի ծանրությունը՝ այն պետք է կիրառվի միայն ծայրահեղ դեպքերում, երբ հեռարձակողները մեղադրվում են պարտավորությունների շարժ լուրջ խախտման համար:

49. Նախատեսվում է, որ պատժամիջոցները պետք է համապատասխանեն խախտման ծանրությանը և չպետք է կիրառվեն քանի դեռ հեռարձակողին հնարավորություն չի տրվել խոսելու: Փաստորեն կարգավորող մարմինների հիմնական խնդիրն այն է, որ նրանք չդառնան հեռարձակման բնագավառի «ոստիկաններ», այլ վստահության և երկխոսության բաց մթնոլորտ ստեղծելու միջոցով երաշխավորեն, որ այն գործում է անխափան կերպով: Այնուամենայնիվ, որոշ բացառիկ դեպքերում պատժամիջոցները կարող են կիրառվել առանց նախագրուչացման: Այդ դեպքերը պետք է սահմանվեն օրենքով:

50. Կատարելով մոնիթորինգի և պատժամիջոցների կիրառման իրենց պարտականությունները, կարգավորող մարմինները պետք է գործեն ոչ միայն անաչառ՝ հավասար վերաբերմունք ցուցաբերելով բոլոր հեռարձակողների հանդեպ, այլև պետք է մտահոգվեն թափանցիկության և պարասխանաբանության մասին: Ըստ հանձնարարականի, բոլոր պատժամիջոցները պետք է բաց լինեն՝ համապատասխան դատական արյանների կողմից վերանայվելու համար:

Հանրային հեռարձակողներին վերաբերող լիազորություններ

51. Նախապես առնելով մի կողմից հանրային հեռարձակման և մյուս կողմից առևտրային հեռարձակման առանձնահատուկ բնույթը, անդամ պետություններում ընդունված է առանձին կարգավորող կանոններ մշակել դրանցից յուրաքանչյուրի համար: Այս բաժանումն առկա է նաև վերահսկող մարմինների և կարգավորիչ լիազորությունների համար:

52. Այնուամենայնիվ, հանձնարարականը նշում է, որ հեռարձակման կարգավորող մարմինները կարող են օժտվել նաև հանրային ծառայությունների հեռարձակումը կարգավորող լիազորություններով, որը հաճախ դրվում է հանրային ծառայությունների հեռարձակումը վերահսկող մարմինների վրա: Այսպես հանձնարարականը անդրադառնում է հանրային ծառայությունների հեռարձակման կազմակերպությունների խնդիրներին ինչպես նշված է «Նեոարձակման հանրային ծառայության անկախության երաշխավորման վերաբերյալ» R (96) 10 հանձնարարականում:

53. Եվ առևտրային հեռարձակողների, և հանրային ծառայությունների հեռարձակողների կարգավորման գործառնությունները կարող են տրվել միևնույն կարգավորող մարմին՝ երաշխավորելու համար արդար մրցակցություն հանրային հեռարձակողների և մասնավոր հեռարձակողների միջև:

V. ԹՅ ԵՐ »ՐԻՆՈՒՄԻՆԻՆԵՐԸ

54. Հանձնարարականը նախատեսում է, որ կարգավորող մարմինները հաշվեկրու են հասարակության առջև, քանի որ գործում են բացառապես ի շահ հասարակության: Իրենց գործունեությունը թափանցիկ դարձնելու համար նրանք կարող են, օրինակ, փարեկան հաշվեկրություն տպագրել իրենց աշխատանքի մասին: Սա կնպաստի, որպեսզի ավելի լավ ընկալվեն կարգավորող մարմինների նպատակները, գործառնությունները և լիազորությունները:

55. Ինչպես նշվել է վերը, կարգավորող մարմինները կարիք ունեն լայնաձավալ լիազորությունների, որպեսզի հեռարձակման բնագավառի կարգավորումն ավելի արդյունավետ դառնա: Ինչպես ժողովրդավարական հասարակության իշխանության բոլոր մարմինները, նրանք ևս պետք է պարասխանաբան լինեն իրենց գործունեության համար և ենթակա ժողովրդավարական վերահսկողության: Հիմնական հարցն այն է, թե ում կողմից և ինչպես պետք է իրականացվի այդ վերահսկողությունը: Հանձնարարականն այս առումով ոչինչ չի նախատեսում, թողնելով դա յուրաքանչյուր պետության հայեցողությանը՝ նշանակելու դեկավար մարմին կամ մարմիններ, որոնք պարասխանաբան կլինեն հեռարձակումը կարգավորող մարմինների գործունեության համար:

56. Նանձնարարականով նախադրվում է, որ կարգավորող մարմինները կարող են վերահսկվել միայն իրենց գործունեության իրավահամապարասխանության և ֆինանսական գործունեության ճշգրտության ու թափանցիկության առումով: Կարգավորող մարմնի որոշումների որևէ այլ վերահսկում չի թույլատրվում: Խուսափելու համար այնպիսի դեպքերից, երբ կարգավորող մարմինների գործունեության վերահսկումը վերածվում է գրաքննության, այն միշտ պետք է տրվի ունենա a posteriori: Մյուս կողմից, ըստ տեղական օրենքի, կարգավորող մարմինների ֆինանսական գործունեության ճշգրտության ու թափանցիկության վերահսկումը կարող է կատարվել a priori:

57. Վերջապես, հանձնարարականը նախադրում է, որ կարգավորող մարմինների ընդունված բոլոր որոշումները և կանոնակարգումները պետք է պատճառաբանված լինեն և, համաձայն ազգային օրենքի, բաց լինեն համապարասխան դատարանի կողմից վերանայվելու համար: Որոշումների պատճառաբանվածության պահանջը հնարավորություն է տալիս նրանց, ովքեր դժգոհ են կարգավորող մարմինների որոշումներից, վիճարկելու դրանք իրավասու դատարանի կողմից միջոցով: Քանի որ թափանցիկությունը կարգավորող մարմինների գործունեության հիմնական սկզբունքներից մեկն է, բոլոր ընդունված որոշումները և կանոնակարգումները պետք է համապարասխան միջոցներով հասու դառնան հասարակությանը:

ä ³ Ū³ Ý³ ĩ³ Ý Ûáõ ùç í ñ ÑçÛÝí ³ Í ĩ³ Û
 ¹ ñ Ýçó ĩ³ ¼½ ĩ³ Í ĩ³ é³ Ûáõ Ûáõ Ý»ñç
 ùñ»Ýé¹ ñ ĩ³ Ý á ³ Bi á ³ Ýáõ Û Û Ý
 í »ñ ì»ñ Ë
 ° í ñá ³ ĩ³ Ý Í áÝí »Ýóç³

ëí ñ ëmäõ , 24.01.2001

Ներածություն

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, սույն փաստաթուղթը ստորագրած մյուս երկրները և Եվրոպական համայնքը,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելն է,

վերհիշելով «Կողմորված հեռուստատեսային ծառայությունների իրավական պաշտպանության վերաբերյալ» նախարարների կոմիտեի թիվ R (91) 14 հանձնարարականը,

գտնելով, որ հեռուստատեսային ծառայությունների համար նախադրված ապակողմորման սարքավորումների օգտագործման իրավունքների ուղղահարումը լուրջ հիմնախնդիր է ողջ Եվրոպայի համար,

նշելով, որ հիշյալ հանձնարարականի ընդունման պահից ի վեր ստեղծվել են պայմանական մուտքի նորանոր ծառայություններ ու սարքավորումներ, ինչպես նաև ի հայտ են եկել դրանց ապօրինի մուտք ապահովող նոր ձևեր,

նշելով, որ պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից կազմված ծառայությունների պաշտպանության հարցում եվրոպական պետությունների օրենսդրությունների միջև առկա են լուրջ տարբերություններ,

նշելով նաև, որ ապօրինի մուտքը սպառնում է հետաքննվման և տեղեկատվական հասարակության ծառայություններ տրամադրող կազմակերպությունների եկամտաբերությանը և, որպես հետևանք, կարող է բացասաբար անդրադառնալ հասարակությանն առաջարկվող ծառայությունների և ծրագրերի բազմազանության վրա,

վստահ լինելով պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից կազմված ծառայությունների պաշտպանության համընդհանուր քաղաքականություն ունենալու անհրաժեշտությանը,

համոզված, որ պայմանական մուտքի ծառայությունների հանդեպ ա-

պօրհնությունների կանխարգելման գործում խիստ արդյունավետ կարող են լինել քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցները,

համարելով, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի առևտրային նպատակներով ձեռնարկվող ապօրինի գործողություններին,

նկարի առնելով պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից կազմված ծառայությունների պաշտպանության վերաբերյալ դրույթներ պարունակող առկա միջազգային փաստաթղթերը,

համաձայնության եկան հետևյալի մասին.

¹ 3 ԱՇԿ 1
ԱՅ՝ ՌՅ Կաժ 1 ռձԱԿ»՞

Ճա՛ 1 3 1.
2 է3 ը՛ 3 Կ »օԿա՛ 3 ի՛ 3 Ի Ա

Սույն Կոնվենցիան վերաբերում է վճարովի հիմունքներով փրամադրվող և պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից կազմված հետարձակող և տեղեկատվական հասարակության ծառայություններին: Սույն Կոնվենցիայի նպատակը Կողմերի փորձերում պաշտպանված ծառայություններից ապօրինի օգտվելուն նպաստող գործունեության կանխարգելումը և այս ոլորտում Կողմերի օրենսդրությունների միջև համապատասխանության հաստատումն է:

Ճա՛ 1 3 2.
ԵՇԱԿ՝ 3 Ի՛ 3 Կ ՌՅ է՛ 3 օա՛ՅԱՅձԿ՝՞

Սույն Կոնվենցիայի հիմնական հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

ա. «պաշտպանված ծառայություն» նշանակում է վճարովի հիմունքներով փրամադրվող և պայմանական մուտքի վրա հիմնված կամ դրանից կազմված հետևյալ ծառայություններից յուրաքանչյուրը,

- հեռուստատեսային ծրագրային ծառայություններ, ինչպես ամրագրված է Անդրաշահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայի (փոփոխություններով) 2-րդ հոդվածով,

- ռադիոհեռարձակման ծառայություններ՝ հասարակության համար նախատեսված ռադիոծրագրեր, որոնք հաղորդվում են կաբելային կամ եթերային ճանապարհով, ներառյալ՝ արբանյակի միջոցով,

- տեղեկատվական հասարակության ծառայություններ, որոնք փրամադրվում են էլեկտրոնային միջոցներով, հեռավորության վրա և անհատական պատվերների համաձայն,

ինչպես նաև վերոնշյալ ծառայությունների համար պայմանական

մուտքի ապահովումը, ինչը համարվում է ինքնուրույն ծառայություն,

բ. «պայմանական մուտք» նշանակում է ցանկացած տեխնիկական միջոց և/կամ միջոցառում, որն ապահովում է սույն հոդվածի ա. կետում նշված ծառայությունների մատչելիությունը՝ անհատական արտոնագրի պարագայում,

գ. «պայմանական մուտքի սարքավորում» նշանակում է ցանկացած սարքավորում, ծրագրային փաթեթ և/կամ միջոց, որը նախագծված և հարմարեցված է սույն հոդվածի ա. կետում նշված ծառայությունների մատչելիությունն ապահովելու համար,

դ. «ապօրինի (արգելված) սարքավորում» նշանակում է ցանկացած սարքավորում, ծրագրային փաթեթ և/կամ միջոց, որը նախագծված և հարմարեցված է սույն հոդվածի ա. կետում նշված ծառայություններից որևէ մեկի մատչելիությունն ապահովելու համար՝ առանց ծառայություն փրամադրողի արտոնագրի առկայության:

Ճա՛ 1 3 3.
ԲՐՇ՝ 3 Կ՝ էա՛ՅԱՅձԿ՝

Սույն Կոնվենցիան կիրառելի է պաշտպանված ծառայություն առաջարկող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի հանդեպ, ինչպես ամրագրված է հոդված 2-ում՝ անկախ նրա ազգային պատկանելությունից և Կողմերից որևէ մեկի իրավասության ներքո գտնվելուց:

¹ 3 ԱՇԿ 2
2 ա՛ ը՛ՇԿՇ · ա՛ ը՛ օա՛ՅԱՅձԿ՝՞

Ճա՛ 1 3 4.
ԱԵՖ՝ 1 3 Է՛ 3 Է՛ ի՛ օա՛Յ՞՞

Տակաօրինական են համարվում Կողմերից մեկի փորձերում իրականացվող հետևյալ գործողությունները.

ա. առևտրային նպատակներով ապօրինի սարքավորումներ սրել-ծելը կամ արտադրելը,

բ. առևտրային նպատակներով ապօրինի սարքավորումներ ներմուծելը,

գ. առևտրային նպատակներով ապօրինի սարքավորումներ փրամադրելը,

դ. առևտրային նպատակներով ապօրինի սարքավորումներ վաճառելը կամ վարձակալության փայլը,

ե. առևտրային նպատակներով ապօրինի սարքավորումների փրկապնակը,

զ. առևտրային նպատակներով ապօրինի արքավորումներ փրկապնակը, սպասարկելը և փոխելը,

է. ապօրինի սարքավորումների առևտրային մարկետինգը կամ գովազդը:

Ցանկացած Կողմ ցանկացած պահի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրով կարող է հայտարարել սույն հոդվածի առաջին մասում փրկապնակը չգտնվող գործողություններ ևս հակաօրինական համարելու մասին:

³ 3. ԱՇԿ

ä³ i³ Å³ ÛÇçáóÝ»ñ»öÇ³ í³ ì³ Ý

â³ Bî³ â³ ÝáõÃÛ Ý ÛÇçáóÝ»ñ

Đá¹ í³ í³ 5.

Đ³ í³ ú³řÇÝ³ í³ Ý . á³ř³ áóÝ»áõÃÛ Ý Ñ³ Û³ ñ

ë³ ÑÛ³ Ýí áõ³ â³ i³ Å³ ÛÇçáóÝ»ñ

Կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն հոդվածում 4-ում նշված հակաօրինական գործողությունները քրեական, վարչական կամ այլ պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Այդ միջոցները պետք է լինեն արդյունավետ և բխեն հակաօրինական գործունեության հնարավոր հետևանքների չափերից:

Đá¹ í³ í³ 6.

é³Ý³ . ñ³ í³ áóÝ »ö³ é . ñ³ í³ áóÝ

Կողմերը պետք է միջոցներ ձեռնարկեն ապօրինի սարքավորումների և մարկետինգային, գովազդային օրինազանց նյութերի, ինչպես նաև ապօրինի գործունեության արդյունքում ստացված ցանկացած եկամտի ու ֆինանսական շահույթի բռնագրավման ուղղությամբ:

Đá¹ í³ í³ 7.

ö³ Õ³ Û³ óÇ³ í³ Ý³ 1³ ì³ í³ ñ³ áõÃÛáóÝ

Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի պաշտպանված ծառայություններ փրամադրողները, ում շահերը վրանգվում են հողած 4-ում նշված հակաօրինական գործողությունների պատճառով, կարողանան օգտվել իրավական պաշտպանության համապատասխան միջոցներից, ներառյալ վնասների փոխհատուցումը և կանխարգելիչ միջոցառումները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դիմեն առևտրային ալիքներից ապօրինի սարքավորումները վերացնելու համար:

³ 4. ԱՇԿ

Ä³ í³ Ý³ óáóÝ »ö ÷ á ÷ áÈ áõÃÛáóÝ»ñ áó

È³ óáóÝ»ñ

Đá¹ í³ í³ 8.

ØÇç³ ½³ ԼՇԿ Ñ³ Û³ . á³ř³ í³ óáõÃÛáóÝ

Կողմերը պետք է փոխօգնություն ցուցաբերեն միմյանց՝ սույն Կոնվենցիան իրականացնելու համար: Զրեական և վարչական հարցերի վերաբերյալ համապատասխան միջազգային փաստաթղթերի, ինչպես նաև իրենց օրենսդրությունների համաձայն, Կողմերը պետք է լայնորեն համագործակցեն սույն Կոնվենցիայով ամրագրված քրեական կամ վարչական օրինազանցություններին առնչվող հետաքննությունների և դատական ընթացակարգերի հարցում:

Đá¹ í³ í³ 9.

³ 1/2³ ì³ áõÛ È á³ř³ Ñ³ í³ óáõÃÛáóÝ»ñ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից 2 փարվա ընթացքում և դրանից հետո յուրաքանչյուր երկու փարին մեկ, ինչպես նաև ցանկացած Կողմի պահանջով, Կողմերը Եվրախորհրդի շրջանակներում պետք է անցկացնեն բազմակողմ խորհրդակցություններ՝ սույն Կոնվենցիայի և մասնավորապես հոդված 2-ի դրույթների իրականացումը և դրանց ընդլայնելու կամ վերանայելու հնարավորությունը քննարկելու նպատակով: Այդ խորհրդակցությունները պետք է փրկապնակը և ունենան Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող նիստերի ընթացքում:

2. Այդ խորհրդակցություններին յուրաքանչյուր Կողմ ներկայացված պետք է լինի մեկ կամ մի քանի պատվիրակներով: Յուրաքանչյուր Կողմ ունի ձայնի իրավունք: Սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ունենա մեկ ձայն: Իր իրավասությունների սահմաններում Եվրոպական համայնքը կարող է գործադրել ձայնի իր իրավունքը, եթե սույն Կոնվենցիայի կողմեր հանդիսացող անդամ պետությունների քանակը հավասար է ձայների քանակին: Եվրոպական համայնքը չի կարող գործադրել ձայնի իր իրավունքը, եթե քվեարկությունը վերաբերում է իր իրավասությունների սահմաններից դուրս գտնվող հարցերի:

3. Նոդված 12-ի 1-ին կետում նշված ցանկացած պետություն կամ Եվրոպական համայնքը, որը սույն Կոնվենցիայի Կողմ չի հանդիսանում, խորհրդակցություններում ներկայացվում է դիպորդի միջոցով:

4. Յուրաքանչյուր խորհրդակցությունից հետո Կողմերը Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեին պետք է տրամադրեն խորհրդակցությունների և Կոնվենցիայի իրականացման մասին զեկուցումներ, ինչպես նաև, ահրաժեշտության դեպքում, սույն Կոնվենցիայի լրացման առաջարկություններ:

5. Սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, Կողմերն իրենք պետք է մշակեն խորհրդակցությունների ընթացակարգի կանոնները:

ՃՁՎԻՅՈՒՆ
ՕՁԻՅՈՒՆ

1. Ցանկացած Կողմ կարող է փոփոխություններ առաջարկել սույն Կոնվենցիայում:

2. Փոփոխության ցանկացած առաջարկ պետք է հանձնվի Եվրախորհրդի գլխավոր քարտուղարին, որն էլ այդ մասին տեղյակ կպահի Եվրախորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային Կոնվենցիայի անդամ պետություններին, Եվրոպական համայնքին և բոլոր այն պետություններին, որոնք անդամակցել կամ հրավիրվել են անդամակցելու սույն Կոնվենցիային՝ 13 հոդվածի պայմանների համաձայն:

3. Նախորդ կետի պայմանների համաձայն առաջարկվող ցանկացած փոփոխություն պետք է ուսումնասիրվի՝ գլխավոր քարտուղարին այն հանձնելու պահից 6 ամսվա ընթացքում, բազմակողմ խորհրդակցությունների ընթացքում, որտեղ այդ փոփոխությունը պետք է ընդունվի սույն Կոնվենցիան վավերացրած պետությունների ձայների երկու երրորդի կողմից:

4. Բազմակողմ խորհրդակցությունների ընթացքում ընդունված ցանկացած տեքստ պետք է ներկայացվի Նախարարների կոմիտեի հաս-

տարմանը: Նաստարվելուց հետո, տեքստը պետք է ուղարկվի Կողմերին՝ ընդունման համար:

5. Ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի բոլոր Կողմերի՝ գլխավոր քարտուղարին ընդունման մասին տեղեկացնելուց հետո՝ 30-րդ օրը:

6. Բազմակողմ խորհրդակցությունների արդյունքում ընդունված հանձնարարականի հիման վրա, նախարարների կոմիտեն, համաձայն Եվրախորհրդի կանոնադրության 20 հոդվածում նշված մեծամասնության որոշման կամ կոմիտեում ներկայացված պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ, կարող է որոշում կայացնել, որ փոփոխությունը ուժի մեջ կմտնի դրա՝ ընդունման ներկայացվելու օրվանից սկսած երկու տարի անց, եթե Կողմերից մեկը Եվրախորհրդի գլխավոր քարտուղարին չի ծանուցել դրա ուժի մեջ մտնելու հարցում իր առարկության մասին: Եթե Կողմերից մեկը առարկություն է ներկայացրել, ապա փոփոխությունն ուժի մեջ է մտնում առարկությունը ներկայացրած Կողմից ԵԽ գլխավոր քարտուղարին ընդունման փաստաթուղթը հանձնելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

7. Եթե փոփոխությունը հաստատվել է նախարարների կոմիտեի կողմից, բայց 5 կամ 6 կետերի պայմանների համաձայն դեռևս ուժի մեջ չի մտնել, ապա որևէ պետություն կամ Եվրոպական համայնքը կարող են չարտահայտել Կոնվենցիային անդամակցելու համաձայնություն՝ միաժամանակ չընդունելով փոփոխությունը:

ՃՁՎԻՅՈՒՆ
ՕՁԻՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիան չի խցընդոտում այլ միջազգային Կոնվենցիաներից բխող իրավունքներին և նախաձեռնություններին:

2. Կոնվենցիան ստորագրած Կողմերը, դրանում տեղ գրած սկզբունքների իրականացումն առավել դյուրին դարձնելու և դրույթներն ամրապնդելու ու լրացնելու նպատակով, կարող են երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքել միմյանց հետ՝ սույն Կոնվենցիայում ամրագրված հարցերի շուրջ:

3. Եթե երկու կամ ավելի Կողմեր արդեն համաձայնագիր են կնքել սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարցերից մեկի շուրջ կամ արդեն ունեն որոշակի հարաբերություններ այդ հարցերի վերաբերյալ, ապա նրանք կլիազորվեն իրականացնելու այդ համաձայնագիրը՝ սույն Կոնվենցիայի փոխարեն, եթե դա նպաստում է միջազգային համագործակցության պարզեցմանը:

4. Իրենց փոխարարներություններում Եվրոպական համայնքի անդամ երկրները պետք է հետևեն համայնքային կանոններին և հետևա-

բար չպետք է իրականացնեն սույն Կոնվենցիայից բխող սկզբունքները, բացառությամբ այն դեպքերի, երբ րվյալ մասնավոր խնդրի վերաբերյալ համայնքային կանոններ գոյություն չունեն:

ՊԷՁԷ 4.

° 1/2 ÷ 3 İ Çā 1 řāđĀÝ»ñ

Ըձ¹ İ ³ İ 12.

ëi áñ · řāđĀ »ō áĀÇ Û»ç Ûi Ý»ÉÁ

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրախորհրդի անդամ պետությունների, Եվրոպական մշակութային Կոնվենցիային անդամակցած այլ երկրների, Եվրոպական համայնքի կողմից ստորագրվելու համար: Այդ երկրները եւ Եվրոպական համայնքը իրենց համաձայնությունը կարող են արտահայտել՝ ամրագրելով այն:

ա. ստորագրությամբ՝ առանց հետագա վավերացման, ընդունման կամ հաստատման անհրաժեշտության,

բ. ստորագրությամբ՝ հետագա վավերացման եւ հաստատման պայմանով, ինչին պետք է հաջորդի վավերացումը, ընդունումը եւ հաստատումը:

1. Վավերագիրը կամ ընդունման եւ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրախորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի 3 պետությունների կողմից ընդունման հայտագիր ներկայացնելու համար րված երեք ամիսների հաջորդող ամսվա առաջին օրը՝ վերոնշյալ կետով ամրագրված պայմաններով:

3. Բոլոր ստորագրած Կողմերի եւ Եվրոպական համայնքի համար, որոնք հայտնում են իրենց համաձայնությունը անդամակցելու Կոնվենցիային, այն ուժի մեջ կմտնի համաձայնություն հայտնելու համար նախատեսված 3 ամիսները լրանալուց հետո՝ հաջորդող ամսվա առաջին օրը:

Ըձ¹ İ ³ İ 13.

2 Ý¹ 3 Û āÑ³ Ý¹ Çē³ óáŌ á »i áĀŪāđŸ»řÇ Ûáō ũÁ

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, համաձայնագիր կնքող պետությունների հետ խորհրդակցելուց հետո, կարող է ցանկացած երկրի հրավիրել անդամակցելու սույն Կոնվենցիային՝ համաձայն Եվրախորհրդի կանոնադրության 20 հոդվածում նշված մեծամասնության որոշման կամ կոմիտեում ներկայացված պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկու-

թյան:

2. Ցանկացած անդամակցող Կողմի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի ԵԽ գլխավոր քարտուղարին ընդունման փաստաթուղթը ներկայացնելու համար րվող 3 ամսվա հաջորդող ամսվա առաջին օրը:

Ըձ¹ İ ³ İ 14.

İ³ ř Ā İ Ÿ ŪŸ İ Ūř éáđĀ

1. Ստորագրելու կամ վավերացման, ընդունման եւ հաստատման փաստաթղթերը ներկայացնելու ժամանակ Եվրոպական համայնքի ցանկացած պետություն կարող է որոշակիացնել այն փարածքը կամ փարածքները, որտեղ սույն Կոնվենցիան կկիրառվի:

2. Եվրոպական համայնքի ցանկացած պետություն գլխավոր քարտուղարին ներկայացվող հայտարարագրի միջոցով կարող է ընդլայնել սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտը: Այդ փարածքների համար Կոնվենցիան ուժի մեջ կմտնի գլխավոր քարտուղարի կողմից հայտարարագիրը ստանալու պահից երեք ամիս անց հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Վերոնշյալ երկու կետերով ներկայացված հայտարարագիրը դրանում նշված փարածքների համար կարող է ետ կանչվել Եվրախորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով: Դա կսկսի գործել գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցում ստանալու օրվանից երեք ամիս անց՝ հաջորդող ամսվա առաջին օրը:

Ըձ¹ İ ³ İ 15.

İ »ñ á³ ÑāđŸ»ñ

Սույն Կոնվենցիան ենթական չէ վերապահումների:

Ըձ¹ İ ³ İ 16.

İ »x»řÇ İ³ · 3 İ ářāđĀ

Կողմերի միջև սույն Կոնվենցիայի մեկնարանության եւ կիրառման շուրջ վեճերի ծագման դեպքում Կողմերը պետք է ջանան խաղաղ լուծումների գտնել՝ բանակցությունների կամ այլ ձևերով՝ ներառյալ վեճերի լուծումը դատարաններում, որոնց վճիռները պարտադիր են Կողմերի համար:

Ըձ¹ İ ³ İ 17.

â »ŪŸ É Ñ³ Ū³ ř ñ»ÉÁ

1. Ցանկացած Կողմ ցանկացած պահի կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ կմտնի գլխավոր քարտուղարի՝ նման ծանուցում ստանալու պահից 3 ամիս անց՝ հաջորդող ամսվա առաջին օրը:

**Ճճ¹ Ի³ Ի 18.
Ի³ ԿճԾճԸ**

Եվրախորհրդի գլխավոր քարտուղարը Եվրախորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիային անդամակցած այլ պետություններին, Եվրոպական համայնքին և սույն Կոնվենցիային անդամակցած յուրաքանչյուր պետության պետք է ծանուցի.

- ա. 12 հոդվածի կետերի համաձայն արված ցանկացած ստրագրության մասին,
- բ. վավերացման, ընդունման, հաստատման և մուտքի ցանկացած փաստաթուղթ ստանալու մասին՝ համաձայն 12 և 13 հոդվածների,
- գ. սույն Կոնվենցիայի՝ 12 և 13 հոդվածների համաձայն ուժի մեջ մտնելու ցանկացած օրվա մասին,
- դ. 4 հոդվածի համաձայն ցանկացած հայտարարության մասին,
- և. 10 հոդվածի կետերի համաձայն արված փոփոխության յուրաքանչյուր առաջարկի մասին,
- զ. սույն Կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ գործողության, հայտարարության, ծանուցման մասին:

Ի վկայություն վերոհիշյալի Կողմերը, որ պարզաճ կերպով լիազորված են, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է 2001թ. հունվարի 24-ին Ստրասբուրգում, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը պահվում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրախորհրդի գլխավոր քարտուղարը վավերացված պատճենները կհանձնի Եվրախորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային Կոնվենցիային անդամակցած պետություններին, եվրոհամայնքին և սույն Կոնվենցիային միանալու հրավիրված բոլոր պետություններին:

**° Ի Թճ³ Ը Ե ԳՆՆճԸ
Ս³ Ե³ Թ ԹՂ»ԹՇ Ի ԳՍՇԻ »
ԾՅ ԿՕԿ³ Թ Թ Ի³ Կ Rec (2001)7**

Ս³ Ե³ Թ ԹՂ»ԹՇ Ի ԳՍՇԻ »ԾՅ³ Կ¹ 3 Ս Գ »Ի ԳՆՆճԸԿՂ»ԹՇԿ

Ռ-վային միջավայրում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության, դրանց ոլորնահարման և զրագողության դեմ պայքարի նպատակով կիրառվող միջոցառումների վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից, փոխնախարարների 762-րդ նիստում, 2001թ. սեպտեմբերի 5-ին)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն՝

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելը և նրանց փոփոխական ու սոցիալական առաջընթացը խթանելն է,

ողջունելով հաղորդակցության և տեղեկատվական հասարակության հաստատմանը հանգեցնող տեղեկությունների տարածման ոլորտում արձանագրվող հաջողությունները,

նշելով, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը առավել դյուրին է դարձնում մրավոր սեփականության իրավունքներով պաշտպանվող աշխատանքների, ներդրումների և գործունեության հերշփոմը և դրանց կիրառումը,

մտահոգ՝ տեղեկատվական ցանցերի, թվայնացման և տվյալների խրատման առկա հնարավորությունների հետևանքը հանդիսացող հեղինակային իրավունքների ոլորնահարման նոր ձևերի երևան գալու փաստով,

նշելով, որ այս երևույթը լուրջ ներգործություն է ունենում հեղինակային և հարակից իրավունքների շրջանակներում գործող ոլորտների վրա,

իրագրել այն զգալի վնասին, որ կրում են հեղինակները, հրատարակիչները, արվեստագետները, պրոդյուսերները, հեռարձակողները, ինչ-

պես նաև մշակութային գործիչները և այդ շրջանակներում գործող ուրույնները՝ մի կողմից պաշտպանական մեխանիզմների բացակայության և մյուս կողմից թվային միջավայրում հեղինակային իրավունքների ուրանահարման և գրագողության հետևանքով,

գիտակցելով, որ այս իրավիճակը վնասակար ազդեցություն է ունենում սպառողների շահերի և տեղեկատվական հասարակության զարգացման համար՝ մասնավորապես խոչընդոտելով մշակութային գործունեությունը և այդպիսով վնասելով շուկա հանվող արտադրանքի բազմազանությանը և որակին,

վերահաստատելով հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության ամրապնդման անհրաժեշտությունը՝ որպես գրական և մշակութային գործունեության խթանիչ ուժ,

հիշելով անբավարար պաշտպանության և գրագողության հետևանքով ազգային բյուջեների կրած վնասները,

նշելով գրագողության և կազմակերպված հանցագործության միջև սերտ կապերի առկայությունը,

հիշելով այլ ոլորտներում, մասնավորապես՝ Մրավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, Եվրամիության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Աեուրրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում մրավոր սեփականության իրավունքների պաշտպանության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքները,

կարևորելով 1996թ. դիվանագիտական կոնֆերանսի ընթացքում Մրավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից չափանիշների սահմանման աշխատանքները, որոնցով միջազգային պաշտպանություն է ապահովվում ստեղծագործությունների և թվային տարբերակով տարածվող աշխատանքների համար,

վերհիշելով իր՝

- «Նեղիսակային և հարակից իրավունքների ոլորտում օրինախախտումների և գրագողության դեմ պայքարի վերաբերյալ» R (88) 2 հանձնարարականը,

- «Կողմնորված հեռուստատեսային ծառայությունների պաշտպանության վերաբերյալ» R (91) 14 հանձնարարականը,

- «Նեղիսակային իրավունքի և հարակից ստեղծագործական իրավունքների մասին իրազեկությունը բարձրացնելու և դաստիարակչական աշխատանք կատարելու վերաբերյալ R (94) 3 հանձնարարականը,

- «Չայնային և տեսաձայնային գրագողության դեմ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ» R (95) 1 հանձնարարականը,

հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին՝ հեղինակային իրավունքների ուրանահարումների և գրագողության դեմ պայքարի քաղաքականություն մշակելիս և տեխնիկական զարգացումներին իրենց օրենսդրությունը համապատասխանեցնելիս հաշվի առնել սույն հանձնարարականի հավելվածում ամրագրված սկզբունքները:

Իրավունքների գիտակցում

1. Անդամ երկրները պետք է երաշխավորեն, որպեսզի իրենց աշխատանքների շահագործման և օգտագործման նոր ձևերի առկայության պայմաններում հեղինակները, ստեղծագործողները, արտադրողները և հեռարձակողները օգտվեն հավասար իրավունքներից՝ իրենց շահերի պաշտպանության և հեղինակային ու հարակից իրավունքների ուրանահարման դեմ պայքարի նպատակով: Մասնավորապես, անդամ երկրները պետք է՝

- հեղինակներին, կատարողներին և ձայնագրություններ արտադրողներին օժտեն Մրավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՏԿ) Նեղիսակային իրավունքների համաձայնագրում (Ժնև, 1996թ.) և ՄՄՏԿ Կատարողների և ձայնագրությունների համաձայնագրում (Ժնև, 1996թ.) նշված իրավունքներով,

- հզորացնեն տեղեկատվական ցանցերի և թվային միջավայրում հեռարձակողների, տվյալների շրեմարաններ ստեղծողների և ստեղծագործողների պաշտպանությունը:

Ուղղումներ և պարժամիջոցներ

2. Անդամ երկրները պետք է երաշխավորեն, որպեսզի իրենց ազգային օրենսդրությունը արագ և արդյունավետ հակազդեցության միջոցներ առաջարկի այն անձանց դեմ, ովքեր խախտում են հեղինակային և հարակից իրավունքները և գրադվում են անօրինական նյութերի ներմուծմամբ, արտահանմամբ և տարածմամբ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն, այդ միջոցառումները չպետք է լինեն բարդ, երկարատև կամ թանկարժեք:

- *քրեական օրենսդրություն*

3. Անդամ երկրները պետք է համապատասխան քրեական ընթացակարգեր և պարժամիջոցներ նախատեսեն գրագողության դեպքերի համար: Բացի փոժամների կողմից ներկայացվող բողոքների հիման վրա ձեռնարկվող միջոցառումներից, անդամ երկրները պետք է ստեղծեն նախադրյալներ, որպեսզի հանրային իշխանությունները կարողանան գործել նաև սեփական նախաձեռնությամբ:

4. Պետք է սրելովն համապարասխան պայմաններ, որպեսզի իրավասու մարմինները կարողանան գտնել հեղինակային իրավունքների ուրնահարման և գրագողության մեջ կասկածվող անձանց իրավաբանական հասցեները, բռնագրավեն և ոչնչացնեն այդպիսի օրինակները, դրանց արտադրության միջոցները, նյութերը: Բացի այդ, պետք է նախապես անպիսի միջոցներ, որոնք կնպաստեն հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության փնտնիչական միջոցների խափանմանն ուղղված գործունեության բացահայտմանը: Նախապես ուշադրություն պետք է դարձվի նաև օրինախախտ գործունեությանը ձեռք բերված եկամուտների բռնագրավման հնարավորությունների սրելովն համար: Այդ միջոցները պետք է վերահսկվեն իրավասու իշխանությունների կողմից:

5. Պատժամիջոցները պետք է ներառեն՝ բանտարկություն և/կամ դրամական պաշտպանություն, որոնց չափը պետք է համապարասխանի նման ծանուցանման մեթոդների համար կիրառվող պատժամիջոցների չափին:

- քաղաքացիական օրենսդրություն

6. Քաղաքացիական օրենսդրության շրջանակներում դատական իշխանությունները պետք է օժտված լինեն հեղինակային կամ հարակից իրավունքների ուրնահարմանների դադարեցմանն ուղղված պատժամիջոցների կիրառման հնարավորություններով:

7. Դատական իշխանությունները պետք է ունենան նաև կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու իրավասություններ: Այդ միջոցառումները պետք է լինեն անհատալ, մասնավորապես այնպիսի դեպքերում, երբ հաստատվում է կարող է անուղղելի վնաս հասցնել իրավունքը կրողին, կամ երբ առկա է ապացույցների ոչնչացման վտանգը:

8. Դատավարությունների ժամանակ դատական իշխանությունները պետք է իրավունքը կրողի ներկայացրած բողոքի հիման վրա կարողանան պաշտպանող կողմից ապացույցներ պահանջել, և անդամ երկրները կարող են նաև նախապես, որպեսզի պաշտպանող կողմի լռությունից արվեն համապարասխան եզրակացություններ:

9. Դատական իշխանությունները պետք է իրավասություն ունենան օրինախախտ կողմից պահանջելու վնասի փոխհատուցում փոփոխ կողմին:

10. Անդամ երկրները դատարաններին պետք է օժտեն նաև օրինախախտ կողմից անօրինական գործունեության մեջ ներգրավված երրորդ անձի ինքնության բացահայտումը պահանջելու իրավասությամբ, եթե դա թույլ է տալիս գործի լրջությունը:

- մաքսային իշխանությունների ներգրավումը

11. Անդամ երկրները հեղինակային իրավունքների ուրնահարման և գրագողության դեմ պայքարում պետք է ներգրավեն նաև մաքսային մարմիններին, և նրանց օժտեն կասկածվող նյութի ազատ շրջանառությունը կանխելու իրավասություններով:

Տեխնոլոգիական միջոցառումներ և իրավունքների կառավարում

12. Անդամ երկրները պետք է խրախուսեն հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությանն ուղղված տեխնոլոգիական միջոցառումների և էլեկտրոնային իրավունքների կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը՝ մասնավորապես ապահովելով դրանց օրենսդրական պաշտպանվածությունը:

13. Անդամ երկրները, մասնավորապես օպտիկական ՋԼՄ-ների արտադրության հնարավորություն ունեցող ընկերությունների պարագայում պետք է քննարկեն, օրինակ, միասնական իդենտիֆիկացիոն կոդերի հարկադիր օգտագործման հնարավորությունը, որպեսզի պարզորոշ երևա այդ մասնագետների և ավարտուն արտադրանքի սկզբնաղբյուրը:

Նամագործակցությունը հանրային իշխանությունների միջև և այդ իշխանությունների ու իրավունքներ կրողների միջև

14. Ազգային մակարդակում անդամ պետությունները հեղինակային և հարակից իրավունքների ոլորտում գրագողության դեմ պայքար ծավալելու նպատակով պետք է խրախուսեն ոստիկանության և մաքսային մարմինների միջև համագործակցության հաստատումը, ինչպես նաև հանրային իշխանությունների և իրավունքներ կրողների միջև հնարավոր համագործակցության ընդլայնումը: Մասնավոր հարվածի շրջանակներում պետք է խրախուսվի փոխգործակցությունը իրավունքներ կրողների միջև:

15. Գրագողության և հեղինակային իրավունքների ուրնահարման դեմ արդյունավետորեն պայքարելու նպատակով անդամ երկրները պետք է խրախուսեն տարբեր երկրների ոստիկանական և մաքսային մարմինների միջև համագործակցության հաստատումը:

Նամագործակցությունը անդամ երկրների միջև

16. Անդամ երկրները պետք է միմյանց իրազեկեն հեղինակային և հարակից իրավունքների ոլորտում օրինախախտումների դեմ ձեռնարկվող միջոցառումների մասին:

17. Անդամ երկրները պետք է փոխադարձաբար աջակցեն միմյանց՝ նման միջոցառումների կիրառման հարցում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համապատասխան խողովակների միջոցով ձեռնարկեն համապետ միջոցառումներ:

Նամաձայնագրերի վավերացում

18. Անդամ երկրները հնարավորինս արագ պետք է միանան Մրավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Նեդինակային իրավունքների վերաբերյալ համաձայնագրին՝ նկատի ունենալով, որ հեղինակային իրավունքներ կրողների արդյունավետ պաշտպանությունը մեծապես կախված է միջազգային շրջանակներում այդ պաշտպանության համաձայնեցումից:

19. Անդամ երկրները պետք է անդամակցեն նաև՝

- Գրական և մշակութային սրբապատկերությունների պաշտպանության Բեռնի կոնվենցիայի փարիզյան ակտին (1971թ.),

- Սրբապատկերողների, արվարդողների և ձայնագրությունների ու հեռարձակող կազմակերպությունների պաշտպանության միջազգային կոնվենցիային (Նոն, 1961թ.),

- Ձայնագրությունների ապօրինի կրկնօրինակման դեմ արվարդողների և ձայնագրությունների պաշտպանության միջազգային կոնվենցիային (Ֆնե, 1971թ.),

- Նեոստրատիպի հեռարձակումների պաշտպանության եվրոպական համաձայնագրին և դրա արձանագրություններին,

- Արբանյակային անդրսահմանային հեռարձակումների շրջանակներում հեղինակային և հարակից իրավունքների վերաբերյալ եվրոպական կոնվենցիային (Մրբաբուրգ, 1994թ.),

- Մրավոր սեփականության իրավունքների վաճառքի հետ կապված հարցերի վերաբերյալ համաձայնագրին (ՏԻՒՍ համաձայնագիր), (1994թ.):

° í ãá ³ Ը Ե անՆաժ
Ս³ Ե ³ Թ Ն՝ՐՇԻ ԳՍՈ՛՛»
ԵՅ ԿՕՂ³ Թ Թ Ի ³ Կ Rec (2001)8

Ս³ Ե ³ Թ Ն՝ՐՇԻ ԳՍՈ՛՛»Շճ` ³ Կ¹ ³ Ս Գ »i ԳՄՆԳՎՂ՝ՐՇԿ

Վիրտուալ բովանդակության ոլորտում ինքնակարգավորման սկզբունքների վերաբերյալ (նոր տեղեկատվական և հաղորդակցական ծառայություններում ապօրինի կամ վնասակար բովանդակության տարածման ինքնակարգավորում և դրանցից սպառողների պաշտպանություն)

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից,
փոխնախարարների 762-րդ նիստում, 2003թ. սեպտեմբերի 5-ին)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

Նաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելը և նրանց տնտեսական ու սոցիալական առաջընթացը խթանելն է,

հղում կատարելով Եվրոպայի խորհրդի 1999թ. 50-րդ տարեդարձի կապակցությամբ ընդունված նոր տեղեկատվական տեխնոլոգիաների եվրոպական քաղաքականության իր հռչակագրին,

նկատի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դրա վերահսկման և կիրառման վերաբերյալ անդամ երկրների ստանձնած պարտավորությունները,

կարևորելով արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը՝ որպես յուրաքանչյուր անհատի սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման, ինչպես նաև սոցիալական և մշակութային խմբերի, ազգությունների ու միջազգային համայնքի ներդաշնակ առաջընթացի կարևորագույն նախապայման, որը ամրագր-

ված է 1982թ. Արտահայրվելու և տեղեկատվության ազատության մասին հռչակագրում,

ընդգծելով, որ հաղորդակցական և տեղեկատվական նոր ծառայությունների շարունակական զարգացումը պետք է նպաստի մարդկանց՝ տեղեկատվություն և գաղափարներ արտահայտելու, սրանալու և կիսելու իրավունքի ամրապնդմանը՝ անկախ սահմաններից, հանուն յուրաքանչյուր անհատի և յուրաքանչյուր հասարակության ժողովրդավարական մշակույթի առաջընթացի,

ընդգծելով նաև, որ հաղորդակցական և տեղեկատվական նոր ծառայությունների օգտագործման ազատությունը չպետք է վնաս հասցնի մարդկանց և հատկապես անչափահասների արժանապատվությանը, իրավունքներին և հիմնարար ազատություններին,

վերահաստատելով իր՝ «Բռնության, ագրեսիայի և պոռնոգրաֆիկ համալրերի ունեցող տեսագրությունների փարածման վերաբերյալ» R (89)7, «Ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի վերաբերյալ» R (92)19, «Էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնություններ ցուցադրելու վերաբերյալ» R (97)19, «Արտահայտող խոսքի վերաբերյալ» R (97) 20 հանձնարարականները, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ «Ռասիստական խտրականության ցանկացած արտահայտության վերացման մասին» 1965թ. միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի ա. կետը,

նկատելով նաև, որ «ապօրինի և հատկապես անչափահասների ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացման համար վնասակար բովանդակություն» (այսուհետ՝ «վնասակար բովանդակություն») հասկացությունների շուրջ ազգային քրեական օրենսդրությունների փոփոխությունները,

նկատելով նաև, որ ինքնակարգավորման համար պատասխանատու կազմակերպությունները, ազգային հանգամանքների և ավանդույթների բերումով, կարող են ներգրավվել որոշակի նորմերի համապատասխանելու վերաբերյալ մոնիթորինգի անցկացման գործում, ցանկալի է համակարգավորման շրջանակներում,

իրագրել լինելով հաղորդակցական և տեղեկատվական նոր արտադրությունների կողմից ապօրինի բովանդակության վերացմանը և վնասակար բովանդակությունից սպառողների պաշտպանությանն ուղղված ինքնակարգավորման նախաձեռնություններին, ինչպես նաև օգտվողներին բովանդակության ընտրության և գրման հնարավորություն ընձեռող տեխնիկական միջոցների առկայությանը,

ցանկություն ունենալով զարգացնել և ամրապնդել ապօրինի կամ վնասակար բովանդակության դեմ ուղղված ինքնակարգավորման մեխանիզմները,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին՝

1. իրենց ներքին օրենքներում և/կամ գործնականում կիրառել սույն հանձնարարականի հավելվածում ամրագրված սկզբունքները,

2. ապահովել սույն հանձնարարականի և դրա հավելվածում ամրագրված սկզբունքների լայն փարածումը՝ ահրաժեշտության դեպքում կցելով նաև դրանց թարգմանությունը,

3. ներկայացնել դրանք մամուլի, հաղորդակցական և տեղեկատվական նոր արտադրությունների, սպառողների և նրանց կազմակերպությունների, ինչպես նաև մամուլի և հաղորդակցական ու տեղեկատվական նոր ծառայությունների կարգավորման մարմինների, իրավասու իշխանությունների ուշադրությանը:

Rec(2001)8ՆՅ ԿՕԿՅ Թ Թ Ի 3 ԿՇՆՅ Ի »Ե՝ 3 Ի

Տեղեկատվական և հաղորդակցական նոր ծառայություններում ապօրինի կամ վնասակար բովանդակության փարածման ինքնակարգավորման և դրանցից սպառողների պաշտպանության սկզբունքներն ու մեխանիզմները

**ՊԵՏՃ 1.
ԱԿԿՅ Ի 3 ճ 3 Ի 3 ԿՇՆՅ Կ
Ի 3 ԿՇՆՅ Ի »ԹՃ 3 ԿՇՆՅ ԿՇՆՅ Կ**

1. Անդամ պետությունները պետք է խրախուսեն Ինտերնետը ներկայացնող կազմակերպությունների սրեղծումը, ինչպիսիք են, օրինակ, ինտերնետային ծառայություններ մատուցողները (պրովայդերները), բովանդակություն ապահովողները և օգտագործողները:

2. Անդամ երկրները պետք է նպաստեն, որպեսզի այդ կազմակերպություններն իրենց միջոցներով սրեղծեն կարգավորման մեխանիզմներ, մասնավորապես վարքի կանոնագրի մշակում և այդ կանոնագրի սկզբունքներին իրենց համապատասխանության վերահսկում:

3. Անդամ երկրները մամուլի ոլորտի այդպիսի կազմակերպություններին պետք է խրախուսեն կիրառելու այդ չափանիշները հաղորդակցական և տեղեկատվական ծառայություններում:

4. Անդամ երկրները այդ կազմակերպություններին պետք է խրախուսեն մասնակցելու իրավական գործընթացներին՝ խորհրդատվությունների, լուսմների և կարծիքների փոխանակման միջոցով, ինչպես նաև համապատասխան նորմերի իրագործմանը՝ այդ նորմերին համապատասխանությունը վերահսկելու միջոցով:

5. Անդամ երկրները պետք է խրախուսեն այդպիսի կազմակերպությունների միջև համագործակցությունը Եվրոպայի շրջանակներում և միջազգային մակարդակով:

ՊԵՏՃԷ 2.

՝ áí³ Ỳ¹³ İ áĊĀŬ Ỳ Ỳİ³ Թ̄ . Թ̄áĊĀŬáŎ

6. Անդամ երկրները պետք է խրախուսեն 1-ին գլխում նշված կազմակերպությունների հետ համարեղ բովանդակության նկարագրման լայն հավաքակազմի ստեղծումը, որով կապահովվի բովանդակության չեզոք դասակարգումը՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով սպառողներին կարծիք կազմելու այդ բովանդակության վերաբերյալ:

7. Այդպիսի դասակարգումը պետք է գալի, օրինակ, բռնություններ և պոռնոգրաֆիա պարունակող, ինչպես նաև ծխախոտի և ալկոհոլի օգտագործմանը նպաստող նյութերը, մոլախաղերի և մեծահասակների ու անչափահասների միջև անվերահսկելի ու գաղտնի կապեր հաստատելու հնարավորություն ընձեռող ծառայությունները,

8. Բովանդակություն ապահովողները պետք է կարողանան օգտվել բովանդակության դասակարգման ծառայություններից, որպեսզի օգտագործողներին հնարավորություն ընձեռվի ճանաչելու և գտնելու նման նյութերը:

ՊԵՏՃԷ 3.

՝ áí³ Ỳ¹³ İ áĊĀŬ Ỳ AỲİ Թ̄áĊĀŬ Ỳ ȪĊĊáŎY» Դ̄

9. Անդամ երկրները պետք է խրախուսեն որոնման և գրման հնարավորությունների զարգացումը, որոնք օգտագործողներին թույլ կտան բովանդակությունը դասակարգող միջոցների հնարավորություններն օգտագործելով կատարել նյութերի ընտրություն:

10. Օգտագործողները գրումը պետք է կատարեն կամավոր սկզբունքով:

11. Անդամ երկրները պետք է խրախուսեն բովանդակություն ապահովողների կողմից պայմանական մուտքի ծառայությունների կիրառումը՝ անչափահասներին վնասակար բովանդակությունից պաշտպանելու նպատակով, օրինակ՝ տարիքի վերահսկման համակարգեր, անձնական կողեր, բանալի բառեր, սպակոդավորման համակարգեր կամ էլեկտրոնային կոդով քարտեր:

ՊԵՏՃԷ 4.

՝ áí³ Ỳ¹³ İ áĊĀŬ Ỳ máŌáí³ Դ̄ Ȫ³ Ỳ
N³ Ȫ³ İ³ Դ̄ » Դ̄

12. Անդամ երկրները պետք է խրախուսեն բովանդակության բողոքարկման համակարգերի, օրինակ՝ ուղիղ կապի գծերի ստեղծումը, որոնք փրամադրվում են ինտերնետային ծառայություններ մատուցողների, բովանդակություն ապահովողների, սպառողական միությունների կամ այլ հաստատությունների կողմից: Բովանդակության բողոքարկման այդպիսի համակարգերը պետք է համալրվեն պետական իշխանությունների կողմից փրամադրվող անմիջական կապի գծերով այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է ծագում արձագանքել ենթադրվող ապօրինի բովանդակությանը:

13. Անդամ երկրները պետք է խրախուսեն բովանդակության բողոքարկման համակարգերի համար ընդհանուր չափանիշների զարգացումը: Այդ չափանիշները պետք է ներառեն, օրինակ՝

ա. մշտապես գործող հստակ ինտերնետային հասցեի ապահովում,

բ. բովանդակության բողոքարկման համակարգի մաքսիմալ 24-ժամյա սկզբունքով,

գ. հասարակության իրազեկում բովանդակության բողոքարկման համակարգեր փրամադրող ծառայությունների շրջանակներում գործող իրավական պարասխանավորություն կրող անձանց կամ կազմակերպությունների վերաբերյալ,

դ. հասարակության իրազեկում բովանդակության բողոքարկման գործընթացի կանոնների և գործողությունների վերաբերյալ, ներառյալ համագործակցությունը իրավապահ մարմինների հետ՝ ենթադրվող ապօրինի բովանդակության շուրջ,

ե. արձագանքում բովանդակության բողոքարկման գործընթացի վերաբերյալ սպառողների հարցերին,

զ. բովանդակության բողոքարկման այլ ծառայությունների հետ կապող համակարգերի ապահովում:

14. Անդամ երկրները ենթադրվող ապօրինի բովանդակության շուրջ պետք է համագործակցություն ապահովեն բովանդակության բողոքարկման ծառայությունների և պետական իրավասու մարմինների միջև: Այս նպատակով անդամ երկրները պետք է սահմանեն բովանդակության բողոքարկման համակարգեր առաջարկող մարմինների իրավական պարասխանավորության չափը և արտոնությունները՝ ենթադրվող ապօրինի բովանդակություն մուտք գործելիս, պարճնելիս, հավաքելիս և իրավապահ մարմիններին այն փոխանցելիս:

15. Անդամ երկրները պետք է խթանեն եվրոպական և միջազգային շրջանակներում բովանդակության բողոքարկման ծառայությունների համագործակցությունը:

16. Անդամ երկրները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ իրավական և վարչական միջոցառումները՝ արտերկրից եկող ենթադրվող սպորինի բովանդակության բողոքարկման և բացահայտման շուրջ իրավապահ մարմինների միջև անդրսահմանային համագործակցության հաստատման համար:

ՊԵՃԸ 5.

ՕՇԸ ԿճՐ՝ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ ՆԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ

17. Անդամ երկրները պետք է խրախուսեն տեղական մակարդակում կամավոր, անաչառ, անկախ, մարզելի և արդյունավետ մարմինների կամ ընթացակարգերի ստեղծումը՝ արտադարձական միջնորդություններ իրականացնելու նպատակով, ինչպես նաև բովանդակության շուրջ վիճարկությունների կարգավորման մեխանիզմների հաստատումը:

18. Անդամ երկրները պետք է խթանեն եվրոպական և միջազգային շրջանակներում նման միջնորդ և դատական մարմինների համագործակցություն, միջնորդական և դատական ընթացակարգերի մարզելիությունը:

ՊԵՃԸ 6.

Ս՝ ԻՅ՝ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ ՆԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ

19. Անդամ երկրները պետք է խրախուսեն ինտերնետային բովանդակության որակյալ սպրանքանիշերի գարգացումը, օրինակ, կառավարական, կրթական, երեխաների համար նախատեսված նյութերի համար, որպեսզի օգտագործողները կարողանան ճանաչել և ցանկության դեպքում գտնել այդ նյութերը:

20. Անդամ երկրները պետք է նպաստեն ինքնակարգավորման մեխանիզմների, բովանդակության դասակարգման, գրման հնարավորությունների, բովանդակության բողոքարկման համակարգերի, արտադարձական միջնորդությունների և դատավարությունների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացմանը:

ՕՇԸ ԿճՐ՝ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ ՆԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ

ՕՇԸ ԿճՐ՝ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ ՆԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ

ՕՇԸ ԿճՐ՝ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ ՆԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԿՐԻՏԵՐԻ

Պաշտոնական փաստաթղթերի մարզելիության վերաբերյալ

(ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝ փոխնախարարների 784-րդ նիստում, 2002թ. փետրվարի 21-ին)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

նկարի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակը իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքների և իդեալների պահպանումն ու իրագործումն է,

հաշվի առնելով, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածները, ՄԱԿ-ի Տեղեկատվության մարզելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մարզելիության կոնվենցիան (ընդունված Արևմուտքում, Դանիա, 1998թ. հունիսի 25-ին), Անձնական տվյալների պաշտպանության մասին հռչակագրի անհատների պաշտպանության՝ 1981թ. հունվարի 28-ին ընդունված կոնվենցիան (ETS No. 108), 1982թ. ապրիլի 29-ին ընդունված Արտահայտման և տեղեկատվության ազատության մասին հռչակագիրը, ինչպես նաև՝ իր «Պետական իշխանությունների մոտ պահվող տեղեկատվության մարզելիության վերաբերյալ» R (81) 19 հանձնարարականը, «Պետական մարմինների մոտ պահվող անձնական տվյալների՝ երրորդ անձանց փոխանցման վերաբերյալ» R (91)10 հանձնարարականը, «Վիճակագրական նպատակներով հավաքված և մշակված անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ» R (97) 18 հանձնարարականը, ապա նաև՝ «Արխիվների մարզելիության հարցում համակարգական քաղաքականության վերաբերյալ» R (2000) 13 հանձնարարականը,

I. ê³ ÑÛ³ YáđÛY»ñ

նկարի ունենալով բազմակարծիք, ժողովրդավարական երկրներում պետական կառավարման թափանցիկության և հանրության համար հե-
տաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվության
դյուրամատչելիության նշանակությունը,

համարելով, որ պաշտոնական փաստաթղթերի՝ հավասարության և
հստակ գործող կանոնների վրա հիմնված լայն մարտչելիությունը՝

- թույլ է տալիս հանրությանը՝ համարժեք տեսակետ ունենալ ու քննա-
դատական կարծիք ձևավորել իրենց ապրած հասարակության մեջ տի-
րոջ իրավիճակի և իրենց կառավարող իշխանությունների մասին՝ ընդ-
մին խրախուսելով հանրության մասնակցությունը համընդհանուր հե-
տաքրքրություն ներկայացնող խնդիրներին,

- խթանում է կառավարման մարմինների կատարողականությունն ու
արդյունավետությունը և նպաստում նրանց պարկեշտության պահպան-
մանը՝ հնարավորություն տալով հեռու մնալ կոռուպցիայի վտանգներից,

- նպաստում է կառավարման մարմինների՝ իրրեւ պետական ծառա-
յության տեսակների, օրինականության հաստատմանը և հասարակու-
թյան կողմից պետական իշխանությունների հանդեպ վստահության ամ-
րապնդմանը,

ըստ այդմ՝ նկարի առնելով, որ անդամ պետություններն առավելա-
գույն ջանք պետք է գործադրեն՝ ապահովելու հանրության համար պաշ-
տոնական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների մարտչե-
լիությունը՝ մնալով մյուս իրավունքների և օրինական շահերի պաշտպա-
նության դիրքերում,

ընդգծելով, որ ստորև ամրագրված սկզբունքները նվազագույն չա-
փանիշներ են ներկայացնում իրենցից, և որ դրանք չպիտի ընկալվեն ի
վնաս տվյալ երկրի այն օրենքների ու կանոնակարգերի, որոնցով արդեն
խսկ վերապահված են պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու
ավելի լայն իրավունքներ,

հաշվի առնելով, որ սույն հանձնարարականը հիմնականում անդրա-
դառնում է պաշտոնական փաստաթղթերից օգտվելու շուրջ անհատ ան-
ձանց ներկայացրած հայերին, պետական իշխանությունները պետք է
պարտավորվեն իրականացնել ակտիվ հաղորդակցման քաղաքականու-
թյուն՝ նպատակ ունենալով հանրությանը մարտչելի դարձնել ցանկացած
տեղեկատվություն, որը կարող է օգտակար դիտվել բաց, ժողովրդավա-
րական հասարակության համար,

առաջարկում է անդամ պետությունների կառավարություններին՝ ի-
րենց օրենսդրության մեջ և գործնականում առաջնորդվել սույն հանձնա-
րարականում ամրագրված սկզբունքներով:

Սույն հանձնարարականի նպատակներով՝

«Պետական իշխանություններ» նշանակում է.

i. կառավարությունը և կառավարման մարմինները՝ համազգային,
շրջանային կամ տեղական մակարդակում,

ii. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որքանով որ նրանք
կատարում են պետական գործառնություն կամ իրականացնում վարչա-
կան իշխանություն՝ տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված կար-
գով,

«Պաշտոնական փաստաթուղթ» նշանակում է ցանկացած ձևով
գրառված այն տեղեկատվությունը, որը կազմվել կամ սրացվել է պետա-
կան իշխանությունների կողմից, պահվում է նրանց մոտ և առնչվում է
այս կամ այն պետական կամ վարչական գործառնության՝ բացառությամբ
նախապարաստման փուլում գտնվող փաստաթղթերի:

II. î³ ñ³ í »ÉÇáõÃŭóYÁ

1. Սույն հանձնարարականը վերաբերում է միմիայն պետական իշ-
խանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այդու-
հանդերձ, անդամ պետությունները պետք է իրենց երկրի օրենսդրության
և գործող կարգի համաձայն քննեն ու պարզեն, թե որքանով են սույն
Հանձնարարականի սկզբունքները կիրառելի օրենսդիր մարմինների և
դատախոսական իշխանությունների մոտ պահվող տեղեկատվության
նկատմամբ:

2. Սույն հանձնարարականը որևէ կերպ չի ազդում Անձնական
տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանու-
թյան կոնվենցիայով նախատեսված՝ մարտչելիության իրավունքի կամ
մարտչելիության սահմանափակումների վրա:

III. ä³ Ñi áY³ İ³ Y ÷³ ëi³ ÃÕÃ»ñÇ
U³ ï ä»ÉÇáõÃŭ Y ÁY¹ Ñ³ Yáõëi¹ ¼ááõYÁ

Անդամ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի ի-
րավունքը՝ հայտ ներկայացնելու պայմանով հասու լինել պետական իշ-
խանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այս
սկզբունքը պետք է կիրառվի առանց որևէ (այդ թվում՝ ազգային պատ-
կանություն) հիմքով խտրականության:

IV. ä ³ Bì áÝ³ Ì ³ Ý ÷ ³ ëì ³ ĀŌĀ»řÇ
 Û³ ì ā»ĒÇáĉĀŪ³ Ý ÑÝ³ ř ĩ áñ
 ë³ ÑŪ³ Ý³ ÷ ³ Ĭ áđŪ»řĀ

1. Անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերին հասու լինելու իրավունքը: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում և նպատակամղված լինեն պաշտպանելու:

- i. ազգային անվտանգությունը, պաշտպանությունը և միջազգային հարաբերությունները,
- ii. հասարակության անվտանգությունը,
- iii. քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը և դատական կարգով հետապնդումը,
- iv. անձի անձեռնմխելիությունը և անձի մյուս օրինական շահերը,
- v. առևտրային և փոխառական այլ շահերը՝ մասնավոր թե հանրային,
- vi. կողմերի հավասարությունը՝ կապված դատական վարույթների հետ,
- vii. բնությունը,
- viii. պետական իշխանությունների կողմից իրականացվող փեսչական ստուգումները, հսկողությունը և վերահսկողությունը,
- ix. փվյալ պետության փոխառական, դրամավարկային և արժույթային քաղաքականությունը,
- x. որևէ հարցի ծառայողական նախապարաստման ընթացքում պետական իշխանությունների ներսում կամ դրանց միջև վարվող խորհրդակցությունների գաղտնապահությունը:

2. Տվյալ փաստաթղթին հասու լինելը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկությունների բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել 1-ին պարբերության մեջ նշված որևէ շահի, բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը:

3. Անդամ պետությունները պետք է մտածեն սահմանելու այնպիսի ժամկետներ, որոնց լրանալու դեպքում 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակումներն այլևս չեն գործի:

V. ä ³ Bì áÝ³ Ì ³ Ý ÷ ³ ëì ³ ĀŌĀ»řÇY Ñ³ éáō
 Ñ³ éáō¹³ éÝ³ ÉáōÑ³ Ū³»řĀ

1. Պաշտոնական փաստաթուղթ հայցողը պարտավորված չպետք է լինի հիմնավորելու պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու իր ցանկությունը:

2. Նայերին առնչվող ձևականությունները պետք է հասցվեն նվազագույնի:

VI. ä ³ Bì áÝ³ Ì ³ Ý ÷ ³ ëì ³ ĀŌĀ»řÇY Ñ³ éáō
 ¹³ éÝ³ ÉáōÑ³ Ū³»řÇ Û³³ Ì áđŪ

- 1. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը պետք է քննարկի պետական այն իշխանությունը, որի մոտ պահվում է փվյալ փաստաթուղթը:
- 2. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու հայտերը պետք է քննարկվեն հավասարության սկզբունքի հիման վրա:
- 3. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը պետք է քննարկվի շուրջափույթ կարգով: Այդ հարցով որոշումը պետք է կայացվի, ըստ պարկանելույն փոխանցվի և իրագործվի որոշակի ժամանակահատվածում, որը կարող է նախապես սահմանված լինել:
- 4. Եթե պահանջվող պաշտոնական փաստաթուղթը փվյալ պետական իշխանության մոտ չի պահվում, ապա վերջինս պետք է, որքանով որ հնարավոր է, հայցողին ուղղորդի համապատասխան պետական իշխանության մոտ:
- 5. Պետական իշխանությունը պետք է հնարավորինս օգնի հայցողին՝ գտնելու պահանջվող պաշտոնական փաստաթուղթը, սակայն պետական իշխանությունը պարտավորված չէ բավարարել հայտը, եթե այն վերաբերում է մի փաստաթղթի, որը հնարավոր չէ գտնել:
- 6. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը կարող է մերժվել, եթե այն ակնհայտորեն անհիմն է:
- 7. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտն ամբողջությամբ կամ մասամբ մերժող պետական իշխանությունը պետք է ներկայացնի նման մերժման հիմքերը:

VII. ä ³ Bì áÝ³ Ì ³ Ý ÷ ³ ëì ³ ĀŌĀ»řÇY Ñ³ éáō
 ¹³ éÝ³ Éáō»Ō³ Ý³ Ì Ý»řĀ

1. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հնարավորություն փալու դեպքում պետական իշխանությունը պետք է թույլատրի բնօրինակի բնությունը կամ փրամատրի դրա պատճենը՝ հնարավորության սահ-

մաններում հաշվի առնելով հայցողի արտահայտած ցանկությունը:

2. Եթե պաշտոնական փաստաթղթում եղած տեղեկատվության մի մասի վերաբերյալ կա որևէ սահմանափակում, ապա պետական իշխանությունը պետք է այդուհանդերձ հնարավորություն ընձեռի ծանոթանալ դրանում պարունակվող մնացած տեղեկություններին: Ցանկացած բացթողում պետք է հստակորեն մատնանշվի: Այնուամենայնիվ, եթե փաստաթղթի մասնավորապես տարբերակը ապակողմնորոշող է կամ անիմաստ, ապա նման թույլտվությունը պետք է մերժվի:

3. Պետական իշխանությունը կարող է պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հնարավորություն ընձեռել՝ հայցողին ուղղորդելով դեպի այլընտրանքային դյուրամատչելի աղբյուրները:

**VIII. ä ³ Bi áY³ İ ³ Ý ÷ ³ ëi ³ ĀŌĀ»řÇY Ñ³ ëáõ
1 ³ éY³ ÉáõÑ³ Û³ ñ. ³ ÝŌí áŌí ×³ ñY»ñĀ**

1. Պաշտոնական փաստաթղթերի բնօրինակներին տեղում ծանոթանալը պետք է սկզբունքորեն լինի անվճար:

2. Պաշտոնական փաստաթղթի պատճենի դիմաց հայցողից կարող է գանձվել վճար, որը պետք է լինի ողջամտության սահմաններում և չպետք է գերազանցի պետական իշխանության կողմից կատարված իրական ծախսը:

IX. ì »ñ Y³ Ū³ Ý İ ³ ñ Ā

1. Նայցողը, ում պաշտոնական փաստաթղթից օգտվելու հայրը մասամբ կամ ամբողջապես մերժվել է կամ չի ընդունվել, կամ չի քննարկվել VI սկզբունքի 3-րդ կետում նշված ժամկետների շրջանակում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ և անկողմնակալ արյանում:

2. Նայցողը պետք է մշտապես հնարավորություն ունենա օգտվելու վերանայման շտաբային և ոչ թանկ արարողակարգից, որը ենթադրում է կանոնավոր պետական իշխանության կողմից հայտի վերաքննարկում, կան վերանայում ըստ 1-ին պարբերության մեջ նշված կարգի:

X. Ēñ óáõÇã ÛÇçáó³ éáđY»ñ

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի.

i. հանրությանը տեղեկացնեն պաշտոնական փաստաթղթերին հասու լինելու իր իրավունքի և այդ իրավունքից օգտվելու եղանակների մասին,

ii. ապահովեն պետական ծառայողների պարբերական ծանոթությունը՝ այդ իրավունքի իրագործմանն առնչվող իրենց պարտականությունների և պարտավորությունների հարցում,

iii. ապահովեն հայցողներին՝ իրենց այդ իրավունքից օգտվելու հնարավորությունը:

2. Այդ նպատակով, պետական իշխանությունները հարկապես պետք է.

i. պարզաճ կարգով վարեն իրենց փաստաթղթերը, որպեսզի դրանք դյուրամատչելի լինեն,

ii. կիրառեն հստակ և հաստատված կանոններ՝ իրենց փաստաթղթերի պահպանման ու ոչնչացման համար,

iii. հնարավորության սահմաններում մատչելի դարձնեն իրենց պարասխանավորության տակ գտնվող հարցերի կամ գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, ասենք՝ կազմելով իրենց մոտ պահվող փաստաթղթերի ցանկեր կամ մատյաններ:

**XI. ä »i ³ İ ³ Ý ÇBE ³ YáõĀđđY»řÇ
Y³ Ē ³ Ō»éYáõĀŪ Ûµ
Ññ á ³ ñ İ í áŌí »Ō»İ ³ í í áõĀđđYĀ**

Պետական իշխանությունը պետք է սեփական նախաձեռնությամբ և ըստ նպատակահարմարության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ հրապարակելու իր մոտ պահվող տեղեկատվությունը, եթե նման տեղեկությունների տրամադրումը ծառայում է պետական կառավարման թափանցիկության և կառավարման մարմինների կատարողականությունը խթանելու գործին կամ կարող է նպաստել հանրության համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրներում հասարակության իրազեկված մասնակցությանը:

° í ñãã ³ Ը Է անՆաօ՞
Ս³ Է ³ ñ ñ»րՇ Ի ԳՍՇԻ»
Ծ³ ԿՕԿ³ ñ ñ Ի ³ Կ Rec(2002)7

Ս³ Է ³ ñ ñ»րՇ Ի ԳՍՇԻ»Շօ` ³ Կ¹³ Ս Գ »ի ԳՍՇԻՅ»րՇԿ

**Նոտարձակող կազմակերպությունների հարակից
իրավունքների պաշտպանությունը խթանող
միջոցառումների վերաբերյալ**

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից,
փոխնախարարների 807-րդ նիստում, 2002թ. սեպտեմբերի 11-ին)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15ր հոդվածի համաձայն,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելը և նրանց փոխհարաբերական ու սոցիալական առաջընթացը խթանելն է,

վերահաստատելով հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության կարևորությունը՝ որպես գրական և մշակութային աշխատանքներ ստեղծելու խթան,

գիտակցելով, որ ստեղծագործական և մշակութային գործունեության ասպարեզում եվրոպական հեռարձակող կազմակերպությունների ունեցած բարձրարժեք ավանդը մեծ ներդրումներ և ջանքեր է պահանջում՝ ծրագրերի որակը և բազմազանությունը ապահովելու նպատակով, և որ այն վրանգվում է հեղինակային իրավունքների ոտնահարման դեմ անբավարար պաշտպանվածության պատճառով,

գիտակցելով հասարակության ընդհանուր շահերի հետ հեռարձակող կազմակերպությունների իրավունքների հավասարակշռման անհրաժեշտությունը, մասնավորապես կրթության, հեղափոխությունների և տեղեկատվության մատչելիության ոլորտում, և հեռարձակող կազմակերպությունների կողմից իրենց հաղորդումներում պարունակվող աշխատանքների և պաշտպանության ենթակա այլ ստեղծագործությունների հանդեպ հեղինակային և հարակից իրավունքների ճանաչման անհրաժեշտությունը,

գիտակցելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության շրջանակներում հեռարձակող կազմակերպությունների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող աշխատանքների կարևորությունը, ինչպես նաև միջազգային իրավական դաշտում ցանկացած նոր զարգացումը հաշվի առնելու անհրաժեշտությունը,

հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին՝ հեռարձակող կազմակերպությունների հարակից իրավունքները պաշտպանելիս և այդ իրավունքները թվային միջավայրին հարմարեցնելիս հաշվի առնել սույն հանձնարարականի հավելվածում ամրագրված սկզբունքները:

Rec(2002)7 Ն³ ԿՕԿ³ ñ ñ Ի ³ ԿՇ Ն³ Ի »Է ³ Ի

Վերապահվող իրավունքներ

Նոտարձակող կազմակերպությունների հարակից իրավունքների պաշտպանությունը ապահովելու նպատակով անդամ երկրները պետք է օժտեն նրանց հետևյալ իրավունքներով՝ նկատի առնելով, որ այդ իրավունքները կարող են սահմանափակումների ենթարկվել միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում,

ա. իրենց հեռարձակումների վերահաղորդումը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունք,

բ. իրենց հեռարձակումների տեսաձայնագրումը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունք,

գ. իրենց հեռարձակումների տեսաձայնագրության ուղղակի կամ անուղղակի վերարտադրումը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունք,

դ. իրենց հեռարձակումների տեսաձայնագրությունը հանրության համար կաբելային կամ առանց կաբելի միջոցներով մատչելի դարձնելը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունք, այնպես, որ հանրության անդամների համար դրանք մատչելի լինեն՝ նրանց կողմից ընտրված ժամին և վայրում,

ե. իրենց հեռարձակումների տեսաձայնագրության կրկնօրինակները վաճառքի միջոցով հանրության համար մատչելի դարձնելը թույլատրելու կամ արգելելու բացառիկ իրավունք,

զ. իրենց հեռարձակումների մասին հանրության իրազեկումը թույլ տալու կամ արգելելու բացառիկ իրավունք, եթե իրազեկման հետևանքով հանրությունը դրանցից անվճար օգտվելու հնարավորություն է ստանում:

Տեխնոլոգիական միջոցառումներ

Անդամ երկրները համապատասխան իրավական պաշտպանվածություն պետք է ապահովեն ընդդեմ յուրաքանչյուր անձի, ով գիտակցաբար և առանց համապատասխան լիազորությունների կոչնչացնի կամ փոփոխություններ կմտնի էլեկտրոնային իրավունքների կառավարման տեղեկատվության մեջ՝ իրազեկ լինելով, որ դա կհանգեցնի սույն հանձնարարականում ամրագրված իրավունքների ոտնահարման: Նույնը պետք է կիրառվի այն անձանց հանդեպ, ովքեր վերահսկողություն, տարածում կամ հանրության սեփականությունն են դարձնում հեռարձակումների կրկնօրինակները՝ իմանալով, որ էլեկտրոնային իրավունքների կառավարման մասին տեղեկատվությունը, առանց համապատասխան լիզորությունների, ոչնչացվել կամ փոփոխվել է:

Պաշտպանվածության ժամկետները

Անդամ երկրները հեռարձակող կազմակերպություններին պետք է օժտեն պաշտպանվածության ժամկետներով, որը կտևի առնվազն 50 տարի՝ սկսած այն տարվա ավարտից, որի ընթացքում տեղի է ունեցել հեռարձակումը:

° í ñáá ³ Ů Ę áñÁáŵ
Ü³ Ę ³ ñ ñŸ»ñĈ İ áÜĈi »

Đéā³ İ ³ . Ĉñ

Ինտերնետային հաղորդակցության ազատության վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից, փոխնախարարների 840-րդ նիստում, 2003թ. մայիսի 28-ին)

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները՝

վկայակոչելով արտահայտվելու և տեղեկատվության ազատության վերաբերյալ անդամ երկրների ստանձնած պարտավորությունները, որոնք երաշխավորված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածով,

համարելով, որ անհրաժեշտ է ամրապնդել արտահայտվելու ազատությունը և Ինտերնետում տեղեկատվության ազատ շրջանառությունը, միևնույն ժամանակ գիտակցելով, որ արտահայտվելու և տեղեկատվություն ստանալու ազատությունը պետք է հավասարակշռվի օրինական այլ իրավունքների և շահերի հետ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2 կետի համաձայն,

վկայակոչելով «Վիրտուալ բովանդակության ոլորտում ինքնակարգավորման սկզբունքների վերաբերյալ» Rec (2001)8 հանձնարարականը,

վկայակոչելով նաև Զանգվածային լրատվամիջոցների քաղաքականության վերաբերյալ 5-րդ նախարարական համաժողովի թիվ 1 հռչակագիրը (Սալոնիկ, 1997թ. դեկտեմբերի 11-12),

մտահոգ՝ քաղաքական կամ ժողովրդավարությանն անհարիր այլ պատճառներով ինտերնետային կապը սահմանափակելու փորձերով,

համոզված, որ ինտերնետային հաղորդակցության վերահսկում կարող է կիրառվել միմիայն բացառիկ դեպքերում,

համարելով, որ անհրաժեշտ է վերացնել անհարական ինտերնետային կապ ունենալու խոչընդոտները և հավելյալ միջոցներ ձեռնարկել «Նեոահաղորդակցության և տեղեկատվական նոր միջոցների ոլորտում հանրային ծառայություն ստեղծելու վերաբերյալ» թիվ R (99) 14 հանձնարարականին համընթաց շարժվելու նպատակով,

համոզված լինելով, որ Ինտերնետի միջոցով մատուցվող ծառայություններ ստեղծելու ազատությունը կերաշխավորի, որպեսզի օգտագործողներն իրավունք ունենան տեղական և օտարերկրյա բազմազան աղբյուրների միջոցով ստանալու բազմակարծիք տեղեկատվություն,

համոզված լինելով նաև, որ անհրաժեշտ է սահմանափակել ծառայություններ մատուցողների (պրովայդերների) լիազորություններն այն դեպքերում, երբ նրանք հանդիսանում են պարզ հաղորդողներ (փոխանցողներ) կամ կապ են ապահովում որևէ երրորդ կողմի տեղեկատվության համար,

այս առումով վերհիշելով տեղեկատվական հասարակության ծառայությունների իրավական կողմերի և մասնավորապես ինտերնետային շուկայում էլեկտրոնային առևտրի վերաբերյալ Եվրոխորհրդարանի և Խորհրդի՝ 2000թ. հունիսի 8-ի 2000/31/EC հրահանգը,

շեշտելով, որ ինտերնետային հաղորդակցության ազատությունը չպետք է վնասի մարդկանց և հատկապես անչափահասների արժանապատվությունը, իրավունքներն ու հիմնարար ազատությունները,

համարելով, որ որոշակի հավասարակշռություն պետք է հաստատվի օգտագործողների ինքնությունը չբացահայտելու ցանկության և իրավապահ մարմինների կողմից հանցագործությունների համար մեղադրվող անձանց փնտրելու անհրաժեշտության միջև,

ողջունելով Ինտերնետում ապօրինի բովանդակություն հանդիպելու դեպքում ծառայություններ մատուցողների՝ իրավապահ մարմինների հետ համագործակցելու ջանքերը,

կարևորելով այս գործակալությունների միջև համագործակցությունը նման բովանդակության դեմ պայքարի հարցում,

հայտարարում են, որ ինտերնետային հաղորդակցության բնագավառում նրանք առաջնորդվելու են հետևյալ սկզբունքներով.

Սկզբունք 1.

Ինտերնետային բովանդակության կանոններ

Անդամ երկրները չպետք է սահմանափակումների ենթարկեն ինտերնետային բովանդակությունը, բացի այնպիսի սահմանափակումներից, որոնք կիրառվում են տեղեկատվական այլ միջոցների հանդեպ:

Սկզբունք 2.

Ինքնակարգավորում կամ համակարգավորում

Անդամ երկրները պետք է խրախուսեն Ինտերնետում տարածվող բովանդակության վերաբերյալ ինքնակարգավորման կամ համակարգավորման միջոցառումները:

Սկզբունք 3.

Պետության կողմից վերահսկման բացակայություն

Նախապես իշխանությունները, անկախ սահմաններից, չպետք է սահմանափակեն ինտերնետային տեղեկատվության և այլ հաղորդակցության մատչելիությունը հասարակության համար: Սա չի վերաբերում անչափահասների պաշտպանության նպատակով կիրառվող սահմանափակումներին, մասնավորապես՝ նրանց համար մատչելի վայրերում, ինչպիսիք են, օրինակ, դպրոցները կամ գրադարանները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներն իրագործելու նպատակով միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի Ինտերնետում վերացվեն ակնհայտորեն նույնական բովանդակության նյութերը, կամ պետք է դադարեցվի դրանց տարածումը, եթե իրավասու մարմինները որոշում են կայացրել դրանց ապօրինի բնույթի վերաբերյալ:

Սկզբունք 4.

Տեղեկատվական հասարակությունում անհատների մասնակցության սահմանափակումների վերացում

Անդամ երկրները պետք է խրախուսեն ինտերնետային հաղորդակցության և տեղեկատվական ծառայությունների մատչելիությունը բոլորի համար՝ առանց խտրականության և մատչելի գներով: Ավելին, հասարակության ակտիվ մասնակցության, օրինակ, անհատական ինտերնետային էջերի ստեղծման համար չպետք է առաջադրվեն արտոնագրերի ձևեր բերման կամ նման այլ պահանջներ:

Սկզբունք 5.

Ինտերնետի միջոցով ծառայություններ մատուցելու ազատություն

Ինտերնետի միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով հաղորդման միջոցներից օգտվելու համար չպետք է պահանջվի հատուկ թույլտվություն:

Անդամ երկրները պետք է միջոցներ գտնեն օգտվողների կամ սոցիալական խմբերի փարբեր կարիքների բավարարման նպատակով Ինտերնետի միջոցով նրանց առաջարկելու բազմազան ծառայությունների ցանց: Ծառայություններ մատուցողները պետք է հնարավորություն ունենան աշխատելու օրինական շրջանակներում, ինչը հնարավորություն կընձեռի նրանց ազատ մուտք ունենալ ազգային կամ միջազգային հեռահաղորդակցման ցանցեր:

**Սկզբունք 6.
Ինտերնետային բովանդակության համար ծառայություններ մատուցողների պատասխանատվության սահմանափակում**

Անդամ երկրները չպետք է պարտավորեցնեն ծառայություն մատուցողներին իրականացնելու իրենց կողմից տրամադրվող, հաղորդվող կամ պահվող ինտերնետային բովանդակության ընդհանուր մոնիտորինգ (հսկում):

Անդամ երկրները պետք է երաշխավորեն, որպեսզի ծառայություններ մատուցողները պատասխանատու չլինեն ինտերնետում տեղադրվող նյութերի բովանդակության համար, եթե նրանց գործառնությունները սահմանափակվում են միայն տեղեկատվության հաղորդմամբ կամ ինտերնետային կապի ապահովմամբ, ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ:

Այն դեպքերում, երբ ծառայություններ մատուցողների գործառնություններն ավելի լայն են և նրանք պարունակում են նաև այլ կողմերից ստացվող տեղեկատվություն, և այդ տեղեկատվությունը ապօրինի է, ապա այդ մասին տեղեկանալու պահից դրա մուտքը չսահմանափակելու կամ փարածումը չդադարեցնելու դեպքում նրանք կհստի են պատասխանատվությունը:

Եթե նախորդ կետում նշված դեպքերում ազգային օրենսդրությամբ նախատեսված է որոշակի պատասխանատվություն ծառայություններ տրամադրողների համար, ապա պետք է հոգ տարվի, որպեսզի երաշխավորվեն առաջնային տեղեկատվության ինտերնետային կապի ապահովված անձանց արտահայտվելու ազատությունը, ինչպես նաև տեղեկատվությունն օգտագործողների համապատասխան իրավունքները:

Բոլոր դեպքերում, վերոնշյալ սահմանափակումները չպետք է խանգարեն դարական որոշումներ կայացնելու գործընթացին այն դեպքերում, երբ ծառայություններ մատուցողներից պահանջվում է սահմանափակել կամ կանխել օրինախախտումները:

**Սկզբունք 7.
Անանուսություն (անձի գաղտնիություն)**

Օնլայն հսկողությունից պաշտպանություն ապահովելու և տեղեկատվության ու գաղափարների ազատ արտահայտումը խթանելու նպատակով անդամ երկրները պետք է հարգեն Ինտերնետից օգտվողների՝ գաղտնի մնալու ցանկությունը: Մրանով անդամ երկրներին չի արգելվում համապատասխան միջոցներ ձեռնարկել հանցագործությունների համար մեղադրվող անձանց փնտրելու նպատակով՝ ազգային օրենսդրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և արդարադատության ու ոստիկանության ոլորտում միջազգային այլ համաձայնագրերի պահանջների համաձայն:

° í ñáá ³ Ū Ę áñÁáõñ
Û³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĩ áÛĊi »
Đ³ ÝÓÝ³ ñ ñ Ĩ ³ Ý Rec (2003) 9

Û³ Ę ³ ñ ñ»ñĊ Ĩ áÛĊi »Ċó` ³ Ý¹³ Ûá »i ááÁááóÝ»ñĊÝ

**ԹՎԱՅԻՆ ԻՆՏԱՐՃԱԿԻՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ
ՍՈՑԻԱԿԱԿԱՆ ԻՆՉԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՅՁՈՒՆԵՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԿ**

*(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից,
փոխնախարարների 840-րդ նիստում, 2003թ. մայիսի 28-ին)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալներն ու սկզբունքները պահպանելն ու իրագործելը և նրանց փոխանակման ու սոցիալական առաջընթացը խթանելն է,

նկարի ունենալով գաղափարների և կարծիքների բազմազանություն արտացոլող անկախ և ինքնավար մամուլի անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունների համար, ինչն ամրագրված է 1982թ. ապրիլի 29-ի Արտահայտվելու և փոխանակման ազատության վերաբերյալ հռչակագրով,

հիշարակելով ՁԼՄ-ների քաղաքականությանը նվիրված եվրոպական նախարարական 4-րդ կոնֆերանսում ընդունված պետական հեռարձակման ծառայությունների ապագայի վերաբերյալ թիվ 1 որոշումը (Պրագա, 1994թ. դեկտեմբերի 7-8), ինչպես նաև «Նեոարձակման հանրային ծառայությունների անկախության երաշխիքների վերաբերյալ» իր R (96) 10 հանձնարարականը,

ընդգծելով հեռարձակվող լրատվամիջոցների և մասնավորապես հեռարձակման հանրային ծառայությունների յուրահատուկ դերը ժողովրդավարական հասարակությունների քաղաքական, իրավական և սոցիալական կառույցների հիմքում ընկած արժեքների, մասնավորապես մարդու իրավունքների, մշակույթի և քաղաքական բազմակարծության պաշտպանության գործում,

նշելով, որ թվային տեխնոլոգիաների զարգացումը նոր հնարավորություններ է ընձեռում հաղորդակցության ոլորտում, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ տեխնոլոգիայի ոլորտի վրա,

հաշվի առնելով, որ անցումը թվային միջավայրին բազմաթիվ առավելությունների հետ մեկտեղ պարունակում է նաև որոշակի վտանգներ, և այն հնարավորինս արդյունավետորեն իրականացնելու համար պահանջվում է որոշակի պարտասպվածություն՝ ի շահ հասարակության, հեռարձակողների և տեխնոլոգիայի արտադրության,

նշելով, որ թվային միջավայրում ալիքների քանակի աճի հետ զուգահեռ շարունակվում է նաև խտրացումը մամուլի դաշտում, և հիշեցնելով «Լրատվամիջոցներում բազմակարծությանն աջակցելու միջոցների վերաբերյալ» R (99) 1 հանձնարարականում ամրագրված սկզբունքները, մասնավորապես մամուլի սեփականության կանոնների, քաղաքականության մարտնչության և մամուլի բովանդակության բազմազանության առնչությամբ,

ընդգծելով այն հնարավորությունները, որոնք ընձեռում է թվային հեռուստատեսությունը,

գիտակցելով թվային միջավայրում հասարակության շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, ներառյալ արտահայտվելու ազատության և փոփոխության մարտնչության, մամուլի բազմակարծության, մշակութային բազմազանության, անչափահասների և մարդկային արժանապատվության պաշտպանության և գաղտնիության սկզբունքները,

նշելով, որ անդամ երկրների կառավարությունները հատուկ պարտավորություններ ունեն այս առումով,

համոզված լինելով, որ նոր թվային միջավայրում պետք է պահպանվի հանրային հեռարձակման ծառայությունների միավորող գործոն լինելու յուրահատուկ դերը, որը ծրագրերի և ծառայությունների լայն ընդգրկություն է առաջարկում հասարակության բոլոր շերտերին,

նշելով, որ անդամ երկրները պետք է պահպանեն և անհրաժեշտության դեպքում ստեղծեն ֆինանսավորման ապահով համակարգ, որը հանրային հեռարձակման ծառայություններին կտրամադրի անհրաժեշտ միջոցները՝ նոր թվային միջավայրում անդամ երկրների կողմից նրանց վրա դրված պարտավորություններն իրականացնելու համար,

գիտակցելով, որ տեխնոլոգիական և շուկայական զարգացումներն իրենց հետ կարող են բերել ժողովրդավարական և սոցիալական դեֆիցիտ, և համաձայնելով, որ թվային միջավայրում պետք է հաստատվի որոշակի հավասարակշռություն փոփոխական շահերի և սոցիալական կարիքների միջև,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին, հաշվի առնելով հավելվածում նշված սկզբունքները՝

ա. սրեղծել համապատասխան իրավական և փնտրական պայմաններ թվային հեռարձակման զարգացման համար, որը հասարակությանը կերաշխավորի հեռարձակող ծառայությունների բազմակարծություն և որակյալ ծրագրերի լայն ընդգրկություն, ներառյալ անդրասահմանային ծառայությունների պահպանումը և հնարավորության դեպքում՝ դրանց ընդլայնումը,

բ. պաշտպանել և անհրաժեշտության դեպքում նաև միջոցառումներ ձեռնարկել լրատվամիջոցներում բազմակարծություն ապահովելու համար՝ այս ոլորտում աճող խտրումը հավասարակշռելու նպատակով,

գ. զգոն լինել՝ անչափահասների և մարդկային արժանապատվության պաշտպանությունը երաշխավորելու նպատակով և զգուշանալ բովանդակության բազմազանության լայն հնարավորություն ընձեռող թվային միջավայրում բռնությունների և սպերտության հրահրումից,

դ. հասարակությանը նախապատրաստել նոր թվային միջավայրի անցմանը՝ մասնավորապես խրախուսելով թվային սարքավորումներից և նոր ծառայություններից օգտվելու հմտությունների զարգացման նոր սխեմաների մշակումը,

ե. երաշխավորել, որպեսզի նոր թվային միջավայրում պահպանվեն հեռարձակման հանրային ծառայությունները՝ որպես ժողովրդավարական հասարակությունների միավորման կարևոր գործոն, ապահովելով հանրային հեռարձակման ծառայությունների ծրագրերի մատչելիությունը անհատների համար և գլոբալ թվային հեռարձակման անցնելու գործընթացում դրանց օժտելով կենտրոնական դերակատարմամբ,

զ. վերահաստատել հանրային հեռարձակման ծառայությունների իրավասությունները՝ անհրաժեշտության դեպքում հարմարեցնելով դրանք նոր թվային միջավայրին՝ համաձայն Եվրոպայի խորհրդի նախկին փորձերում ամրագրված հիմնական սկզբունքներին, միևնույն ժամանակ սրեղծել ֆինանսական, փոխհիմնական և մյուս անհրաժեշտ պայմանները՝ ապահովելու նրանց իրավասությունների ամենաարդյունավետ իրագործումը,

է. այս հանձնարարականի հավելվածում պարունակվող հիմնական սկզբունքները ներկայացնել պետական իշխանության մարմինների և շահագրգիռ մասնագիտական շրջանակների ուշադրությանը, և պարբերաբար գնահատել այս սկզբունքների իրագործման արդյունավետությունը:

Թվային հեռարձակման հիմնական սկզբունքներ

Ընդհանուր սկզբունքներ

1. Նկատելով, որ փոխնյութիական առումով թվային հեռարձակման զարգացումն այլևս անխուսափելի է, ցանկալի կլինեն, որպեսզի մինչև թվային միջավայրին անցնելը, անդամ երկրները, շահագրգիռ արտադրությունների և հասարակության հետ խորհրդակցություններով մշակեն այդ անցման արդյունավետությունը երաշխավորող ռազմավարություն՝ շեշտելով դրա առավելությունները և նվազագույնի հասցնելով բոլոր հնարավոր բացասական հետևանքները:

2. Այդ ռազմավարությունը, որը հարկապես անհրաժեշտ է գլոբալ թվային հեռուստատեսության համար, պետք է ապահովի օպերատորների միջև համագործակցությունը, դեկոդերների փոխկապակցվածությունը, բովանդակության բազմազանությունը՝ ներառյալ եթերային ազատ ռադիոյի և հեռուստատեսության ծառայությունները, և թվային փոխնյութիականների ընձեռած հնարավորությունների ամենալայն օգտագործումը:

3. Հաշվի առնելով թվային հեռարձակման բարձր սակագները՝ անդամ երկրները պետք է ապահովեն արագ անցում թվային հեռարձակման միևնույն ժամանակ երաշխավորելով հասարակության և հեռարձակողների շահերի պաշտպանությունը: Այս առումով, պետք է ապահովվեն համապատասխան իրավական դաշտ և բարենպաստ փնտրական և փոխհիմնական պայմաններ:

4. Թվային հեռարձակման արտոնագրեր փորձադրելիս իրավասու իշխանությունները պետք է երաշխավորեն առաջարկվող ծառայությունների բազմազանությունը և խրախուսեն փորձաշրջանային/փորձական ծառայությունների սրեղծումը, որոնք կարողարացնեն հասարակության ակնկալիքները:

1. Անցում թվային միջավայրի. հասարակություն

1.1 Ապահով անցում թվային հեռարձակման

5. Հասարակությանը բազմազան ծրագրերով ապահովելու նպատակով անդամ երկրները պետք է ապահովեն ընդունիչ, ապակողմորման և փորձառող սարքավորումների փոխկապակցված աշխատանքը և թվային հեռարձակման և հարակից ծառայությունների մատչելիությունը:

6. Հաշվի առնելով, որ սպառողների կողմից թվային հեռարձակման անցումը պահանջում է նոր սարքավորումների ձեռքբերում, ինչը ենթադր-

րում է չնախաբեւաւած ծախսեր, եւ նյութական խտրականության ցանկացած արտահայտությունից ու սոցիալական խավերի միջև «թվային բաժանման» վրանգից խուսափելու նպատակով անդամ երկրները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նման սարքավորումների արժեքի նվազեցման հնարավորություններին:

7. Թվային միջավայրին անցնելու ժամկետներն արագացնելու նպատակով անդամ երկրները պետք է հնարավորինս դյուրին դարձնեն այդ անցումը հասարակության համար: Օրինակ, նրանք կարող են խրախուսել ապակողովորման բազմազան համակարգերի ստեղծումը՝ ներառյալ հիմնական ապակողովորման սարքավորումները, որոնք հնարավորություն են տալիս ունենալ ծառայությունների նվազագույն ցանկ:

8. Լրարվամիջոցների վերաբերյալ գրագիտությունը առանցքային գործոն է՝ հասարակության «թվային բաժանման» վրանգները նվազեցնելու առումով: Այդպիսով, հասարակությունը պետք է ապահովված լինի լրարվամիջոցների մասին ընդգրկուն տեղեկատվությամբ: Մեկ այլ կարևորագույն միջոցառում է թվային սարքավորումների եւ նոր ծառայությունների օգտագործման վերաբերյալ հասարակության վերապարտաստումը: Մասնավորապես, հասարակության մեծահասակ եւ պակաս հմտություններ ունեցող խավերին պետք է գիտելիքներ տրամադրվեն թվային տեխնոլոգիաների կիրառության վերաբերյալ: Բոլոր այս միջոցառումները պետք է իրականացվեն անդամ երկրների, հեռարձակողների, կարգավորիչ մարմինների եւ այլ պետական ու մասնավոր հասարակությունների կողմից, ովքեր շահագրգռված են թվային հեռարձակման անցմամբ:

9. Անչափահասների եւ մարդկային արժանապատվության պաշտպանությունը, ծասիստական եւ կրոնական հիմքերի վրա բռնությունների ու արելության հրահրման կանխարգելումը, ինչպես նաև տեղեկատվության անաչառությունը եւ սպառողների պաշտպանությունը պետք է հատուկ ուշադրության արժանան թվային միջավայրում:

10. Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, որպեսզի հեռարձակման ծառայությունների բովանդակությունը մարզելի լինի լսողության եւ տեսողության խանգարումներով անձանց համար:

11. Անդամ երկրները պետք է երաշխավորեն թվային միջավայրում անհատների գաղտնիության իրավունքի պաշտպանությունը՝ մասնավորապես արգելելով հեռարձակման եւ հարակից ծառայությունների օգտագործման միջոցով սրացված անձնական տվյալների օգտագործումը:

1.2. Թվային միջավայրում կողմնորոշվելը

12. Թվային միջավայրում կողմնորոշվելու հարցում հասարակությանն օգնելու նպատակով անդամ երկրները պետք է խրախուսեն հեռարձակողներին՝ իրենց ծառայություններում ապահովելու տեղեկություններ էլեկտրոնային ծրագրերի ուղեցույցների (ԷԾՈՒԲ) համար, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրելու տեղադրվելիք ծրագրերի եւ ծառայությունների վերաբերյալ: Նեոստարտապիները պետք է ապահովվեն այն հիմնական տեղեկություններով, որոնք անհրաժեշտ կլինեն նրանց՝ թվային տեխնոլոգիաներով իրենց տրամադրվող ամենարագմագան ծրագրերի եւ ալիքների միջև ընտրություն կատարելու համար:

13. Առանց կանխորոշելու հեռարձակողների կողմից տրամադրվող ԷԾՈՒԲ-ները իրենց ծրագրային առաջարկները ներկայացնելու համար, ԷԾՈՒԲ տրամադրողները առանց խտրականության, տրամաբանական եւ անաչառ սկզբունքով, բոլոր ծառայություններ տրամադրողներին պետք է առաջարկեն ԷԾՈՒԲ տարածք: Այնուամենայնիվ, պետական ալիքները պետք է ավելի մարզելի լինեն: ԷԾՈՒԲ տրամադրողները պետք է առաջարկեն նաև ծրագրային ծառայությունների հստակ դասակարգում՝ նյութերի, բովանդակության եւ այլնի հիման վրա:

14. ԷԾՈՒԲ-ները եւ թվային ապակողովորող սարքերը պետք է հարմար լինեն սպառողների համար: Նախուկ ուշադրություն պետք է դարձվի հաշմանդամների եւ օտար լեզուների չտիրապետողների կարիքներին: ԷԾՈՒԲ օգտագործումը որպես գովազդի միջոց չպետք է վնասի ոչ դրանց գործառնություններին եւ ոչ էլ ծրագրերի ամբողջականությանը:

2. Անցում թվային միջավայրի. հեռարձակողներ

2.1. Ընդհանուր սկզբունքներ

15. Ներհասկալի եւ հարակից իրավունքների վերաբերյալ իրենց քաղաքականությունը մշակելիս անդամ երկրները պետք է երաշխավորեն, որպեսզի դրանով հավասարակշռություն հաստատվի մի կողմից իրավունքներ կրողների պաշտպանության եւ մյուս կողմից տեղեկատվության մարզելիության, ինչպես նաև պաշտպանվող ստեղծագործությունների շրջանառության միջև:

16. Նեոստարտապիներին, պլարֆորմներին օպերատորների եւ ծառայություններ տրամադրողների տնտեսական շահերը նույնպես պետք է հաշվի առնվեն թվային միջավայրում հեղինակային իրավունքների խախտման դեմ պայքարի համընդհանուր քաղաքականության համարաբար, մասնավորապես, պայմանական մուրքի վրա հիմնված կամ դրանից կազմված ծառայությունների իրավական պաշտպանության միջոցառումներով:

17. Մուտքը ազգային, նույնիսկ փարաձաշրջանային հեռարձակման բազմաթիվ ծառայություններ խիստ հարմար կլինի արտասահմանում ապրող, աշխատող կամ ճանապահորդող մարդկանց համար և կնպաստի փոփոխության ազատ հոսքին և մշակույթների միջև փոխըմբռնման հաստատմանը: Նաշվի առնելով Եվրոպայում մարդկանց աճող շարժունակությունը և եվրոպական ինֆրագրագիայի խորացումը, թվային միջավայրում խիստ կարևոր է դառնում ազատ եթերային ծառայությունների և անդրսահմանային տեսաձայնային ծառայությունների պահպանումը և հնարավորության դեպքում նաև դրանց ընդլայնումը:

18. Նաշվի առնելով, որ թվայնացումը նպաստում է հեռարձակման ոլորտում խորացման գործընթացներին, անդամ երկրները պետք է պահպանեն այն կանոնակարգերը, որոնք սահմանափակում են լրատվամիջոցների կենտրոնացումը, ինչպես նաև/կամ բոլոր այն միջոցառումները, որոնք նրանք հարկ կհամարեն կիրառել՝ ապահովելու բազմակարծությունը և միևնույն ժամանակ ամրապնդելու հեռարձակման հանրային ծառայությունները՝ որպես մասնավոր լրատվամիջոցների դաշտում խրատումը հակակշռող գործոն:

2.2. Հանրային հեռարձակման ծառայությունների ոլորտում կիրառվելիք սկզբունքները

ա. Նեոարձակման հանրային ծառայությունների գործունեության շրջանակները

19. Թվային տեխնոլոգիաների հետ կապված մարտահրավերներին ի պատասխան, հեռարձակման հանրային ծառայությունները, ներառյալ այն ընդհանուր ծառայությունը, որն առաջարկում է նորություններ, կրթական, մշակութային և գվարճալի ծրագրեր՝ ուղղված հասարակության փոքր շերտերին, պետք է հետևեն իրենց սոցիալական կոչմանը: Անդամ երկրները պետք է սրբազան համապատասխան ֆինանսական, տեխնիկական և այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են հանրային հեռարձակողներին՝ նոր թվային միջավայրին հարմարվելիս իրենց պարավորությունները իրականացնելու համար: Այս առումով, այդ միջոցառումների շարքում կարող են լինել՝ նոր մասնագիտացված ալիքների սրբազան, օրինակ, տեղեկատվության, կրթության և մշակույթի բնագավառում, և նոր ինֆրակառուցված ծառայությունների սրբազան, օրինակ, ԷՇՈՒԲ և ծրագրերի հետ կապված օն-լայն ծառայություններ: Հանրային հեռարձակման ծառայությունները պետք է կենտրոնական դեր խաղան համընդհանուր թվային հեռարձակման անցնելու գործընթացում:

բ. Հանրային հեռարձակման ծառայության համընդհանուր մարզելիություն

20. Համընդհանրության սկզբունքը առանցքային կարևորություն է ձեռք բերում թվային ժամանակաշրջանում հանրային հեռարձակման ծառայությունների զարգացման համար: Անդամ երկրները, այդպիսով, պետք է երաշխավորեն իրավական, տնտեսական և տեխնիկական բոլոր պայմանների սրբազան, որպեսզի հանրային հեռարձակման ծառայությունները ներկա լինեն փոքր թվային պլատֆորմներում (կարելային, արբանյակային, համընդհանուր) որակյալ ծրագրերով և ծառայություններով, որոնք կնպաստեն հասարակության միավորմանը՝ մասնավորապես հաշվի առնելով առաջարկվող ծրագրերի բազմազանության և մասնագիտացվածության արդյունքում լսարանի մասնավորվածության վրանգը:

21. Այս կապակցությամբ, նկատի ունենալով թվային պլատֆորմների բազմազանությունը, հարկադիր օրենք պետք է մտցվի հանրային հեռարձակման ծառայությունների համար՝ երաշխավորելու նրանց ծառայությունների և ծրագրերի մարզելիությունը այդ պլատֆորմների միջոցով:

գ. Նեոարձակման հանրային ծառայությունների ֆինանսավորումը

22. Նոր տեխնոլոգիական համատեքստում առանց ապահով և համապատասխան ֆինանսավորման կարող են նվազել հանրային հեռարձակման ծառայությունների ծավալները և հասարակության համար դրանց անհրաժեշտությունը: Ծրագրերի գնման, արտադրության և հավաքման, երբեմն նաև՝ հեռարձակման բարձր սակագները նկատի ունենալով՝ անդամ երկրները հանրային հեռարձակման ծառայություններին պետք է հնարավորություն ընձեռեն օգտվելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներից՝ իրենց կոչումն իրականացնելու համար:

° í ãã ³ Ը Ե անՆաժ
Ս³ Ե ³ Թ Կ՝ՐՇԻ ԳՍՁ՝»
ԵՅ ԿՕԿ³ Թ Թ Ի ³ Կ Rec (2003)13

Ս³ Ե ³ Թ Կ՝ՐՇԻ ԳՍՁ՝»Շօ՝ ³ Կ¹³ Ս օ »i օձԱնձԿ՝ՐՇԿ

Լրարվամիջոցներով քրեական դատարարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, փոխնախարարների 848-րդ նիստում 2003 թվականի հուլիսի 10-ին)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15ր հոդվածի համաձայն՝

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքների և իդեալների պահպանումն ու իրագործումն է,

հիշելով, որ անդամ երկները հավաքարիմ են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 10 հոդվածում ամրագրված արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքին, որը ժողովրդավարական հասարակության կարևորագույն հիմնաքարերից և դրա առաջընթացի ու յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է,

հաշվի առնելով, որ համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքի, լրարվամիջոցներն իրավունք և մասնագիտական պարտավորություն ունեն հանրությանը տեղեկատվություն, այդ թվում նաև հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն հաղորդել,

հաշվի առնելով, որ անմեղության կանխավարկածի, արդար դատարարության և ընտանիքի ու մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքները համաձայն Կոնվենցիայի 6 և 8 հոդվածների հանդիսանում են հիմնարար պահանջներ, որոնք պետք է հարգվեն ցանկացած ժողովրդավարական հասարակությունում,

շեշտելով լրարվամիջոցների կողմից հանրությանը քրեական դատարարությունների վերաբերյալ տեղեկություն հաղորդելու, քրեական ի-

րավունքի զսպող ֆունկցիան տեսանելի դարձնելու, ինչպես նաև քրեական դատարարության համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն ապահովելու կարևորությունը,

հաշվի առնելով Կոնվենցիայի 6, 8 և 10 հոդվածներով պաշտպանվող իրավունքների հնարավոր բխումը և յուրաքանչյուր անհատական գործի փաստերից ելնելով այդ իրավունքների միջև հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությունը, և զննատեղում Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկող դերը,

այնուհետև, հաշվի առնելով Կոնվենցիայի 11 հոդվածով նախատեսված միավորումներ կազմելու իրավունքի համաձայն լրագրողների և լրարվամիջոցների մասնագիտական միավորումներ կազմավորելու իրավունքը, որը լրարվամիջոցների ինքնակարգավորման հիմքն է,

տեղյակ լինելով ինքնակարգավորման միջոցով կամ կարգավորման ուղղությամբ պետության հետ համագործակցելով լրագրությունը Եվրոպայում զարգացնելու լրագրողների և լրարվամիջոցների բազմաթիվ նախաձեռնություններին,

ցանկանալով խնդրո առարկա իրավունքների վերաբերյալ իրագրել երկխոսություն ծավալել լրարվամիջոցների կողմից քրեական գործերի լուսարանման համատեքստում, և Եվրոպայում ակտիվ գործընթաց արմատավորել ապահովելով քրեական գործերի մատչելիությունը լրարվամիջոցների համար,

հիշելով իր (74)26 Բանաձևը պատասխանի իրավունքի վերաբերյալ, «Քրեական իրավունքի և վարույթի շրջանակներում փոփոխ կարգավիճակի վերաբերյալ» R(85)11 հանձնարարականը, «Վկաներին սպառնալու և նրանց պաշտպանության իրավունքի վերաբերյալ» R (97)13 հանձնարարականը, «Լրարվամիջոցների և հանդուրժողականության կոլտորայի զարգացման վերաբերյալ» R(97)21 հանձնարարականը ,

շեշտելով քրեական վարույթի համատեքստում լրագրողի աղբյուրի գաղտնիության պաշտպանության անհրաժեշտությունը, որի հիմքում ընկած է «Տեղեկատվության աղբյուրները չբացահայտելու լրագրողների իրավունքի վերաբերյալ» R (2000)7 հանձնարարականը,

նկատելով լրագրողական ազատության և մարդու իրավունքների առընթացությամբ 2 Բանաձևը, որն ընդունվել է ՉԼՄ-ների ռազմավարության վերաբերյալ 4-րդ Եվրոպական նախարարական համաժողովում (Պրագա, դեկտեմբեր 1994) , ինչպես նաև լրարվամիջոցների վաղվա օրվա ռազմավարության վերաբերյալ հայտարարագիրը, որն ընդունվել է լրարվամիջոցների ռազմավարությանը նվիրված Եվրոպական նախարարների 6-րդ համաժողովում (Կրակով, հունիս 2000),

նշելով, որ սույն հանձնարարականը միտում չունի սահմանափակել

անդամ երկրներում արդեն իսկ գործող այն չափանիշները, որոնք կոչված են պաշտպանելու արտահայտվելու իրավունքը,

առաջարկում է անդամ երկրների կառավարություններին, հաշվի առնելով ազգային իրավական համակարգերի միջև առկա տարբերությունները, բրեւական վարույթի ոլորտում.

1. Ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ իրենց սահմանադրական դրույթների շրջանակներում ձեռնարկել կամ կիրառել բոլոր միջոցները, որոնք ըստ իրենց անհրաժեշտ են այս հանձնարարականի սկզբունքները իրագործելու ուղղությամբ.

2. լայնորեն փարածել այս հանձնարարականը և դրա հավելվածում նշված սկզբունքները, անհրաժեշտության դեպքում թարգմանությամբ, և՛

3. ներկայացնել հանձնարարականը հարկապես դատական և իրավապահ մարմինների ուշադրությանը, ինչպես նաև դրանք մատչելի դարձնել իրավաբանների ներկայացուցչական մարմիններին և լրացված միջոցների ներկայացուցիչների համար:

REC (2003) 13 ՆՅ ԿՕՄՅ Թ Թ 1 3 ԿՇ ՆՅ 1 »Ե 3 1

Քրեական գործերով դատավարությունների մասին լրացված միջոցներով փրկելիավորություն հաղորդելու սկզբունքները

Սկզբունք 1.

Նանրության իրազեկում լրացված միջոցներով

Նանրությունը պետք է հնարավորություն ունենա լրացված միջոցներով փրկելիավորություն ստանալ դատական և իրավապահ մարմինների գործունեության մասին: Ըստ այդմ, լրացողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն լուսարանելու և մեկնաբանելու քրեական դատավարության գործընթացը՝ ենթարկվելով միայն ներքինիշյալ սկզբունքներով նախատեսված սահմանափակումներին.

Սկզբունք 2.

Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անբաժանելի մասն է: Ներուարար, ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ լրացված միջոցների կողմից կարծիքներ ու փրկելիավորություն կարող է փարածվել կամ հաղորդվել միայն այն դեպքում, եթե դա չի վրանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը:

Սկզբունք 3.

Տեղեկավորության հավաստիություն

Դատական և իրավապահ մարմինները լրացված միջոցներին պետք է մատուցեն միայն ճշգրտված փրկելիություն կամ այնպիսի փրկելիություն, որը հիմնված է խելամիտ ենթադրությունների վրա: Վերջինիս դեպքում այդ մասին պետք է հստակորեն փրկյալ պահվի լրացված միջոցներին:

Սկզբունք 4.

Տեղեկավորության մատչելիություն

Եթե լրացողները դատական և իրավապահ մարմիններից օրինական ճանապարհով փրկելիություն են ձեռք բերել ընթացքի մեջ գտնվող քրեական գործի վերաբերյալ, այդ մարմինները պետք է առանց խտրականության նույն փրկելիավորությունը հասանելի դարձնեն բոլոր այն լրացողների համար, որոնք նույն փրկելիավորության համար արդեն դիմել են կամ դիմում են:

Սկզբունք 5.

Լրացված միջոցներին փրկելիավորություն փրամադրելու եղանակները

Երբ դատական և իրավապահ մարմինները իրենք են որոշել ընթացքի մեջ գտնվող քրեական գործի վերաբերյալ փրկելիավորություն փրամադրել լրացված միջոցներին, ապա այդպիսի փրկելիավորությունը պետք է փրամադրվի առանց խտրականության և, հնարավորության դեպքում, նման փրկելիավորությունը պետք է փրամադրվի մամուլի թողարկումների (պրես ռեիլիզ), մամլո ասուլիսների, լիագործված պաշտոնյայի հայտարարության կամ համանման այլ միջոցներով:

Սկզբունք 6.

Քրեական դատավարության ընթացքում կանոնավոր փրկելիացումը

Նանրային հետաքրքրություն ներկայացնող կամ հանրության հատուկ ուշադրությանն արժանացած քրեական գործերի համարեքստում դատական և իրավապահ մարմինները պետք է լրացված միջոցներին փրկյալ պահեն իրենց կողմից կատարված էական գործողությունների մասին այնքանով, որքանով դա չի վնասի քննության գաղտնիությանը, չի դանդաղեցնի կամ խանգարի քննության ելքը: Երկար ժամանակ ըն-

թացող քրեական դատաքննությունների վերաբերյալ այդպիսի տեղեկատվություն պետք է տրվի պարբերաբար:

Սկզբունք 7.

Տեղեկատվության շահագործման արգելք

Դատական և իրավապահ մարմինները չպետք է ընթացքի մեջ գտնվող քրեական գործով դատաքննության վերաբերյալ տեղեկատվությունը օգտագործեն առևտրային կամ օրենքի կիրառման հետ չառնչվող այլ նպատակներով:

Սկզբունք 8.

Մասնավոր կյանքի պաշտպանությունը ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի համապետություն

Կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվության մատուցումը պետք է կատարվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության նկատմամբ հարգանքի դրսևորմամբ: Նախուկ պաշտպանվածություն պետք է փրամադրվի անչափահասներին կամ այլ խոցելի անձանց, ինչպես նաև տուժողներին, վկաներին և կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտյալների ընտանիքներին: Բոլոր գործերում պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վրանգավոր հետևանքներին, որոնց կարող են ենթարկվել այս սկզբունքում հիշատակված անձինք՝ տեղեկատվության բացահայտման հետևանքով իրենց ինքնության հրապարակայնության դեպքում:

Սկզբունք 9.

Ուղղում պահանջելու կամ պարասխանելու իրավունք

Անկախ այլ միջոցների առկայությունից, ցանկացած ոք, ում հասցեին քրեական դատավարության համապետություն ոչ հավաստի կամ զրպարտող նյութ է հրապարակվել լրատվամիջոցներում, պետք է ունենա ուղղում պահանջելու կամ պարասխանելու իրավունք՝ ելնելով հանգամանքներից: Ուղղում պահանջելու իրավունքը պետք է փրամադրվի նաև մասնույի այն հաղորդագրությունների առնչությամբ, որոնք դատական կամ իրավապահ մարմինների կողմից տրված ոչ ճշգրիտ տեղեկատվության արդյունք են:

Սկզբունք 10.

Դատաքննության ընթացքի վրա վնասակար ազդեցության կանխումը

Քրեական դատավարության համապետություն, մասնավորապես այն գործերում, որտեղ մասնակցում են երդվյալներ կամ արեւնակալներ, դատական և իրավապահ մարմինները պետք է ձեռնպահ մնան այնպիսի տեղեկատվության հրապարակումից, որը կարող է ապես ազդել արդար դատաքննության ընթացքի վրա:

Սկզբունք 11.

Մինչդատավարական փուլի վերաբերյալ տեղեկատվություն

Եթե մեղադրյալը կարող է ապացուցել, որ տեղեկատվության փրամադրումը կարող է ամենայն հավանականությամբ հանգեցնել կամ խախտել արդար դատավարության իր իրավունքը, ապա նրան պետք է փրամադրվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

Սկզբունք 12.

Լրագրողների ներկայությունը դատաքննությանը

Լրագրողներին առանց խտրականության և առանց նախնական հավարամագրի պահանջի պետք է թույլատրվի ներկա լինել բաց դատական լսումներին և դատավճիռների հրապարակային ընթերցմանը: Նրանք չպետք է հետացվեն դատական նիստերի դահլիճից, բացառությամբ կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Սկզբունք 13.

Դատական նիստերի դահլիճների մաքսելիությունը լրագրողների համար

Նամապարասխան պաշտոնյաները (բացառությամբ՝ եթե դա միանգամայն անհնարին է իրագործել) պետք է դատական նիստերի դահլիճներում անհրաժեշտ քանակով նստափոխվեն փրամադրեն լրագրողներին համապարասխան պահանջի դեպքում՝ առանց դրանով սահմանափակելու հանրության ներկայությունը:

Սկզբունք 14.

Դատական նիստերի նկարահանում և ուղիղ հեռարձակում դատական նիստերի դահլիճից

Ուղիղ հեռարձակումը և նկարահանումը լրացվածիջոցների կողմից դատական նիստերի դահլիճներում չպետք է թուլաբերվի, բացառությամբ այն դեպքերից, երբ դա բացահայտորեն թուլաբերված է օրենքով կամ համապատասխան պաշտոնյաների կողմից: Տեղեկատվության մատուցման այս եղանակը չպետք է թուլաբերվի միայն այն դեպքերում, երբ դա բուժողների, վկաների, քրեական դատավարության մասնակից կողմների, երդվյալների կամ դատավորների վրա անցանկալի ազդեցության լուրջ վտանգ է ներկայացնում:

Սկզբունք 15.

Լրացվածիջոցների կողմից տեղեկատվություն փրամադրելուն աջակցելը

Դատական նիստերի համար նշանակված օրերի, մեղադրական եզրակացությունների կամ առաջադրված մեղադրանքի մասին հայտարարությունները և իրավական բնույթի այլ տեղեկատվությունը լրացրողներին պետք է փրամադրվեն համապատասխան իշխանություններին ուղղված սովորական դիմումի հիման վրա և ճիշտ ժամանակին. բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացարձակապես անհնարին է: Լրացրողներին առանց խորականության պետք է թուլաբերվի ստանալ կամ պատրաստել հրապարակված դատավճիռների կրկնօրինակները: Նրանք պետք է հնարավորություն ունենան այդ դատավճիռները փարածել կամ այլ կերպ դրանք հանրությանը հասցնել:

Սկզբունք 16.

Վկաների պաշտպանություն

Վկաների ինքնությունը չպետք է հրապարակայնացվի, բացառությամբ այն դեպքերի, երբ վկան նախապես փվել է իր համաձայնությունը, վկայի անձի հրապարակայնացումը հանրային կարևորություն ունի կամ երբ վերջինս արդեն իսկ վկայություն է փվել հրապարակայնորեն: Վկաների անձը/ինքնությունը երբեք չպետք է հրապարակայնացվի, եթե դա վտանգում է նրանց կյանքը կամ անվտանգությունը: Պատշաճ կարևորություն պետք է փրվի վկաների պաշտպանության ծրագրերին հարկապես կազմակերպված հանցագործության դեմ փարվող կամ ընտանիքի ներսում կատարված հանցագործությանն առնչվող քրեական դատավարությունում:

ատավարությունում:

Սկզբունք 17.

Դատական որոշումների կատարման վերաբերյալ լրացվություն ՋԼՄ-ներում

Լրացրողներին պետք է թուլաբերվի կապի մեջ լինել բաներում իրենց դատապարտման ժամկետն անցկացնող անձանց հետ, եթե դա չի վնասի արդարադատության պատշաճ իրականացմանը, բանարկյալների, բաներում ծառայողների/աշխատողների իրավունքները, բաների ընդհանուր անվտանգությունը:

Սկզբունք 18.

Ազատագրված ժամկետի ավարտից հետո ՋԼՄ-ների կողմից լուսարանում

Որպեսզի չխաթարվի նախկին ազատագրվածի նորովի ինտեգրումը հասարակության մեջ, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը պետք է փարածվի նաև նախկինում դատված անձանց ինքնության հրապարակայնացան վրա՝ ազատագրված ժամկետի ավարտից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններն անձամբ բացահայտորեն համաձայնություն են փվել դրա համար, նրանք և իրենց նախկին դատվածությունը հանրային հետաքրքրության առարկա են կամ կրկին դարձել են հանրային հետաքրքրության առարկա:

Զանգվածային լրատվության միջոցներով քրեական դատախազությունների մասին փրկական լրատվություն հատուկ լրատվության վերաբերյալ Rec(2003) 13 հանձնարարականի

I. Ներածություն

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (որն այսուհետ անվանվում է «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա» կամ «ՄԻԵԿ») երաշխավորվում է խոսքի և փրկական լրատվության ազատությունը (հոդված 10), անմեղության կանխավարկածի և անկողմնակալ դատական քննության իրավունքը (հոդված 6) և անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը (հոդված 8):

2. Դատախազությունների և, մասնավորապես, քրեական դատախազությունների հետ կապված փրկական լրատվության փրամադրումը համապատասխանում է հանրությանը հույսերի, ներառյալ՝ արդարադատության իրականացման վերաբերյալ փրկական լրատվության իրավունքին: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատախազության իրավունքը ներառում է դատաքննության հրապարակայնությունը և դատական որոշումների հրապարակային հայտարարումը: Հանրության իրազեկումը կարող է ապահովվել զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ: Մակայն 6-րդ հոդվածը թույլ է տալիս նաև հանրության և զանգվածային լրատվության միջոցների ներկայության արգելումը դատախազության ամողջ ընթացքում կամ դրա առանձին փուլերում՝ հենց նույն 6-րդ հոդվածում հիշատակված սահմանափակ թվով գործերով: Զանգվածային լրատվության միջոցների ներկայության արգելումը պետք է նաև համապատասխանի ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի՝ խոսքի և փրկական լրատվության ազատության ներքին սահմանափակումներին: Դատախազության ընթացքում մասնավոր բնույթի փրկական լրատվություն բացահայտելու դեպքում, ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածին համապատասխան, կարող է պահանջվել այդ փրկական լրատվության գաղտնիության պաշտպանություն:

3. Մի շարք անդամ պետություններում զանգվածային լրատվության միջոցների և դատախազության հետ կապված աչքի ընկնող դեպքերը գրավել են հանրության ուշադրությունը և բանավեճ առաջացրել այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են քննության գաղտնիությունը, զանգվածա-

յին լրատվության միջոցներով վկանների և դատախազների վրա ազդեցություն գործելը, դատական նիստերի դադարեցումը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ներկայությունը, ինչպես նաև դատական նիստերի փրկական լրատվությունը:

4. Այդ ֆունի վրա 1996 թ.-ին Զանգվածային լրատվության միջոցների կանոնակարգի մշակման հանձնաժողովը (CDMM) քրեական դատախազությունների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով հատուկ լրատվությունների հարցը որակելով որպես բոլոր անդամ պետությունների ընդհանուր հետաքրքրության առարկա, առաջարկեց ստեղծել Զանգվածային լրատվության միջոցների իրավունքի և մարդու իրավունքների մասնագետների խումբ (MM-S-HR)՝ մինչև քրեական դատախազությունը, դրա ընթացքում և դրանից հետո զանգվածային լրատվության միջոցների ազատության, ինչպես նաև անհատի այլ հիմնարար իրավունքների պաշտպանության ընդհանուր սկզբունքների մշակման նպատակով: Ազգային օրենսդրությունների և պրակտիկաների, ինչպես նաև Մարդու իրավունքների մասին եվրոպական դատարանի՝ համապատասխան նախադեպային իրավունքի վերլուծությունից հետո MM-S-HR-ը պատրաստեց զանգվածային լրատվության միջոցներով քրեական դատախազությունների վերաբերյալ փրկական լրատվության մատուցման մասին Հանձնարարականի նախագիծ, որը լրամշակվել է Կանոնակարգի մշակման հանձնաժողովի և դրա Խոսքի ազատության և այլ հիմնարար իրավունքների մասնագետների խմբի (MM-S-FR) կողմից 2003 թ.-ին:

5. Rec(2003)13 հանձնարարականն ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից 2003 թ.-ի հուլիսի 10-ին փոխնախարարների 848-րդ նիստում:

II. Ընդհանուր մեկնարանություն

6. Հանձնարարականն ուղղված է անդամ պետությունների կառավարություններին, հետևաբար և դրանց պետական մարմիններին, ներառյալ՝ դատախազները: Նախարարների կոմիտեի ցանկացած հանձնարարական՝ քաղաքական պարտավորություն ամրագրող փաստաթուղթ է և ոչ թե՛ իրավաբանորեն կիրառելի ակտ: Նախարարների կոմիտեի կողմից դրա ընդունմամբ՝ այն պարտավորություններ է ստեղծում բոլոր անդամ պետությունների համար:

7. Հանձնարարականը նպատակ չունի ուղղակիորեն դիմել մասնավոր հարվածին և մասնավորապես՝ զանգվածային լրատվության միջոցներին կամ լրագրողներին: Կախված իրենց յուրահատուկ հանգամանքներից և իրավական ավանդույթներից՝ անդամ պետություններն իրենց հայեցողությամբ կարող են ձեռնարկել այնպիսի միջոցներ, ինչպիսիք քրեական դատախազությունների կապակցությամբ հարմար են հա-

մարում՝ յուրաքանչյուրի իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով, ինչպես դա նկարագրված է հանձնարարականում:

8. Հանձնարարականով սահմանվում են ղեկավար սկզբունքներ պետական մարմինների համար՝ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներից ելնելով: Հանձնարարականը նպատակ չունի փոփոխելու այդ դրույթները, ինչպես նաև Կոնվենցիային համապատասխան՝ անդամ պետությունների պարտականությունները: Բացի այդ, այն նպատակ չունի սահմանափակելու խոսքի ազատությունը պաշտպանելու ուղղված՝ անդամ պետություններում արդեն իսկ գործող չափորոշիչները:

9. Հանձնարարականի նախաբանում վկայակոչվում են հարցի հետ կապված որոշ հանձնարարականներ և մեկ որոշում: Պարասխանի իրավունքի մասին (74) 26 որոշմամբ անդամ պետություններին հանձնարարվում է ճանաչել պարասխանի և հերքման իրավունքը այն դեպքերում, երբ զանգվածային լրատվության միջոցների հաղորդագրությունները եղել են սխալ կամ այլ կերպ խախտել են անհատների իրավունքները: Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում փոփոխի դրության մասին R (85)11 հանձնարարականը բովանդակում է պահանջ, որ «հանցագործությունների նախնական քննության և դատական քննության հետ կապված՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի քաղաքականությամբ պետք է պարզաճ ուշադրության արժանացվի ցանկացած այնպիսի հրապարակայնությունից փոփոխի պաշտպանելու պահանջը, որը անպարզաճ ազդեցություն կունենա նրա մասնավոր կյանքի կամ արժանապատվության համար: Եթե հանցանքի տեսակը կամ փոփոխի առանձնահատուկ կարգավիճակը կամ անձնական իրավիճակը և անվտանգությունը անհրաժեշտ են դարձնում այդպիսի պաշտպանությունը, ապա կամ դատաքննությունը՝ մինչև դատավճռի կայացումը պետք է վարվի դժնփակ, կամ մասնավոր տեղեկատվության բացահայտումը կամ հրապարակումը պետք է արգելվի՝ ինչ չափով որ դա անհրաժեշտ է»: Վկաների ահաբեկումը բացառելու և պաշտպանության իրավունքի մասին R(97)13 հանձնարարականով անդամ պետություններին հանձնարարվում է ձեռնարկել համապատասխան օրենսդրական և գործնական միջոցներ՝ երաշխավորելու համար վկաների՝ ազատորեն և առանց սպառնալիքների ենթարկվելու ցուցմունք փայլ: Կազմակերպված հանցագործության համարեքստում, պետք է ընդունվի որոշում՝ դատավարության ամողջ ընթացքում կամ դրա առանձին փուլերում զանգվածային լրատվության միջոցների և (կամ) հասարակայնության ներկայությունն արգելելու մասին: Վերջապես, հանդուրժողականության կուլտուրային վերաբերող R (97) 21 հանձնարարականը բովանդակում է՝ առանց էթնիկական անհանդուրժողականության դրդելու զանգվածային լրատվության սկզբունքներ:

10. Լրագրողների տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան, MM-S-FR-ի կողմից մշակվել է՝ իրենց տեղեկատվության աղբյուրները չբացահայտելու՝ լրագրողների իրավունքին վերաբերող R (2000) 7 հանձնարարական, որն ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից 2000 թ.-ի մարտի 8-ին: Չնայած այս հանձնարարականի հիմնական շեշտը դրվում է քրեական դատավարությունների մասին լրատվություն տարածելու՝ զանգվածային լրատվության միջոցների իրավունքի վրա, MM-S-FR-ը զգացել է, որ R (2000) 7 հանձնարարականը պետք է հիշատակվի համարեքստում, քանի որ քրեական դատավարությունների մասին հաղորդագրություններ պարաստող լրագրողները կարող էին նաև տարածել գաղտնի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն, նման դեպքերում այդ աղբյուրները ընդհանուր առմամբ կպաշտպանվեն R (2000) 7 հանձնարարականով և Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

11. Անդամ պետությունները պետք է «այնորեն տարածեն swայո հանձնարարականը և դրա հավելվածը՝ համապատասխանաբար ուղեկցված թարգմանությամբ», քանի որ հանձնարարականի տարածումը դրա պարզաճ կատարման նախապայման է:

III. Հանձնարարականի մեկնաբանություն

12. Նպտակ սկզբունքները բերվում են հանձնարարականի հավելվածում: Հավելվածը բուն հանձնարարականի անբաժանելի մասն է: Միայն պարզության համար է, որ զանգվածային լրատվության միջոցներով քրեական դատավարությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու առանձին սկզբունքները համախմբված են հավելվածում:

13. Հանձնարարականի նպատակների համար «քրեական դատավարություն» տերմինը պետք է հասկանալ, որպես դատական մարմինների կամ ոստիկանության, ինչպես նաև քննչական մարմինների կողմից՝ քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում իրականացվող ցանկացած գործողություն:

Սկզբունք 1.

(Նանրության իրազեկում լրատվամիջոցներով)

14. Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվում է իրեն հուզող հարցերով տեղեկատվություն ստանալու՝ հասարակության իրավունքը: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահ-

մանված՝ դատական քննության հրապարակայնության և դատական ուժումնակցության հրապարակային հայտարարման սկզբունքը արդարադատության ճիշտ իրականացման մասն է: Քանի որ գանգվածային լրավորության միջոցներն առանձնահատուկ դեր են խաղում հասարակությանը տեղեկատվություն մատուցելու հարցում, նրանք պետք է կարողանան փոխանակել տեղեկատվություն՝ դատական մարմինների և ոստիկանության գործունեության մասին: Իրեն հուզող հարցերի մասին տեղեկատվություն ստանալու հասարակության իրավունքն այս համատեքստում ունի հատուկ կարևորություն. այն ներառում է քրեական արդարադատության համակարգի գործունեության վերաբերյալ ազատորեն տեղեկատվություն հաղորդելու և մեկնաբանություններ կատարելու՝ գանգվածային լրավորության միջոցների իրավունքը: Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ գանգվածային լրավորության միջոցների օգնությամբ քաղաքական գործիչները և հասարակական կարծիքը կարող են վերահսկել և հավաստիանալ. արդյոք դատավորներն իրականացնում են իրենց ծանր պարտականությունները՝ իրենց առջև դրված խնդիրների հիմքը կազմող նպատակին համապատասխանող ձևով:

Սկզբունք 2. (Անմեղության կանխավարկած)

15. Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ երաշխավորվում է անմեղության կանխավարկածի իրավունքը: Այս իրավունքը նախ և առաջ դատավարական իրավունք է, որով դատական մարմինների համար սահմանվում է քրեական դատավարությունում ապացուցման պարտականությունը: Սակայն արդարադատության ճիշտ իրականացումը նաև պահանջում է, որ անմեղության կանխավարկածն աննուդղակիորեն չխախտվի՝ գանգվածային լրավորության միջոցներով փոխանակվող քրեական առաջիկա դատավարության վերաբերյալ կարծիքներով և տեղեկատվությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «ընթացող քրեական դատավարությունների վերաբերյալ հաղորդագրություններ պարբերաբար լրագրողները պետք է ընդհանուր ընդունելի ձևով երաշխավորեն, որ չեն սահմանազանցում արդարադատության պարզաճ իրականացման շահերից ելնելով սահմանված սահմանափակումները, և որ հարգում են անմեղ ենթադրվելու մեղադրյալի իրավունքը» (Du Roy vs Malauric ընդդեմ Ֆրանսիայի (2000), պարբերություն 34): Ասվածից երևում է, որ, դատարանի կարծիքով, քրեական դատավարությունների մասին հաղորդագրություններ կատարելու գանգվածային

լրավորության միջոցներին բացարձակ և ընդհանուր արգելումը կլիներ ոչ անհրաժեշտ և կխոչընդոտեր՝ հասարակայնությանը այն հարցերի մասին տեղեկացնելու մասնովի իրավունքին, որոնք, այդ թվում՝ վերաբերելով քրեական դատավարություններին, կարող են հետաքրքրություն ներկայացնել հասարակայնության համար (նույն տեղում, պարբերություններ 35 և 36):

Սկզբունք 3. (Տեղեկատվության հավաստիություն)

16. Տեղեկատվության հավաստիությունը կարևոր է ինչպես դատական մարմիններին և ոստիկանությանը, այնպես էլ՝ գանգվածային լրավորության միջոցներին վստահելու համար: Այդ պատճառով, 3-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ պետք է մատուցվի միայն ստույգ տեղեկատվություն՝ հիմնված փաստերի կամ ողջամիտ ենթադրությունների վրա: Եթե տեղեկատվությունը հիմնված է նման ենթադրությունների վրա, դա պետք է պարզորոշ մատնանշվի: Չնայած տեղեկատվության ճշտությունը կարող է վերջնականապես որոշվել միայն իրավական դատարանի կողմից, սակայն այս սկզբունքը կկանխի ոչ ստույգ տեղեկատվության գիտակցված կամ նույնիսկ դիտավորյալ մատուցումը, որը կարող է խախտել իրավակիրառող մարմինների և դատավարության հեղինակությունը, ինչպես նաև՝ սպառնալիքի տակ դնել քրեական դատավարության կողմերի իրավունքները:

Սկզբունք 4. (Տեղեկատվության մաքսելիություն)

17. Նամաձայն 4-րդ սկզբունքի հանձնարարվում է, որ լրագրողները չպետք է գրկվեն տեղեկատվության մաքսելիությունից՝ կամայական հիմքերով, ինչպես օրինակ, անձնական, քաղաքական կամ այլ պատճառներով, եթե այդպիսի տեղեկատվությունն արդեն իսկ օրինական հիմքերով ստացել են այլ լրագրողներ:

18. Ազգային իրավական համակարգերով կարող է նաև հատուկ նախատեսվել պաշտոնական փաստաթղթերի մաքսելիությունն այս համատեքստում՝ մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան:

Սկզբունք 5.

(Լրարվամիջոցներին տեղեկատվություն տրամադրելու նդանակները)

19. 5-րդ սկզբունքի համաձայն, դատական մարմինները և ոստիկանությունը պետք է տրամադրեն իրենց ունեցած տեղեկատվությունը գանգվածային լրարվության միջոցներին ավելի շուտ՝ կազմակերպված և լիազորված նդանակներով, քան դատական և ոստիկանության պաշտոնատար անձանց միջոցով՝ անձնական հիմքերով: «Լիազորված պաշտոնատար անձինք» տերմինը պետք է հասկանալ լայն իմաստով, որը նշանակում է, թե համապատասխան մարմինը այդ նպատակով պետք է նշանակի իր անձնակազմի որևէ անդամ: Այս սկզբունքի իմաստով, այլ «համանման լիազորված միջոց» կարող է ներառել, օրինակ, տեղում պաշտոնական գեկուցողի կողմից բանավոր տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև կոնկրետ քրեական դատավարության վերաբերյալ դատական քննությունից առաջ լրագրողներին տրված գրավոր տեղեկատվական նյութը:

20. Որոշ ազգային դատական մարմինների և ոստիկանությունների կողմից մշակվել են գանգվածային լրարվության միջոցների հետ շփումների իրենց ներքին ղեկավար սկզբունքները, ներառյալ՝ մամուլի համար պաշտոնական հաղորդագրությունների պատրաստման կանոնները: Նման ներքին ղեկավար սկզբունքները կարող են օգտակար լինել ներպետական մարմինների ընդհանուր բարձր չափորոշի ապահովման համար: Դա կմեծացնի տեղեկատվության հուսալիությունը և պետք է նպաստի գանգվածային լրարվության միջոցների հաղորդագրությունների որակին: Ազգային իրավունքին համապատասխան, ոստիկանությունները կարող են ունենալ դատական մարմիններից ավելի փոքր հայեցողություն՝ գանգվածային լրարվության միջոցներին իրենց աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում:

Սկզբունք 6.

(Քրեական դատավարության ընթացքում կանոնավոր տեղեկացումը)

21. Եթե լրագրողները և գանգվածային լրարվության միջոցները ներգրավված անձանց միջոցով տեղեկացված չեն հասարակության հատուկ ուշադրությունը գրաված քրեական դատավարությունների, հասարակությանը հուզող փաստերի կամ այլ հանգամանքների լրջության մասին, լրագրողները կարող են վարել իրենց սեփական լրագրողական հետաքննությունները: Դատական քննությանը զուգահեռ վարվող այդպի-

սի լրագրողական հետաքննությունները, որոշ հանգամանքներում կարող են պարունակել դատական քննության վրա բացասաբար անդրադառնալու ռիսկ, օրինակ, տեղեկատվության հրապարակային բացահայտմամբ, վկաներին պատկերելով կամ քրեական հանցագործների հետ շփումների մեջ մտնելով: Միևնույն ժամանակ, զուգահեռ լրագրողական հետաքննությունները կարող են ունենալ նաև դրական ազդեցություն, ինչպես, օրինակ վկաներին կամ կասկածյալներին բացահայտելը:

22. Որոշ անդամ պետությունների ներպետական օրենքներով սահմանված է քրեական գործերով նախնական քննությունների և ոստիկանական հարցումների գաղտնիությունը, որպես հիմնարար դատավարական սկզբունք: Ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Du Roy և Malauric-ի գործով վճռում՝ 2000 թ.-ի հոկտեմբերի 3-ին, այդուհանդերձ, քրեական գործերով նախնական քննության բացարձակ գաղտնիությունը չի համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի 10-րդ հոդվածին:

23. Այդ պարագայով, 6-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ նման հանգամանքներում դատական մարմինները և ոստիկանությունը քրեական գործերով նախնական քննության ընթացքում տեղեկացված պահեն գանգվածային լրարվության միջոցներին՝ այնքան ժամանակ, քանի դեռ դա չի վնասում քրեական գործերով նախնական քննության և ոստիկանական հարցումների գաղտնիությանը, չի ուշացնում կամ չի խոչընդոտում դատավարության ելքը: Եթե հաղորդելու ոչ մի նոր բան չկա, դա նույնպես պետք է մատնանշվի դատական մարմինների և ոստիկանության կողմից:

Սկզբունք 7.

(Տեղեկատվության շահագործման արգելք)

24. Ընթացքի մեջ գրվող քրեական դատավարությունների մասին տեղեկատվության առևտրային օգտագործումը դատական մարմինների և ոստիկանությունների կողմից կարող է խարխիլ դատավարության և ոստիկանության անկողմնակալությունը: Բացի այդ, դա կարող է զրկել լրագրողներին և գանգվածային լրարվության միջոցներին նման տեղեկատվության մատչելիությունից՝ դրա արժեքի պատճառով: Նմանապես, տեղեկատվությունը չպետք է օգտագործվի իրավունքի կիրառմանը վերաբերող նպատակներից փոքրերով այլ նպատակներով:

25. Այդուհանդերձ, այս սկզբունքը չի բացառում դատական մարմինների կամ ոստիկանությունների կողմից տեղեկատվության տրամադրման համար վճարների գանձումը՝ այդ տեղեկատվության պատրաստման և տարածման համար կատարված ծախսերը փոխհատուցելու համար:

**Սկզբունք 8.
(Մասնավոր կյանքի պաշտպանությունը ընթացքի մեջ
գտնվող քրեական գործերի համադրություն)**

26. Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընդհանրական կյանքի պաշտպանության իրավունք: 8-րդ սկզբունքը վկայակոչում է այդ պաշտպանությունը կասկածյալների, մեղադրյալների, դատապարտյալների և քրեական դատավարության այլ կողմերի առնչությամբ, որոնք չպետք է զրկվեն այդ իրավունքից՝ նման դատավարություններին ներգրավված լինելու պատճառով: Մեղադրյալի կամ դատապարտյալի անվան պարզ հիշատակումը երբեմն կարող է ավելի դաժան պատիժ լինել, քան դատարանի կողմից նշանակված քրեական պատիժը: Բացի այդ, դա կարող է խոչընդոտել համապատասխան անձի՝ հասարակությանը վերհանգրվելուն: Նույնը վերաբերում է մեղադրյալին կամ դատապարտյալին պարկերելուն: Այդ պատճառով, պետք է հարույժ ուշադրություն դարձվի այն ցավոք ներգործությանը, որն այս սկզբունքում հիշատակվող անձանց վրա կարող է թողնել իրենց անհատականացնելու հնարավորություն ընձեռող տեղեկատվության բացահայտումը:

27. Նույնիսկ ավելի ուժեղ պաշտպանություն է հանձնարարված անչափահաս կողմերի, քրեական հանցագործություններից բուժամ անձանց, վկաների և կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտյալների ընդհանրության համար: Այս կասկակցությամբ, անդամ պետությունները կարող են անդրադառնալ նաև Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում բուժողի դրության մասին R (85) 11 հանձնարարականին և Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի մասին R (97) 13 հանձնարարականին:

**Սկզբունք 9.
(Ուղղում պահանջելու կամ պարասխանելու իրավունք)**

28. Անդամ պետություններին հանձնարարված է իրենց ներպետական իրավունքում և պրակտիկայում ճանաչել Պարասխանի իրավունքի մասին (74) 26 որոշմամբ ամրագրված՝ ուղղման կամ պարասխանի իրավունքը կամ մամուլի գործերով խորհրդին բողոք բերելու հնարավորությունը: 9-րդ սկզբունքում վկայակոչվում է այդ իրավունքը քրեական դատավարությունների կասկակցությամբ, եթե, օրինակ, սխալ տեղեկատվությունը կարող է խախտել անմեղության կանխավարկածը: Բացի այդ, 9-րդ սկզբունքով հանձնարարվում է կիրառել այդպիսի իրավունք դա-

տական մարմինների կամ ոստիկանության կողմից մամուլի համար սխալ հաղորդագրությունների դեմ, որոնք այլ կերպ չեն որակվի, քան (74) 26 որոշմանը ենթադաս: Մակայն դատական մարմինները և ոստիկանությունը պետք է նկատի ունենան, որ վնասակար ազդեցության վրանգը կարող է ավելի մեծ լինել, եթե նրանք չբացահայտեն տեղեկատվությունը գանգվածային լրատվության միջոցներով:

**Սկզբունք 10.
(Դատաբանության ընթացքի վրա վնասակար ազդեցության
կանխումբ)**

29. Քրեական դատավարությունների առարկա հանդիսացող նյութերի մասին կարծիքները և տեղեկատվությունը, գանգվածային լրատվության միջոցներով հրատարակվածներն արարածվելիս, կարող են վնասակար ազդեցության ունենալ անմեղության կանխավարկածի վրա, ինչպես նշված է 2-րդ սկզբունքում: Այդ վրանգը հարկապես մեծ է, երբ քրեական դատավարություններին ներգրավված են երդվյալ արենակալները կամ ոչ մասնագետ դատավորները: Այդ պատճառով, 10-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ դատական մարմինները և ոստիկանությունը ձեռնպահ մնան այնպիսի տեղեկատվությունը հրատարակվածներն արամադրելուց, որն իր մեջ պարունակում է դատավարության արդարության վրա էական վնասակար ազդեցություն ունենալու վրանգը: Այդ համարաբար «դատական մարմիններ» տերմինը պետք է ներառի նաև մեղադրողներին և նախնական քննությանը մասնակցություն ունեցող դատավորներին: Վնասակար ազդեցության վրանգի գնահատումը պետք է իրականացվի միանգամայն հիմքով՝ յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով:

**Սկզբունք 11.
(Մինչդատավարական փուլի վերաբերյալ տեղեկատվություն)**

30. Բացառիկ և հազվադեպ դեպքերում գանգվածային լրատվության միջոցների հաղորդումները կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ քրեական դատավարության վրա, մասնավորապես, երդվյալ արենակալների, ոչ մասնագետ դատավորների և վկաների վրա: Այս հանձնարարականի նպատակը չէ նման հագամանքներում մեղադրյալի համար իրավական միջոցների ներդաշնակեցումը: Այդուհանդերձ, MM-S-FR-ը գագել է, որ գանգվածային լրատվության միջոցներով քրեական դատավարությունների վերաբերյալ տեղեկատվության մատուցման

սկզբունքները բովանդակող հանձնարարականը պետք է նաև բովանդակի սկզբունք, որը կհանձնարարի անդամ պետություններին՝ ունենալ արդյունավետ իրավական միջոց՝ այն դեպքի համար, երբ տեղեկատվության մատուցումը կարող է հանգեցնել կամ հանգեցրել է արդար դատարարության իրավունքի խախտմանը:

**Սկզբունք 12.
(Լրագրողների ներկայությունը դատաքննությանը)**

31. Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորվում է դատարարության հրապարակայնության և դատական ակտի հրապարակման հիմնարար իրավունքը: Այդպիսի հրապարակայնությունը ապահովվում է հասարակությանը թույլատրելով ներկա լինել դատական քննությանը և դատավճռի հրապարակմանը՝ այնքանով, որքանով հասարակության ներկայացուցիչները հետաքրքրված են ներկա լինելու մեջ և կախված՝ դատական նիստերի դահլիճի հնարավորությունից: Եթե դատական նիստերի դահլիճում նստաբեկները չեն բավարարում հետաքրքրված բոլոր անձանց տեղավորելու համար, դատական մարմինները կարող են նաև որոշում ընդունել՝ դատական այլ դահլիճում տեսաձայնային հաղորդման մասին՝ այդպիսի հնարավորությունների առկայության դեպքում:

32. Զանգվածային լրագրության միջոցների՝ հրապարակային դատաքննությանը և դատական ակտերի հրապարակմանը ներկա լինելը թույլատրելու միջոցով կարող է ապահովվել շատ ավելի լայն հրապարակայնություն: Որոշակի հանգամանքներում, սակայն, արդարադատության ճիշտ իրականացումը կարող է պահանջել հանրության ներկայության արգելում՝ դատական քննության բոլոր կամ առանձին փուլերից՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին համապատասխան:

33. 12-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ լրագրողներին թույլատրվի ներկա լինել հրապարակային դատաքննությանը և դատական ակտերի հրապարակմանը՝ առանց խորհրդարանության և առանց նախնական ձեռնարկի և նախապես որոշված հավաքարձագրման պահանջների: Ցանկացած խորհրդարանություն կհակասի ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված՝ զանգվածային լրագրության միջոցների ազատությանը և կարող է հանգեցնել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով պահանջվող հրապարակայնության պակասին: Որպես ընդհանուր սկզբունք, դատական քննությանը զանգվածային լրագրության միջոցների ներկայությունը չպետք է արգելվի, քանի դեռ և այնքանով, որքանով որ հասարակայնության ներկայությունը արգելված չէ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին համապատասխան:

**Սկզբունք 13.
(Դատական նիստերի դահլիճների մատչելիությունը լրագրողների համար)**

34. Քանի որ զանգվածային լրագրության միջոցներն իրենց հաղորդումներով ապահովում են դատական քննության ավելի լայն մատչելիությունը հասարակայնության համար, դատական նիստերի դահլիճները պետք է պարունակեն բավարար թվով նստաբեկներ՝ լրագրողների համար: Կախված տվյալ դատական քննության նկատմամբ հասարակության հետաքրքրությունից՝ դատական նիստերի ավելի մեծ դահլիճներ՝ ավելի շատ թվով նստաբեկներով պետք է ապահովեն ավելի շատ անձանց տեղավորելու հնարավորություն: Վերջինս, բնականաբար, կախված է հանգամանքներից և դատական նիստերի դահլիճների հնարավորություններից: Զանգվածային լրագրության միջոցների ներկայությունը, սակայն չպետք է բացառի հասարակության անհար ներկայացուցիչների մասնակցության հնարավորությունը:

**Սկզբունք 14 .
(Դատական նիստերի նկարահանում և ուղիղ հեռարձակում դատական նիստերի դահլիճից)**

35. Դատական քննությանը ներկա անձանց ձայնի և պատկերի ուղիղ եթերով հաղորդումը զանգվածային լրագրության միջոցներով կարող է ոչ պարզաճ ազդեցություն ունենալ այդ անձանց վրա: Վկաներին կարող է ահաբեկել կամ գրավել տեսախցիկների և զանգվածային լրագրության միջոցների ներկայացուցիչների ներկայությունը, ինչը կարող է ազդել նրանց կողմից փաստերի ճիշտ հաղորդմանը: Տուժողները նույնպես կարող են իրենց ահաբեկված զգալ դրանից: Քրեական իրավունքի և դատարարության շրջանակներում տուժողի դրության մասին R (85) 11 հանձնարարականը, ինչպես նաև Վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքի մասին R (97) 13 հանձնարարականը անդրադառնում են այդ երևույթին: Օրինակ, նկարահանումը կարող է կատարվել նախքան դատական քննության սկիզբը: Ավանդից երևում է, որ անդամ պետությունները կարող են սահմանել ցանկացած իրավական ապահովում, որը նրանք օգտակար են գտնում՝ անձանց որոշակի կարեգործիաների պաշտպանության համար, ինչպիսիք են անչափահաս կամ ձեռնաշղթայված մեղադրյալները:

36. 14-րդ սկզբունքով անդամ պետությունների ուշադրությունը հրավիրվում է այդպիսի հնարավոր ազդեցությանը և հանձնարարվում, որ դատական նիստերի դահլիճներից զանգվածային լրագրության միջոց-

ների ուղիղ եթերով հաղորդումները կամ տեսաձայնագրությունները հնարավոր լինեն միայն այն դեպքերում, երբ դրանք հստակորեն թույլատրված են օրենքով կամ իրավասու դատական մարմինների կողմից: Նման բացառիկ եւ հստակ թույլտվությունները կապահովեն կանխարեսելի եւ ոչ խտրական իրավական շրջանակներ: Օրինակ, կարող է որոշվել, որ պատմական կարևորության դատավարությունները կարող են ձայնագրվել կամ տեսանկարահանվել եւ հնարավոր է՝ փարածվել ավելի ուշ փուլերում: Նույնը կարող է կիրառվել ավելի բարձր ապրանքի դատարանում քրեական դատավարությունների նկատմամբ, հատկապես, երբ նման դատավարություններն իրենցից ներկայացնում են օրենքի պարզ վերանայմանը կամ ըստ էության հիմնված են կողմերի՝ գրավոր ներկայացվող փաստաթղթերի վրա:

**Սկզբունք 15.
(Լրավարմիջոցների կողմից տեղեկատվություն
տրամադրելուն աջակցելը)**

37. Դատական մարմինները պետք է աջակցեն քրեական դատավարությունների մասին հաղորդումներին՝ պարզ պահանջով եւ երբ դա գործնականորեն իրագործելի է՝ ապահովելով նշանակված նիստերի մասին հայտարարությունները, երդվյալ արենակալներին ուղղված դատավորների եզրափակիչ ճառերը եւ այլ առնչվող տեղեկատվությունը ստանալու հնարավորությունը: Այդպիսի տեղեկատվություն ունենալու դեպքում, զանգվածային լրատվության միջոցներն ավելի քիչ հավանականությամբ կպարբաստեն ոչ ստույգ հաղորդումներ, որոնք կարող են ոչ պարզաձև ազդեցություն ունենալ ոչ մասնագետ երդվյալ արենակալների եւ դատավորների վրա կամ խախտել անմեղության կանխավարկածը: Այդ պարճառով, 15-րդ սկզբունքով հանձնարարվում է ապահովել այդպիսի աջակցություն, պարզաձև ձևով եւ ժամանակին եւ երբ դա գործնականորեն իրագործելի է: Այդպիսի աջակցությունը չպետք է լինի հավատարմագրման ենթակա: Դատավարությունների ընթացքում դատարանի ներկայացուցիչը պետք է, որքան հնարավոր է հասանելի լինի զանգվածային լրատվության միջոցների համար՝ պարզաբանումների մասին նրանց հարցումներին պատասխանելու նպատակով: Վերջապես, լրագրողները պետք է կարողանան փարածել կամ հանրությանը հաղորդել դատական որոշումները՝ չխախտելով Մարդու իրավունքների մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված՝ գաղտնիության պաշտպանությունը:

**Սկզբունք 16.
(Վկաների պաշտպանություն)**

38. Ինչպես վերը նշվել է, վկաների մասին զանգվածային լրատվության միջոցների հաղորդումները կարող են ահաբեկող ազդեցություն ունենալ նրանց վրա, հատկապես, երբ բացահայտվում է վկայի ինքնությունը: Դա նույնիսկ կարող է հակասել Վկաների ահաբեկման եւ պաշտպանության իրավունքի մասին R (97) 13 հանձնարարականին: Այդ պարճառով, 16-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ վկաների ինքնությունը չպետք է բացահայտվի իշխանությունների կողմից զանգվածային լրատվության միջոցներին կամ հենց իրենց՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից, եթե վկան չի փվել իր նախնական համաձայնությունը, վկայի ինքնությունը հանրության հետքորթության առարկա չի հանդիսանում կամ վկայի ցուցմունքներն արդեն իսկ չեն փրվել հրապարակայնորեն:

**Սկզբունք 17.
(Դատական որոշումների կատարման վերաբերյալ
լրատվություն ՉԼՄ-ներում)**

39. Արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության հսկողությունը զգալի չափով իրականացվում է զանգվածային լրատվության միջոցներով: Դատավճիռների կատարումը կազմում է այդ արդարադատության իրականացման մի մասը: Այդ պարճառով, զանգվածային լրատվության միջոցների ազատությունը պետք է ներառի դատավճռով նշանակված պարիժը կրող անձանց հետ շփվելու լրագրողների հնարավորությունը, այնքանով, որքանով դա չի վնասում արդարադատության ճիշտ իրականացմանը, չի խախտում ազատագրկվածների եւ ազատագրկման վայրերի պաշտոնատար անձանց իրավունքները կամ ազատագրկման վայրի անվտանգությունը:

**Սկզբունք 18.
(Ազատագրկման ժամկետի ավարտից հետո ՉԼՄ-ների
կողմից լուսարանում)**

40. Արդարադատության իրականացման մասն է կազմում դատարանի դատավճռով նշանակված պարիժը կրած անձանց՝ հասարակությանը վերահսկողությունը հնարավորությունը: Դատավճիռները կատարվելուց հետո զանգվածային լրատվության միջոցների հաղորդումները գործերի եւ ազատագրկվածների մասին կարող են վնասել այդպիսի վերահսկողությանը: Այդ պարճառով, 18-րդ սկզբունքով հանձնարարվում է, որ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված՝ գաղտնիության պաշտպանության իրավունքը

պետք է ներառի այդ անձանց ինքնությունը և նրանց կողմից նախկինում կատարված հանցագործությունները, քանի դեռ նրանք և նրանց կողմից նախկինում կատարված հանցագործությունները չեն հանդիսանում կամ չեն դարձել հանրության ուշադրության առարկա: Այդպիսով, հանցագործության կատարման սովորական փարեդարձը բավարար չէր լինի դրա համար: Այդուհանդերձ, անձինք և նրանց կողմից կատարված հանցագործությունները կարող են լինել հանրության հետաքրքրության առարկա, օրինակ, եթե նրանք կրկին են խախտում քրեական իրավունքը կամ, եթե նրանց նախկինում գործած հանցանքը եղել է վաղեմության ժամկետ չունեցող հանցագործություն, ինչպես, օրինակ, մարդկության դեմ հանցագործություն կամ ցեղասպանություն: Վերջին հանցագործությունները, օրինակ, նախատեսված են Մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմի հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառման մասին 1974 թ.-ի եվրոպական կոնվենցիայով սահմանվածները:

° í ñáá ³ Ը Ե áñÁáõñ
Ü³ Ե ³ ñ ñ»ñÇ İ áÜÇi »

Đéã³ İ ³ . Çñ

Լրարվամիջոցներով քրեական դատավարությունների մասին րե դեկարվություն հաղորդելու վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից, փոխնախարարների 848-րդ նիստում, 2003թ հունիսի 10-ին)

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն,

հիշելով, որ անդամ երկները հավաքարիմ են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 10 հոդվածում ամրագրված արտահայտվելու և րեդեկարվության ազատության իրավունքին,

կրկին անգամ շեշտելով, որ արտահայտվելու և րեդեկարվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության կարևորագույն հիմնաքարերից և դրա առաջընթացի ու յուրաքանչյուր անհարի զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է՝ ինչպես ասված է Արտահայտվելու և րեդեկարվության վերաբերյալ իր 1982 թվականի հայտարարագրում,

հաշվի առնելով անմեղության կանխավարկածի հիմնարար իրավունքին, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատավարության իրավունքին և Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված ընտանիքի ու մասնավոր կյանքի հարգանքի իրավունքին հավաքարմությունը,

այսուհետև, հաշվի առնելով Կոնվենցիայի 11 հոդվածով նախատեսված միավորումներ կազմելու իրավունքի համաձայն լրագրողների և լրարվամիջոցների մասնագիտական միավորումներ կազմավորելու իրավունքը, որը լրարվամիջոցների ինքնակարգավորման հիմքն է,

հաշվի առնելով Կոնվենցիայի 6, 8 և 10 հոդվածներով պաշտպանվող իրավունքների հնարավոր բախումը և յուրաքանչյուր անհարական գործի փաստերից ելնելով այդ իրավունքների միջև հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությունը, և զնահարելով Կոնվենցիայով նախատեսված պարարավորությունների կատարման հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկող դերը,

հաշվի առնելով, թե ինչ նշանակություն կարող է ունենալ լրացված միջոցների ինքնակարգավորումն ու համարեղ կարգավորումը այդպիսի հավասարակշռություն հաստատելու հարցում,

տեղյակ լինելով ինքնակարգավորման միջոցով կամ կարգավորման ուղղությամբ պետության հետ համագործակցելով լրացրությունը Եվրոպայում զարգացնելու լրացրողների և լրացված միջոցների բազմաթիվ նախաձեռնություններին,

գիտակցելով քրեական գործերի վերաբերյալ լրացված միջոցներով տեղեկավորություն հաղորդելու համարեքստում խնդրո առարկա իրավունքների վերաբերյալ քաջատեղյակ երկխոսություն ծավալելու անհրաժեշտությունը,

ցանկանալով ուժեղացնել հիշատակվող համարեքստում պարասխանավորության զգացումով լրացրողական գործունեություն ծավալելը՝ հիմնականում խթանելով լրացված միջոցների պարզաճ գործունեությունը վարքագծի կանոնների համաձայն կամ այլ նախաձեռնությունների միջոցով,

մտախոցված լինելով քրեական դատավարության վերաբերյալ տեղեկավորությունը կոմերցիոն նպատակներով օգտագործելու դեպքերից,

ցանկանալով, միևնույն ժամանակ, ամրապնդել քրեական դատավարության առնչությամբ արտահայտվելու և տեղեկավորության ազատության իրավունքի զարգացումը, մասնավորապես ապահովելով այս կարգի դատավարությունների մատչելիությունը լրացված միջոցների համար,

հիշելով իր (74)26 Բանաձևը պարասխանի իրավունքի վերաբերյալ, «Քրեական իրավունքի և վարույթի շրջանակներում քրեական կարգավիճակի վերաբերյալ» R(85)11 հանձնարարականը, «Վկաներին սպառնալու և նրանց պաշտպանության իրավունքի վերաբերյալ» R (97)13 հանձնարարականը, «Լրացված միջոցների և հանդուրժողականության կուլտուրայի զարգացման վերաբերյալ» R(97)21 հանձնարարականը, ինչպես նաև «Տեղեկավորության աղբյուրները չբացահայտելու լրացրողների իրավունքի վերաբերյալ» R (2000)7 հանձնարարականը,

նկատի ունենալով լրացրողական ազատության և մարդու իրավունքների առնչությամբ 2 բանաձևը, որն ընդունվել է ՋԼՄ-ների ռազմավարության վերաբերյալ 4-րդ Եվրոպական նախարարական համաժողովում (Պրագա, դեկտեմբեր 1994) , ինչպես նաև լրացված միջոցների վաղվա օրվա ռազմավարության վերաբերյալ հայտարարագիրը, որն ընդունվել է լրացված միջոցների ռազմավարությանը նվիրված Եվրոպական նախարարների 6-րդ համաժողովում (Կրակով, հունիս 2000),

տեղյակ լինելով 1998թ հոկտեմբերի 7-ին և 8-ին Ստրասբուրգում ՋԼՄ-ների կանոնակարգի մշակման հանձնաժողովի կողմից, ինչպես

նաև Եվրոպական հանձնաժողովի և Գերմանիայի կողմից 1999թ-ի ապրիլի 19-ից 21-ին Մաարբրուկենում անցկացված լրացված միջոցների ինքնակարգավորման վերաբերյալ գիտաժողովների մասին,

եղյակ լինելով լրացված միջոցների հարցերով մասնագետների հետ հանրային խորհրդակցության մասին, որն անցկացվել է ՋԼՄ-ների կանոնակարգի մշակման հանձնաժողովի կողմից 2002թ-ի հունվարին,

Կոչ է անում անդամ երկրներին.

1. խրախուսել քրեական դատավարությունների վերաբերյալ պարզաճ տեղեկավորությունը՝ ուսուցանելով լրացրողներին օրենքի և դատական ընթացակարգի առումով, համագործակցելով լրացված միջոցների և նրանց մասնագիտական կազմակերպությունների, կրթօջախների և դատարանների հետ, քանզի դա անհրաժեշտ է հասկանալու համար դատավարական գործընթացները, դատական գործով կողմերի և պետության շահերն ու իրավունքները, որոնք շոշափվում են այդ դատավարությունների ընթացքում,

2. աջակցել ինքնակարգավորմանը ուղղված ցանկացած նախաձեռնության, որով լրացված միջոցները սահմանում են մասնագիտական վարքագծի չափանիշներ, որոնք առնչվում են քրեական դատավարությունների լուսարանմանը, որպեսզի ապահովվի նախարարների կոմիտեի՝ «Լրացված միջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկավորություն հաղորդելու վերաբերյալ» (2003) 13 հանձնարարականում նշված սկզբունքների նկատմամբ հարգանքը,

3. համագործակցության եզրեր որոնել լրացված միջոցների ոլորտում գործող ինքնակարգավորման մարմինների հետ,

4. լրացված միջոցների ոլորտում գործող մասնագիտական կազմակերպություններին ընդգրկել քրեական դատավարության լուսարանման վերաբերյալ համապարասխան օրինաստեղծ գործընթացների մեջ, օրինակ բնարկումների կամ խորհրդակցությունների միջոցով,

5. այս Նշակագիրը մատչելի դարձնել պետական պաշտոնյաների ու դատարանների, ինչպես նաև լրացրողների և նրանց մասնագիտական կազմակերպությունների համար:

Նրավիրում է լրացված միջոցներին և լրացրողներին.

1. կազմավորվել որպես կամավոր մասնագիտական կազմակերպություններ և ամբողջ Եվրոպայում զարգացնել նմանատիպ կազմակերպությունների միջև համագործակցությունը,

2. պատրաստել լրագրողների համար մասնագիտական վարքագծի ուղեցույցներ և չափանիշներ, հատկապես քրեական դատավարության լուսաբանման առնչությամբ՝ այնպես, որպեսզի այդպիսիք դեռևս չկան, և արմատավորել այդ ուղեցույցներին և չափանիշներին հերևելու պրակտիկան,

3. իրենց լուսաբանումներում թե կասկածյալներին և թե մեղադրյալներին ներկայացնել որպես անմեղ, քանի դեռ վերջիններիս մեղքը չի ապացուցվել դատարանի կողմից՝ հաշվի առնելով որ նշված անձանց այդ իրավունքը վերապահված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով,

4. հարգել քրեական, հայցվորների, կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների, ինչպես նաև նրանց ընտանիքների արժանապատվությունը, անվտանգությունը և եթե տեղեկատվությունը հանրային հետաքրքրություն չի ներկայացնում, ապա նաև՝ Կոնվենցիայով վերապահված մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի նրանց իրավունքը,

5. չհիշատակել անձի նախկին դատավաճությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փաստը հանրային հետաքրքրության առարկա է կամ կրկին հայտնվել է հանրության ուշադրության կենտրոնում,

6. նրբանկարություն դրսևորել քրեական դատավարության մեջ ընդգրկված անչափահասների և այլ խոցելի անձանց շահերի նկատմամբ,

7. խուսափել քրեական հետաքննությանն ու դատավարությանը վնասելուց,

8. քրեական դատավարության իրենց լուսաբանումներում խուսափել վնասակար և նվաստացուցիչ անվանարկումներից, երբ դրանք կարող են հարուցել այլազգիների նկատմամբ արելություն, խտրականություն կամ բռնություն,

9. քրեական դատավարությունների լուսաբանումը վստահել այնպիսի լրագրողների, որոնք բավարար պատրաստվածություն ունեն այսպիսի հարցերում:

ԿՔ ՍՊԻ ԶԻ ԶԱՄԻՐՈՒՆԻ ԶՈՒՆԻ ԶՈՒՆԻ
ՍՔՊԶԻ ԶԵՐՈՒՆԻ ԶՈՒՆԻ ԶՈՒՆԻ ԶՈՒՆԻ

Mass Media in the Docummts of CE

© ԹՔ, 2003Ա.